43

ՍՈՒՐԲ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ

ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ՎԱՆՔԻՑ ՄԱՍԻՆ

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ԳՐԵՑ ՄԻԱՐԱՆ Ս. ԵՐՈՒՍԱՂԷՄԻ

ՄԱՄՈՒԼ Վ. ՄԱՐԿԱՍԵԱՆԻՆ,

Սուրբ Երուսաղէմի պատրիարքաց քարոզման համար
Նուիրակութեան ղեկավարի.

Հարցեք զանգնեն երուսաղեմի և.
զբնակիչսն, զոր սիրեք զնա։
Սաղմ. ճԻԱ, 6.

ԹՐԱՍՏՈՎ (Դոնի վերայ)
ՏՊԱՐԱՆ ՅՈՎՀ. ՏԷՐ-ԱՐՐԱՀԱՄԵԱՆ
1883

281.6(09)
Մ-37

ՍՏՈՒԳՎԱԾ է 1981 թ.

ՍՈՒՐԲ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ

ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ՎԱՆՈՒՑ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ԳՐԵՑ ՄԻԱՐԱՆ Ս. ԵՐՈՒՍԱՂԷՄԻ

ՄԱՄՈՒԷԼ Վ. ՄԱՐԿՈՍԵԱՆ,

Սուրբ Երուսաղէմի պատրիարքարանի համար
Նուէրաւորեան դիւրութեան.

2998

Հարցէք գողգոթան Երուսաղէմի եւ գշինութիւնէն, որ սիրէք զնա։
Սաղմ. ճԻԱ, 6.



ՌՈՍՏՈՎ (Դոնի վերայ)
ՏՊԱՐԱՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՏԷՐ-ԱՐՐԱՀԱՄԵԱՆ
1883

Վասն Սիոնի ոչ լռեցից եւ վասն Երուսաղէմի ոչ դադարեցից, մինչեւ ծագեսցի իբրեւ զլոյս արդարութիւն նորա եւ փրկութիւն նորա իբրեւ զփայլակն վառեսցի։

Եսայի ԿԲ, 1։

A II 5746

Дозволено цензурою. С.-Петербургъ, 31 Мая 1883 года.

Ը.ՕԴ.

Տուրբ Երուսաղէմի պարտուց բարձ-
ման համար՝ Միաբանութեան,
Ազգային Վարչութեան, Յանձնա-
ժողովոյ և Վեհափառ Հայրապետի տնօ-
րէնութեամբ և Ռուսիոյ Արեւելեան
Կայսեր Արձրագոյն հրամանաւ և
թոյլտուութեամբ մեզ յանձնուած Սը-
ւիրակութեան պաշտօնն սկսած օրէս
ի վեր՝ տեսնելով որ հասարակութեան
մէջ Ս. Երուսաղէմի և այս պարտուց
մասին տարածուած են շատ տեսակ սուտ
և սխալ կարծիքներ ու կասկածներ,
տեսնելով որ Ս. Երուսաղէմի անունն
ու նշանակութիւնը շատերը մոռցեր և
մոռնալու վերայ են. տեսնելով որ մեր
կենդանի խօսքերն անզօր են ամենուն
հասնելու, քանի որ անկարելի է ամե-
նուն հետ տեսնուիլ, քանի որ եկեղե-
ցիք դատարկ կը գտնուին, և մի այլ
տեղ ժողովրդեան բազմութեան հետ

տեսնուիլ անկարելի կը լինի, որպէս զի գործոյն ստիպողական կարևորութիւնը ծանօթացնեմք և հարկ եղած բացատրութիւնները տամք. ուստի յանձն առինք ներկայ աշխատութիւնն հրատարակել ի գիտութիւն հասարակութեան:

Հրատարակելով զայս, մեծ յոյս ունիմք, որ կը վերնան ամեն կասկած և կարծիք (եթէ փախուստի պատրուակներ չեն անոնք), և Ազգը հասու լինելով ճշմարտութեան՝ սիրով կը բարեհաճի ըստ արժանոյն օգնելով՝ կատարել իւր հոգևոր և ազգասիրական պարտաւորութիւնը, որով և շուտով կազատէ Ս. Երուսաղէմը այս օրուան վտանգ սպառնացող վիճակէն:

Հայրական սիրով կաղաչեմ, որ մտադրութեամբ և ողջմտութեամբ կարդացուին մեր խօսքերը՝ ներելով այն թերութեանց, որք գրաղեալ դրութենէս և վշտակիր սրտիս յուզեալ վիճակէն կրնան պատահիլ խօսքերուս մէջ:

Ա.

Ս. ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՍՐԲՈՑ ՅԱԿՈՎԲԵԱՆՑ ԱԶԳԱՅԻՆ ՎԱՆՔԸ ԵՒ ՆՈՐԱ ՆԵՐԿԱՅ ՎԻՃԱԿԸ.

Հարցէք զողջունէն Երուսաղէմ եւ զնչութիւնէն, զոր սիրէք զնա։
Ս-ՂՄ- ՃԻԸ, 6.

Ժողովուրդ Հայոց.

Եթէ հարստութիւն, փառք և իշխանութիւն ձեռք ձգելը դժուարին է, աւելի դժուարին է զայն հաստատ ու յարատև պահելը. մանաւանդ երբ այն ամբողջ Ազգին պատկանի. որ և նախանձորդ թշնամիներ ունենայ. և երբ ատանկ թշնամիք Ազգին մէջ ալ գտնուին։

Մեր Ազգն ունեցած է իւր հարստութիւնը, փառքը, իշխանութիւնը, կրօնական և ազգային անկախութիւնը. սակայն թէ արտաքին յայտնի ու գաղտնի թշնամիներու ձեռօք, և թէ աւելի ներքին խռովայոյզ հակառակողներու նենգութեամբ չէ կարողացած հաստատ ու յարատև պահել, զորս այժմ կորուսեալ դառնապէս։

Մեծամեծ բարիքները վայելած ատեն յարգն ու մեծութիւնը չէ գիտցած. պահելու համար մի քիչ

ոյժ, աշխատութիւն, խելք ու խոհեմութիւն և մի քիչ ալ փող խնայած է. կրից, կամապաշտութեան, մասնաւոր նկատումներու, հանգստութեան և ազատութեան համար զոհած է Ազգին փառքն ու պատիւը, իշխանութիւնն ու հարստութիւնը. և այսօր աւերակաց վերայ սրտառուչ ողբեր կը յօրինէ, պատճառ եղողները կանիծէ. արտասուք կը թափէ. սին յոյսերով, սխալ և անխորհուրդ ճանապարհաւ, անօգուտ՝ մանաւանդ վնասակար ծախսերու մեխողութեամբ աւերակներ վերականգնել կաշխատի։ Անցեալէն դեռ չէ խրատուած, որ տեսնէ թէ շուրջը կործանման վտանգի մէջ գտնուող ազգային հաստատութիւնք կան. չաշխատիր որ նախ զանոնք վտանգէ ազատէ, ապահովէ, ոյժ տայ, և ապա, եթէ հարկ լինի, աւերակներ կանգնելու ձեռնարկէ՝ խոհեմ և ուղիղ ճանապարհաւ. որպէս զի յետոյ երկուքն ի միասին ողբալու դժբաղդութիւնը չունենայ։

Եթէ մէկը ներկայն պահել չը կամի, ի՞նչ երաշխաւորութիւն ունի ապագայն պահելու. ներկայն ապագային երաշխաւորութիւնն է. պահենք արդէն ունեցածնիս, որ ունենալիքնիս ալ պահպանուի. խրատուինք անցեալէն և աւելի խոհեմ լինինք։

Ազգը կորսընցուց ամեն բան. միայն յանուն

կրօնի պահպանեց Ազգութիւնը։ Պահպանելով Եկեղեցւոյ անկախութիւնը՝ ազատեց Ազգութիւնը կորուստ սպառնացող թշնամութեանց ահագին հեղեղէն և հասուց մինչև մեր օրերը։

Ազգին նախնի փառաց հաւատարիմ աւանդապահն եղաւ Ազգային Եկեղեցին, — Կրօնը, որոյ ոյժն ու նեցուկն եղած են երկու նուիրական հաստատութիւնք. Ս. Էջմիածնի և Ս. Երուսաղէմի Առաքելական Աթոռները, յորս կեդրոնացած է կրօնի ազգային դրութեան անկախութեանը հետ նաև Ազգայնութիւնը. Ազգին բազմադարեան հնութիւնը. նախկնութիւնը, փառքն ու ճոխութիւնը, պատիւն ու պարծանքը։

Այ ազգին պարծանք այս երկու Ս. Աթոռներն ալ ներքին ու արտաքին թշնամեաց մեծամեծ հարուածներուն դիմացեր են. շատ տառապանքներ կրեր են, կեանքի և ինչքի շատ զոհողութիւն արեր են, ամեն տեսակ հարուածոց պատահեր են և դեռ կը պատահին։ Այդպա հաւատարիմ աւանդապահները Ազգին հետ մէկտեղ փոխադարձ պտրտաւորութեամբ կապուած, կուրծքերնին ու կեանքնին դէմ դրած՝ համակրանօք, սիրով և գգուանօք անաղարտ պահած՝ այսչափ երկայն դարերու պատկառելի շրջաններէ անցընելով ներկայ Այուն ողջ յանձնած են։

Ս. Երուսաղէմի և Ս. Էջմիածնի երկու Աթոռներն են հնութենէ մնացած կենդանի նշաններ, նախնի փառաւոր պարծանաց ողջ յիշատակարաններ։ Այս երկու հաստատութիւնք են, որք կարող են հեռաւոր անցեալներ մատնանիշ անել։ Ազգին այս երկու լուսալիր աչքերն են, որք կարեկցաբար հսկած են մինչև ցարդ Ազգին վրայ և կը հսկեն միշտ, որոց մին—Ս. Էջմիածին, 1579 տարի յառաջ լոյս տեսաւ. իսկ միւսը—Ս. Երուսաղէմ 1800 տարի յառաջ, որք և ներկայ ու ապագայ Հայութեան նեցուկներն ու յենարաններն են. և սակայն այսօր Ս. Երուսաղէմի վանքը վտանգաւոր վիճակի մէջ է։ Ամօթ չէ՞ մեզ, որ այս թիւերուն առջև պատկառանք չզգանք, հազար ամօթ ու նախատինք չէ՞ հայ անուան, որ այս ընդհանրական, ազգային, հին ու կարևոր հաստատութեանց յարատևութեան համար մի զոհողութիւն չանէ, կամ ձեռքը կծկելով ժլատութեամբ վերաբերի, մանաւանդ այն նեղ և վտանգաւոր պարագային մէջ, յորում կը գտնուի այսօր Ս. Երուսաղէմի Աթոռը։

Ի սկզբանէ անտի Հայ անունը մէջ տեղէն վերցնելու համար ջանացող շատ թշնամիներ ունեցանք. հեռաւոր ու մերձաւոր գրեթէ ամեն ազգ, հուր, սուր, աւերմունք, գերութիւն և տանջանք չմնաց, որ չբերեն մեր ազգին գլխուն. բայց վերջապէս

խոստովանեցան, որ էրէնց սո-րէրը էլնոցան և դէր դարանոցնէրը չը յանդրոցան։ Ազգաց մէջ ցրուելով կորանցնել ուզեցին. շատ կորսուեցաւ, բայց չը հատաւ. գնացած տեղն հաստատուեցաւ և տարածուեցաւ։ Քանի որ իւր ազգային եկեղեցւոյ անկախութիւնը պահեց և քանի որ Ս. Էջմիածնի և Ս. Երուսաղէմի հետ յաճախ ուխտագնացութեամբ և միշտ նուիրատուութեամբ յարաբերութիւն ունեցաւ, հոգին ու սիրտը, միտքն ու զգացմունքը կապուելով այդ երկու նուիրական ցանկալի սուրբ տեղերուն հետ, գիտակից մնաց իւր ազգային որոշ ինքնուրոյն և սիրով կապուած մնաց ազգային միութեան մէջ։— Այս հանգիստ տեսնել չէին կարող թշնամիք։

Ուրեմն ի՞նչ անելու էր, ի՞նչ էր այս ազգին նեցուկն ու կապը։

— Կրօնը, Եկեղեցւոյն անկախութիւնը, կրօնական հաստատութիւնքը, իւր անարատ դաւանութիւնը, Եկեղեցւոյ օրէնքներն ու պատուէրները. իւր ազգային պատմութիւնը և զինքը միացընող մէկ հատիկ լեզուն, զոր դարձեալ պահած էր Եկեղեցին. դուրսը ի՞նչ տարաձայն բարբառներով ալ վարուէր, սակայն Եկեղեցւոյ մէջ կը հասկանար որ ինքը մէկ հատիկ լեզու ունի. այս լեզուին միութեամբը է-ր դէս-ընդ-ենը կը ճանչնար։

Ասոնք էին Հայը միութեան մէջ պահող կապերը։ Սակայն Թշնամին խորհեցաւ այս զօրութիւնները տկարացնել, այս յօդակապերը խորտակել։

Քրիստոնեայ ազգեր հանճարի և իմաստութեան զէնքով յարձակեցան և կրօնական անտեղի պատերազմ յարուցին. բայց շնորհալիներ չը պակսեցան, որ միևնոյն զէնքերով և ճշմարտութեան վահանի օգնութեամբ նոցա դիմակալող շահատակներ դարձան։ Հայն, այո՛, կրօնական այս ոգեստալի պատերազմին ալ կուրծք տուաւ, դիմացաւ. իւր եկեղեցւոյ նախնական պարզութիւնն ու սրբութիւնը պաշտպանելով՝ պահեց նորա ազատութիւնը և գերութեան չը մատնեց. յանդուգն խնդիրներէն երկիւղածութեամբ հեռացաւ, Թշնամւոյն ճշմարտութեամբ պատասխանեց, քրիստոնէական ներողամտութեամբ և սիրով համբերեց, ոչ մինը և ոչ միւսը չանարգեց, դժոխքի և կորստեան չը մատնեց, և այսպէս ճշմարիտ քրիստոնէի նշանը միշտ իւր վերայ պահեց։ Թշնամիք ասով պատկառելու տեղ՝ աւելի զայրացան և հազար ու մէկ հնարներ գործադրեցին...։

Վերջին Թշնամին (երանի՜ թէ վերջին լինէր) աւելի զօրութեամբ յարձակեցաւ, աւելի յանդուգն և խորամանկ գտնուեցաւ։ Կրօնի մէջ հասարակաց հաւատքը սնուցանող, զարգացնող, կրթող, զօ-

բացնող, և հաստատող ինչ որ գտաւ, կործանեց ջնջեց, ծաղրածութեամբ, անարգելով և հայհոյանօք. նուիրական սրբութեանց պատկառանքը վերցուց, սրբավայրերը, վանքերը, եկեղեցիները և եկեղեցականները արհամարհեց ու անպատուեց. սառեցնելու և աչքէ ձգելու համար ամեն հնարք գործածեց. պատշաճն ու անպատշաճը խօսեցաւ. սուտ, իրաւ ամբաստանութիւններ և զրպարտութիւնք չը մնաց դուրս թափեց։ Ժակառակ աստուածային պատուիրանաց անօգուտ քարոզեց նուէր, ընծայ, տուրք, ուխտ և ուխտաւորութիւն, որք հաւատոյ նշաններ և պտուղներ էին, զորս Աստուած ինքնին պահանջած է և ժողովուրդն Եկեղեցւոյ և անդամներն միմեանց հետ կը կապէին և ամբողջութիւնը միութեան մէջ կը պահէին։

Այս վերջին թշնամին հազար խորամանկութեամբ Աստուծոյ խօսքն ու պատուէրները ծռելով՝ ամեն մարդու կամքն ու կիրքը շոյելով ըստ հաճոյս քարոզեց. տարածեց այս ապականութիւնը ժողովրդեան բովանդակ մասերուն մէջ և, մոլորեցուց. ազգին մէջէն ալ, դժբաղդաբար, օգնութիւն գտաւ. վասն զի քանի մի կամապաշտ և անարժան հայ զաւակներ գտնուեցան, որք աւելի եռանդուն սիրով աշխատեցան յօգուտ նոցա։

Մ՝իամիտ ժողովուրդը, յանուն օգտի՝ հայերէն խօսող, հայերէն քարոզողներ, նիւթական օգնու-

թիւններ խոստացող մարդիկ տեսաւ, „որք փոփ. խամիաները խաբելու համար օրհնութեամբ և քաղ. ցրաբանութեամբ կը մօտենան“, զանոնք բարեկամ կարծեց. իւր բուն բարեկամները թշնամի համարեց։ Օտարէն վարձուած այդ կեղծաւորներուն մտիկ ա. նելով՝ ուրացաւ իւր ծնող մայրը — իւր անարատ եկեղեցին. չը կեցաւ իւր կոչման մէջ. իւր առեն սեպհականութիւնները մոռացաւ. Ս. Էջմիածին ալ, Ս. Էրուսաղէմն ալ ուրացաւ, որ այսքան երկար դարեր իւր գոյութեան հաւատարիմ պահապան ու պաշտպան եղած էին. որք իրեն անուան և օգտին համար ջանք ու ճիգ, ոյժ և կեանք խնայած չէին։ Այժմ այս խորամանկ թշնամիք գործը բերին հասուցին այն տեղ, որ կաշխատին պատմութիւնն ալ ունայնացնել. ցաւալի է որ Ազգին մէջէն յանուն գիտութեան պաշտպան ու ձայնակիցներ ալ կը գտնեն. վերջին նեցուկն ալ խորտակելու ժամանակն հասած կը տեսնեն և ահա եկեղեցւոյ լեզուն ալ փոխել տալու կաշխատին, և խեղճ միամիտներն ալ ձայնակից կը լինին չը գիտնալով, որ ազով ինչեր պիտի կորսնցնեն։

Մեծ իմաստութիւն պէտք է այս խորամանկութիւնը ճանչնալու և անկէ զգուշանալու համար, որպէս զի վերջը ազգին մեծ կորուստին վերայ

ողբալու չը դատապարտուիմք. այնչափ անմիտ չը լինիմք որ ձեռքերնիս եղած բարիքը կորսնցնելէ վերը՝ նորա յարգը ճանչնամք ու կոյր բուերու պէս տխուր աւերակաց վերայ նստելով՝ տղայի պէս լաց լինիմք։

Այս թշնամեաց նենգութեամբն է ահա, այց ազնիւ ժողովուրդ, որ դու շատ բարի զգացումներէ սառելով, շատ ազգային յատկանիշերդ կորսընցնելով՝ մեծամեծ հաստատուն բարիքներէ զրկուեցար. շատ սեպհականութիւններ կորսնցուցիր և դեռ կորսնցնելու վրայ ես... —

Ականջ ունեցողը՝ թող լսէ,
Միտք ունեցողը՝ թող խորհի։

Բ.

Ս. ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ԿՐՕՆԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ.

Ս. Երուսաղէմը քրիստոնեայ ազգաց համար կրօնի նուիրական տեղն է. քրիստոնէական աստուածային կրօնի սկիզբն ու կեդրոնն է. բայց այսօր քրիստոնէից համար կրկին նշանակութիւն ունի. — Կրօնական և Ազգային։

ԿՐՕՆԱԿԱՆ. — Վասն զի այնտեղ ծնաւ մեր Տէր Յիսուս Քրիստոս աշխարհի Փրկիչը. այնտեղ կատարեց հազարաւոր տարիներ յառաջ յայտնած իւր աստուածային Տնօրէնութիւնները. „Այնտեղ երևեցաւ բոլոր մարդիկը փրկող Աստուծոյ Շնորհքը, որով բովանդակ աշխարհ այն տեղէն սովրեցաւ կատարեալ մարդ լինելու համար թողուլ ամբարշտութիւնն ու աշխարհական ցանկութիւնները, որք զմարդ անասուն և գազան կը դարձընեն։ Այն տեղէն ծագեցաւ աստուածային գիտութեան լոյսը, որով միայն կրցաւ սովրիլ մարդ իւր անձին հետ զգաստութեամբ վարուիլ, իւր ընկերին հետ արդարութեամբ ապրիլ և զԱստուած հոգւով և ճշմարտութեամբ պաշտել։ Այն տեղէն, Ս. Երուսաղէ-

մէն պարզեցաւ ճշմարիտ աղատութեան, եղբայրութեան և հաւասարութեան դրօշակը, որով միայն կրնան մարդիկ մի գերդաստան կազմել և երջանիկ խաղաղութիւնը վայելել։ Այս մեծ գիտութիւնը, այս փրկարար Շնորհքը ձրի չը տրուեցաւ մարդուն, այլ Յիսուսի Քրիստոսի անպարտական մահուամբը, որոյ սուրբ և անարատ արիւնը այն տեղ, Ս. Երուսաղէմի մէջ՝ սիրոյ սեղանին վերայ թափելով՝ մեր կրկին կենաց երջանկութեան պատճառ, մանաւանդ մեր հոգւոյ փրկութեան հաստատ երաշխաւորութիւնն եղաւ, որ եթէ մեք այդ փրկարար շնորհաց յարգը ճանչնալով, այդ լուսաւոր գիտութեան օրէնքին հնազանդելով գործ դնեմք, եթէ զգաստութիւն ու չափաւորութիւն պահեմք մեր կրից ու կամահաճութեանց մէջ, եթէ մեր ընկերին, — մեզ նման մարդկան հետ արդարութեամբ, ճշմարտութեամբ, սիրով ու սրբութեամբ կենցաղավարիմք, եթէ մեր արարիչ Աստուածը անկեղծ զգացմամբ, հոգւով և մեր բոլոր զօրութիւններովը պաշտեմք՝ նորա կենդանարար խօսքերուն կատարեալ հնազանդութեամբ, այն ատեն մեր ներկայ և ապագայ երջանկութիւնը, մեր փրկութիւն ու կեանքը ապահովուած է Աստուածային խոստմամբ. և կընքուած մեր Տիրոջ արեան ուխտովը, որոյ հանդիսարանն եղած է Երուսաղէմ, սկսած է Երուսաղէմէն,

ընդ ամենայն աշխարհ տարածուած է Երուսաղէմէն. և դարձեալ Երուսաղէմէն „կ՚սպասեմք այն երջանիկ յուսոյն, մեծին Աստուծոյ և մեր Փրկիչ Յիսուսի Քրիստոսի փառաց յայտնութիւն, որ զմեզ ամեն անօրէնութիւններէ փրկելու համար իւր անձը տուաւ, որպէս զի զմեզ սրբելով բարի գործերու նախանձաւոր ժողովուրդ որոշէ իրեն“։

Ահա այսքա՜ն գերազանց շնորհքներ ընդունած եմք Ս. Երուսաղէմէն, կընդունիմք և հաւատք ունիմք Քրիստոսի անստեղի խօսքին վերայ, որ տակաւին պիտի ընդունիմք։ Այս հոգևոր, բարոյական և անփոխարինելի շնորհքը վայելող և նորա փրկարար արդիւնքը իւր հոգւոյն մէջ զգացող ճշմարիտ քրիստոնեայն՝ պատկառանօք և մեծ յարգութեամբ կը յիշէ Ս. Երուսաղէմի անունը, և իւր հաւատքին ու սիրոյն ջերմութեան չափովը՝ ցանկութիւն կզգայ իւր կարողութեան համեմատ, նուիրաբերութիւն անել սուրբ Երուսաղէմին թէ ուխտագնացութեամբ և թէ հեռիէն նուէրներ ղրկելով, ինչպէս կանէին ու կանեն 1800 տարիէ ի վեր ջերմեռանդ բարի քրիստոնեայք. որով միշտ Ս. Երուսաղէմի հետ փոխադարձ յարաբերութեան մէջ կը գտնուէին։

Ճշմարիտ քրիստոնէին համար մեծ և սուրբ է Երուսաղէմի նշանակութիւնը. բայց ես միայն

այսչափ կարող եմ նմանցնել տկար օրինակաւ մը, թէ ինչպէս հարազատ ու սիրելի զաւկի մը համար բարի ծնողաց մէկ ցանկալի յիշատակը, կամ մի երախտագէտ մարդու համար իւր կեանքն աղատող բարերարի նիւթական մէկ յիշատակը, կամ թէ զգայուն սրտի մը համար հայրենիքն ու հայրենի տունը ինչպէ՞ս թանկագին ու սիրելի են, այնպէս ալ Ս. Երուսաղէմը քաղցր ու խանդաղատելի է հաւատարիմ Քրիստոնէին հոգւոյն համար, զի այն տեղէն ընդունեց հոգեւոր կեանքն ու լոյսը, ոյժն ու զօրութիւնը. մեծ բան չէ ուրեմն եթէ նիւթականէն տարուէ տարի մի բան, մի օգնութիւն նուիրէ ի նշան շնորհակալութեան և երախտագիտութեան։ (Հռովմ. ԺԵ, 25—27).

Ս. Երուսաղէմի հետ ասանկ ուխտաւորութեամբ կամ նուիրատուութեամբ միշտ յարաբերութեան մէջ լինելուն բազմաթիւ օգուտներն՝ չէ կարելի այստեղ մանրամասնաբար թուել, յորոց մին ալ այս է, որ կը կապէ Քրիստոնեայն իւր կրօնի կեդրոնին հետ, այնտեղ կատարուած սրբազործութեանց զգալի յիշատակներով՝ հոգին կը կապուի և կրօնին հետ. արթուն և վառ կը պահէ քրիստոնէական սէրն ու հաւատը. քաջալերութիւն և մխիթարութիւն կը ներշնչէ հոգւոյն, կենաց յոյսը կը զօրացնէ՝ համբերութեամբ դիմանալ աշ-

խարհի ամէն պատահական փորձանաց և անյոյս, անհաւատ մոլեգնոտներու պէս անժամանակ չը մարել կենաց լոյսը։ Պէտք է համարձակ ասել, որ ասանկ հոգեշահ, բարոյական, գեղեցիկ նպատակներով էր, որ Սրբազան Առաքեալք իրենց քարոզած ու դարձի բերած տեղերը կը պատուիրէին ու կը յորդորէին ժողովուրդը, որ օգնեն Ս. Երուսաղէմի մէջ եղողներուն. և իրենք իսկ մեծ հոգատարութեամբ կը ժողովէին նոցա նուէրն ու ընծաները և անձամբ Ս. Երուսաղէմ կը տանէին։ Կարդացէք Գործոց ԺԱ. գլուխ 27 համարէն 30-ը։ Ի, 16. ԻԳ 16—17. Հռովմ. ԺԵ, 25—27, 31. Ա. Կորն. ԺԶ. 1—4. Բ. Կորն. Ը. Թ։

Այս համարները, մանաւանդ Բ Կորն. Ը. Թ գլուխներն ամբողջ կարդալով՝ պարզ պիտի տեսնէք Ս. Առաքելոց ջանքն ու եռանդը, յորդորն ու խրատը Ս. Երուսաղէմ եղողներուն օգնելու մասին. պիտի տեսնէք թէ ի՞նչպէս եռանդով կը խրախուսեն հաւատացեալները, որ իրենց առատ տուրքերովը և զուարթ նուէրներովը մասնակցին նոցա պէտքերուն և լեցնեն նոցա կարօտութիւնը և պատճառ դառնան առաւել գոհութեան և զԱստուած փառաբանելու։

Այն ատենէն մնաց այս կարգադրութիւնը Եկեղեցւոյ մէջ. այն ատենէն սահմանուեցաւ նուիրակութիւնը, որ հաւատացելոց նուէրներն հաւա-

քելով կը տանէր Ս. Երուսաղէմ. այն ատենէն սահմանուեցաւ ամէն եկեղեցեաց մէջ գանձանակ շրջեցնել Ս. Երուսաղէմի համար և անկորուստ այնտեղ հասցնել։ Ամէն աստիճանի եկեղեցւոյ պաշտօնեայք ալ ժամանակին մեծ փոյթ ունէին՝ ամէն տեղ ժողովուրդն յորդորել և ժողովուրդն ալ պատրաստ էր այդ մասին չբխնայել. իբրև Աստուծոյ պաշտաման պարտք և հաւատոյ ու սիրոյ պտուղ՝ յօժարակամ կը նուիրէր. կը ջանային մանաւանդ մէկը մէկալէն գերազանցել և առատանալ, և ոչ թէ ագահութեամբ ու խնայելով. ուրախ սրտով կուտային և ոչ թէ տրտունջով ու դժգոհութեամբ, զի նոքա լուսաւոր հաւատքով քաջ գիտէին Ս. Երուսաղէմի արժանաւորութիւնը և գործնական արդիւնքով կը յայտնէին իրենց հաւատոյ և սիրոյ ջերմութեան չափը։ Եթէ դուն ալ, ժողովուրդ Հայոց, կը ճանչնաս ու կը պարծիս թէ քրիստոնեայ ես, ուրեմն ճանչնալով Ս. Երուսաղէմի կրօնական այսչափ բարձր նշանակութիւնը, ջանք արա միշտ քու պարտաւորութիւնդ ալ կատարել, ինչպէս կատարեցին քո նախնիքդ։

Ս. Երուսաղէմի կրօնական նշանակութեան մասին այսչափը բաւական համարելով, մի քիչ ալ տեսնենք Աղգային նշանակութիւնը, որոյ մասին շատերը գաղափար անգամ չունին, ինչպէս տեսանք

այս անգամ մեր այս նուիրակութեան շրջանին մէջ։

ԱԶԳԱՑԻՆ։— Ս. Երուսաղէմ Ազգային հայեացքով ալ մեծ նշանակութիւն ունի։ Նախ. Ս. Երուսաղէմի մէջ գտնուած Հայոց վանքերն և այլ հաստատութիւնք իբրև Ազգին դարաւոր ստացուածք և իբրև ազգային սեպհականութիւն, տարակոյս չը կայ որ զուտ ազգային է։ Բ.— Կրօնն ազգային լինելով, կրօնի վերաբերեալ ինչ և իցէ մի բան՝ դարձեալ ազգային է։ Գ.—Բոլոր քրիստոնեայ ազգեր Ս. Երուսաղէմի մէջ զերեզք կը ներկայացնեն որոշ ազգ-ին՝ միմեանց հանդէպ և միմեանց հետ. մեր ազգն ալ այնտեղ փառաւորապէս բռնած է այդ դիրքը և լաւ ևս յաջողած, որով և կատարելապէս ազգային պաշտօնական տեղի է, որ զազգն մի կեդրոնի մէջ բոլոր ազգաց կը ներկայացնէ իբրև հին ու գլխաւոր ազգ և նախկին քրիստոնեայ։ Դ.—Իբրև ազգային հնութեան մի կենդանի յիշատակարան՝ դարձեալ ազգային է, որ պէտք է ամեն —Հայ— անուն կրողի սրտին վրայ անջնջելի մնայ և ամեն հայ բոլոր զօրութեամբ տէր լինի, պաշտպանելով զայն ամեն վտանգի մէջ։

Բայց եթէ Ազգային ասելով ոմանք կիմանան միայն Ազգային պետական մի շինուած, կամ իշխանութեան ժամանակի պատմական յիշատակարան,

իբրև այդ ալ Ս. Երուսաղէմ փառաք կրնայ պարծիլ. զի Ազգին քաղաքական իշխանութիւն ունեցած ժամանակէն և իւր սիրելի պետական անձանց ձեռաք սկսած և շարունակած է։

Հայոց առաջին քրիստոնեայ Թագաւոր Աբգարի Հեղինէ Թագուհին Քրիստոսի 40 — 50 Թուականներուն Ս. Երուսաղէմ գալով՝ շատ մը ուրիշ շինութիւններու հետ շինեց նաև Ջերեթեան Ս. Յակոբ Առաքելոյ գլուխն ամփոփուած տեղին վրայ և Յակոբ Տեառնեղբայր անուանեալ Առաքելոյն գերեզմանին վերայ մատուռներ, որ յետոյ ընդարձակ եկեղեցի շինուեցաւ և հետզհետէ աւելնալով զանազան շինութիւններ, կազմուեցաւ այժմեան Ս. Յակոբեանց հռչակաւոր վանքը։ Ահա այդ ժամանակէն կսկսի Ս. Երուսաղէմի մէջ Հայոց իրաւունքն ու հաստատութիւնը իւր սուրբ և առաքինի Թագուհւոյն ձեռքով։ Դարէն Ազգիս Քրիստոնեայ Թագաւորներն ու նախարարք և նոցա սերունդք, միմեանց զկնի փառք ու պատիւ համարեցին իրենց նուէրներով, շինուածներով և յիշատակներով զարդարել, Աբգարէն սկսեալ մինչև վերջին Լևոնի ժամանակը. որոց բարեպաշտութեան և ազգասիրութեան արդեանց մի մնացորդը գարերու և բռնութեանց կործանիչ ձիրաններէն մեծամեծ զոհողութեամբ և արիւններ թափուելով հաղիւ

աղատած եկած հասած է այսօր՝ աղատութեան և խաղաղութեան կոչուած դարը։ Սակայն ցաւօք սրտի կը տեսնենք, որ այսօր ալ գործ և արդիւնք չունեցող մի խումբ ճպռուններ՝ իրենց ինքնակար ճռճռոցներով կործանել կաշխատին, յորոց առաւել անմտագոյններն մինչև անգամ յանդգնեցան — ծախել — առաջարկելու...։ Ահա քեզ ազգասիրութիւն, որ կործանելը շինել հասկացած են։

Ամեն Քրիստոնեայ լուսաւորեալ ազգեր Ս. տեղեաց վրայ փոքրիկ իրաւունք մի ստանալու համար բան չեն խնայեր և իրենց ազգութեան փառք կը սեպեն։ Մենք նշանաւոր տեղեր ունիմք բուն ազգային սեպհականութիւն՝ առանց այլոց մասնակցութեան. իսկ միս Ս. տեղեաց վրայ հաւասար այլոց ազգաց իրաւունք և արտօնութիւններ ունիմք, որք շատ սուղի նստած են մեզ...։

Ս. Երուսաղէմի մէջ ձեռք մի տեղ, կանթեղ մի, աշտանակ, պատկեր, մինչև անգամ բևեռ մի ունենալը ազգային սեպհականութեան, ազգային իրաւունքի, ազգային պատուոյ, փառաց և մեծութեան նշանակութիւնն ունի, ուրիշ ազգեր մեր ունեցածին շարունակ աչք տնկած՝ մի բան խլելու կաշխատին ամենայն զօրութեամբ, մեք միայն մերը պաշտպանելու կարևոր ոյժերին անգամ զուրկ լինելով հան-

ներձ, ոչ երբէք ազգային պատիւն ստորացուցած եմք օտարաց առջև, միշտ Ազգայնոյ-ին պաշտպանելով։

Այս ամենը չը գիտցող և գիտնալ չը կամեցող համբակներ, կամ օտարներու շահուն կողմնակի ծառայողներ համարձակեցան ասել և հրատարակել թէ „Ազգը այժմ այնտեղ այսքան քանակութեամբ կանթեղ և աշտանակ վառել չը կամիր. Ռէկուկէս մէթր տեղի վրայ պատարագ անելու պէտք չունի“ և այլն։ — Ահա նենգութիւն և խորամանկութիւն մի, որ դևն ալ չէր կարող խորհիլ. ահա մի վտանգաւոր խոթութիւն, որ իւր մոլորած և ապականուած սրտին թունալիր մաղձը առանց ամաչելու՝ յանուն ազգին դուրս կը ժայթքէ և սրտեր ու մտքեր կը պղտորէ։ Տարակոյս չը կայ, որ տկարախոհ մտքեր համոզուած և իրաւունք ալ տուած կլինին. բայց ողջամիտ շրջանկատներուն յայտնի է, որ այդպէս խօսողները խիստ քիչ գիտեն և շատ կարճատես են. որք ոչ քրիստոնէական և ոչ ալ ազգասիրական զգացմունք ունին, բայց շատ յաջողակ են կրօնի և ազգի անուամբ մարդ խաբելու և մտքեր գայթակղեցնելու։

Եւրոպայի մէջ շատ կանթեղներ վառելու, շատ պատարագներ անելու բաղում սքանչելի տեղեր կան. միայն Հռովմի Պօղոս Պետրոս եկեղեցին

կարելի է ամբողջ Երուսաղէմը կարժէ, եթէ լոկ իբրև տեղ նկատուի. բայց իբրև կրօնի և ազգի համար նշանակութիւն ունեցող սուրբ տեղ՝ ամբողջ Հռոմին անգամ Ս. Երուսաղէմի „Ռէկո-ֆէ-ռէնը պէղին“ հետ չէ կարելի ի կշիռ դնել։ Մեր սեպհական եկեղեցւոյն մէջ տարին մի անգամ լատինը պատարագ անելու իրաւունք ստանալու համար՝ քիչ մնաց որ բոլոր Հռոմէական պետութիւնը ոտք ելնէին Միաբանութեան դէմ։— Ինչո՞ւ. մի՞թէ մէթրուկէս տեղ չունէի՞ն պատարագ անելու. — Ո՛չ, այնտեղի խնդիրները լոկ կրօնական չեն. Ընդ-գայնո-ղին-ը մեծ նշանակութիւն ունի այնտեղ ...։

Հայը իբրև հին ազգ և իբրև նախկին քրիստոնեայ ազգ, Ս. Երուսաղէմի մէջ միայն որոշ և յայտնի կը ճանչցուի, ուր ամեն ատեն բաց ի Երուսաղէմի նշանաւոր այցելուներէ՝ եկած են և կը գան թագաւորք և թագաւորազուն և մեծամեծ նուէրներով ու խիստ թանկագին ընծաներով կոչտեն իրենց հաստատութիւնները *). այնտեղ Հայոց նշանաւոր դիրքն ալ տեսնելով գովութեամբ և զարմացմամբ կը մեկնին։ Հշմարիտ Հայու արիւն և սիրտ կրողը միայն կրնայ զգալ այս երևութի ար-

*) Իսկ մեք այժմ չունիմք ոչ թագաւոր եւ ոչ թագաւորազուններ. մեր իշխանք եւ հարուստք կամ բնաւ չեն ցանկար Ս. Երուսաղէմ գալ եւ կամ եթէ երբեմն ալ գան, չեն յօժարիր մի մեծ զոհաբերութիւն անել. ապա ուրեմն մեր ազգային հաստատութիւնքն ո՞վ կոչտեն ...։

ժանիքը և գնահատել ազգութեան համար սորա ունեցած մեծ ու կարևոր նշանակութիւնը։ Բայց քրիստոնէական անկեղծ զգացումն չունեցողին ազգասիրական զգացումն ալ պատիր ու յողդողդ է. վասն զի ճշմարիտ ազգասիրութիւնը հաստատ սկզբունքով սովրեցնողն ալ քրիստոնէութիւնն է. հաստատող ու արդիւնաւորողն ալ քրիստոնէութիւնն է։

Ա. Երուսաղէմն Հայոց համար այն նշանակութիւնն ունի ազգային տեսակետով՝ ինչ նշանակութիւն որ ունին Հայաստանի մէջ Եզգին հին հաստատութեանց պատմական յիշատակարանք, միայն սա տարբերութեամբ, որ նոքա աւերակ են, իսկ սա կանգուն. նոցա շատերը անյայտացած են, իսկ սա կենդանի. մի՛ թողուք ուրեմն որ սա ևս աւերակ դառնայ... Ճշմարիտ ազգասիրութիւն ունեցողը իւր սիրոյն համեմատ մի զուարթ և առատ օգնութիւն պէտք է անէ այժմ նորա այս նեղ վիճակին մէջ, և ամեն տարի մի փոքր նուէր անխափան շարունակելու է, որ միշտ հաստատ պահուի։ Իսկ եթէ մէկը կը զլանայ, մանաւանդ այլոց ալ արգելք կը դառնայ, սուտ է իւր ազգասիրութիւնն ալ, կրօնասիրութիւն ալ. լոկ ապարդիւն խօսքեր են. զուր տեղը մարդախաբութիւն թող չանեն։—Ծառը իւր պտուղէն կը ճանչցուի։

Այժմ տեղը և ժամանակը չէ, մանաւանդ երկար

աւ կը լինի, որ խօսէինք թէ քաղաքականապէս աւ ի՞նչ նշանակութիւն ունի Ս. Երուսաղէմ, որ եւրոպական բոլոր ազգերը ուղղակի և անուղղակի կը մրցին Ս. Երուսաղէմի մէջ աւելի տեղ ունենալու, բարոյապէս և քաղաքականապէս նշանակութիւն ստանալու, որոյ համար և ահագին պատերազմներ աւ մղեցին միլիոնաւոր ոսկի և կեանք զոհելով ...։

Ս. Երուսաղէմի մէջ Հայոց իրաւանց Ընդդէմ նշանակութեան մասին այսչափ բացատրութիւն թող բաւական համարուի անոնց համար, որ տղայական նորասիրութեամբ կը պարծին թէ, — իրենք աւելի ազգասէր են քան կրօնասէր.— այսուհետև տեսնենք իրենց ազգասիրութեան պտուղը. իսկ ճշմարիտ կրօնն աւ ազգինն է, կրօնի վերաբերած ամեն հաստատութիւնք և սրբութիւնք աւ ազգին են.—

„Ազգ եմ“ ասողը զանոնք կը պաշտպանէ,
ՀԸ պաշտպանողը — օտարամիտ է։

Գ.

Ս. ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՄԷՋ ՄԵՐ ԱԶԳԱՑԻՆ ԻՐԱՒԱՆՑ ՎԵՐԱՑ Ո՞Վ ԿԸ ՀՍԿԷ.

Քանի որ Ս. Երուսաղէմ կրօնական և ազգային այդքա՜ն կարևոր նշանակութիւն ունի. քանի որ բոլոր քրիստոնեայ Ազգեր այդքա՜ն ջերմութեամբ և ոյժով կը պաշտպանեն և կաշխատին երևելի հանդիսանալ ատանկ մի համաշխարհական կեդրոնի մէջ և մեր Ազգին նշանակութիւնը պակսեցնել. և քանի որ գիտենք թէ այդ Ազգերը մեծ ոյժ, ամբաւ հարստութիւն և բազմաթիւ ժողովուրդ ունին, ամենքն ալ իրենց նիւթական ու բարոյական զօրութեամբ հոգանի և պաշտպան են իրենց տեղերուն թէ անկորուստ պահելու և թէ օր յաւուր բազմացնելու և փառաւորելու,—ուրեմն մեր ՝այոց Ազգին ունեցած տեղերուն պահպանն ու պաշտպանն ո՞վ է, ո՞վ կը կառավարէ, ի՞նչ ուժով դէմ կը դնէ բռնութեանց և ինչո՞վ կապրի, որ այսքա՜ն դարեր յարատևած և փառաւոր հանդիսացած է:

Ժողովուրդ ՝այոց, այս հարցն այնքա՜ն կենսական կարևորութիւն ունի, որ ամեն ՝այ անուն

կրող այր և կին, աղջիկ և տղայ, ծեր և մանուկ պարտաւոր են միշտ անմոռաց միմեանց հարցնել, պատասխանին վրայ խորին ուշադրութիւն դարձնելով՝ ամենքն ալ ջանալու են իրենց պարտքը սիրով և երկիւղածութեամբ անխափան կատարել։

Մոիկ արէք.

Ս. Երուսաղէմի մէջ Հայոց սեպհականութեանց, սուրբ տեղերուն և ուրիշ ազգային հաստատութեանց վրայ հսկող, զանոնք պաշտպանող և պահպանողն է Սրբոց Յակոբեանց ազգային վանուց անձնուէր հաւատարիմ Մխիթարեանութիւնը և նորա Հայրն ու գլուխն եղող Սրբազան Պատրիարքը։

Ս. Երուսաղէմի Ս. Պատրիարքին և Մխիթարեան ոյժն ու կարողութիւնը բոլոր աշխարհի մէջ սփռուած Ազգին ամեն մի անձնաւորութիւնն է, ամբողջ Հայ ազգը նոցա սէրն ու համակրութիւնն է. նոցա իրենց կրօնական և ազգային հաստատութեանց վերայ ունեցած ջերմ նախանձախնդրութիւնն է. իսկ եկամուտը, ամեն տարի Ազգին նուիրած ու նուիրելիք լումայն է, նուէրն է։

Բայց մեր Ազգը ուրիշ ազգաց պէս քաղաքական ոյժ չունի, նոցա չափ հարուստ չէ, նոցա չափ բազմաթիւ չէ, նոցա պէս տուրքի վարժ և նուիրաբերութեան մէջ առատ չէ,— բացառիկ երևոյթ. ներ խիստ քիչ կը պատահին, տարիներս թշնա-

մեաց խորամանկութիւնը, բնական և պատահական հարուածք, ժողովրդեան զեղխութիւնն ու սչբանքը աւելի պակսեցուցին Ս. Երուսաղէմի նիւթական և արոյական ոյժերն ու հասոյթները։ Ինչպէս ուրեմն կարողացեր է դիմանալ Միաբանութիւնը և պահպանել իւր դիրքը և չէ վհատեր։

— Այդ պակասութեանց տեղը լեցուցած է Աստուծոյ յատուկ Նախախնամութիւնը, Միաբանութեան չափաւորութիւնը, հաւատարմութիւնը, չարքաշութիւնը, կրօնասիրութեան և ազգասիրութեան եռանդը, և վերջապէս ազգին համակրութեան վերայ ունեցած յոյսը, որովք դիմացած է մինչև ցարդ սոսկալի տառապանաց, դժուարութեանց և չը հաւատալի զոհաբերութեանց։ Նիզ ու դժուարին դէպքերու մէջ միշտ վստահութեամբ հաւատացած է, որ օր մի կը վերնան շուտով բնական և պատահական արգելարիթ պատճառները, օր մի կը յիշէ Ազգը Ս. Երուսաղէմը և նորա անձնուէր հաւատարիմ պաշտօնեաները, կը յիշէ և „կը հարցնէ Ս. Երուսաղէմի ողջութիւնն ու շինութիւնը“, կը յիշէ իւր պարտաւորութիւնը և մինչ ցարդ չը հաստատեցածը արդարութեամբ կը հաստատեցանէ և կը շարունակէ հաստատեցանել իւր կրօնական և ազգային միրոյն անհրաժեշտ պարտականութիւնը։

Ահա սոքա են Միաբանութեան բոլոր ոյժն ու

դրամագլուխը. — Աշխատութիւն, զոհողութիւն յոյս։

— Հասաւ իւր ակնկալութեան.

— Հատ անգամ հասած է, այժմ ալ տակաւին կը յուսայ և կըսպասէ հասնելու։

Այո՛, մեծ է իւր յոյսը Աստուծոյ վերայ, վստահ է նա Ազգին սիրոյն և արդարութեանը վերայ, մինչեւ ցարդ Ազգին համակրանօքը օտար թշնամութեանց առջև չը վհատեցաւ, Ազգին կը ճնայ այժմ ալ չը վհատեցնել ներքին և արտաքին թշնամեաց առջև։

Ս. Երուսաղէմի Միաբանութիւնը վստահ է և տակաւին կը յուսայ, որ օր մի Ազգը միտքը կրեր կը ճանչնայ իւր թշնամին ու բարեկամը, տարբերութիւն կը դնէ իւր հաւատարիմ պաշտօնէին և անհաւատարիմ մշակին մէջ. լաւը կը վարձատրէ, վատը կը պատժէ։ Միաբանութիւնը դեռ կը յուսայ, որ օր մի Ազգը պիտի հասկանայ թէ ասանկ ազգային կարևոր հաստատութեանց վերայ անպատկառ խօսողք, ծաղրողք, բամբասողք և զինքը սառեցնողք նախ օտարներն են, ապա օտարէն վարձուած ծառաները, կամ իրենց կիրքէն ու մոլութենէն մղուած ազգակործան նենգամիտներն են, Ազգին անհաւատարիմ մշակներն ու անիրաւ պաշտօնեաներն են, Այ անունով իրենց կրից և օտարին գերի-

ներն են։ Եթէ այնպէս չը լինէր, ողջմտութեամբ կը խորհէին, խոհեմութիւնն ու արդարութիւնը, օգուտն ու հեռատեսութիւնը իրենց առաջնորդ կունենային և այնպէս կը խօսէին ու կը գործէին, ու Ազգին պատիւն ու հաւատարիմ աշխատաւորին սիրտը չէր վիրաւորուեր։

Երբ Ազգն ու ազգին գործօն մարմինք այս ամենը զգան ու ճանչնան, այն ատեն պիտի ճանչնան և իրենց պարտքը. և այն ատեն կը յուսամք, որ Ազգը լիովին պիտի հատուցանէ արդարութեան պահանջը. բայց երանի՜ թէ այդ ցանկալի ժամանակը չուշանար, որ վերջին անօգուտ զղջման չը հասնէր գործը։

Ս. Երուսաղէմի մէջ Ազգային սեպհականութեանց այսօր կենդանի և պայծառ մնալը անժխտելի ապացոյց է Միաբանութեան պարտակատարութեանը. իւր վերջին աստիճան նեղ դրութեամբ հանդերձ՝ գործոց ընթացիկ վիճակին անխափան շարունակութիւնը՝ անսուտ վկայ է իւր հաւատարմութեան և անձնազոհութեան. ուրեմն համարձակ վստահութեամբ կարող է պահանջել՝ ինչ որ Ազգէն ընդունելու իրաւունք ունի։

— Ի՞նչ է Միաբանութեան պահանջը։

— Երանի՜թէ ամեն մարդ խորհէր այդ պահանջին վերայ և՛ պիտի զղջար, և՛ պիտի ամաչէր

խօսքն անգամ անելուն համար. եթէ ամեն մարդ խորհէր և պարապ բաներու համար տուած մեծամեծ ծախսերը նկատողութեան առնէր, պիտի տեսնէր, որ Ազգին համար տուածն ու տալիքը չնչին բան մի կը թնար։ Հապա ի՞նչ ասենք այն-պիսիներուն, որ ամեն բանի շռայլօրէն կը մնխեն, բայց ազգային հաստատութեանց, բարեգործական գործերու ոչինչ չեն տուած և տալ չեն կամիր, ցանկացողին ալ արգելք կը դառնան և ամենէն շատ խօսողն ու պահանջողը իրենք կը լինին.

— Ի՞նչ է Ա՛իսբանութեան պահանջը.

— Իւր իրաւունքը. այն, ինչ որ զանազան պատճառներով մինչ ցարդ չէ սաացած, բայց պարտականութիւնքը կատարած՝ և այսօր դառն նեղութեան մէջ է ինկած։ Կարճ խօսքով. ամեն Հայու յօժարակամ սիրոյն նուէրն է զոր կը պահանջէ. Եթէ ամեն մարդ՝ ամեն տարի, անխափան, մի որոշեալ ժամանակի մէջ, իւր կարողութեան համեմատ ամենափոքրիկ նուէր մի տուած լինէր, օրինակ կէս մանէթէն, կամ հինգ ղրուշէն մինչև տասը կոպէկ կամ մէկ ղրուշ, որ ամենէն աղքատն ալ, մուրացկանն ալ իրրև Հայ կարող էր տալ, Ա. Երուսաղէմ այժմ պարաք չէր ունենար, և Ազգին ալ շատ նիւթական և բարոյական օգուտներ կարող էր անել, ինչպէս միշտ արած է, երբ փոքր

ինչ կարողութիւն ունեցած է, մինչև անգամ կարողութենէն ալ վեր։ Իսկ այժմ որ ինքը վտանգաւոր վիճակի մէջ կը գտնուի, հասարակ և նըւազ օգնութիւնն օգուտ չեն աներ, բացառիկ զոհերութիւն պէտք է, որ փութով ազատի։ Այս է ահա նորա պահանջը, որմէ զրկուած է շատ տարիներէ ի վեր։

Քանի որ—Օրէնք, Սահմանադրութիւն, պարտք, իրաւունք, ազգ և կրօն բառերը թեթևութեամբ ամենուն բերնին մէջ անպատակ խօսքեր դարձան, այնքան ալ իրենց կենդանացուցիչ զօրութիւնը կորսնցուցին. քանի որ մանաւանդ ատանկ խօսքերը նենգութեամբ խարէութեան պատրուակ դարձան, ահա կը տեսնեմք որ նոցա օգտակար արդիւնքները փճացան. հասարակ նորութիւններու պէս միշտ փոփոխութեան ենթակայ՝ անօգուտ բաներ դարձան։ Շատերն յանուն օրինաց՝ հակառակ օրէնքի կը գործեն, յանուն սահմանադրութեան՝ ոչինչ սահման չեն ճանչնար, խստիւ իրաւունք պահանջելով՝ կընդունին, բայց միշտ պարտազանց կը գտնուին. ազգասիրութեան անունով Ազգին թշնամութիւն կանեն, կրօնասիրութեան անունով կրօնը կանարգեն. և սակայն յաջողած են այսպիսիք իրենց շաղակրատութեամբ Ազգը խաբել. անկեղծ ու ազնիւ գործիչները թշնամանելով պակսեցնել և խա-

բերանները ասպարէզ բանալ. և զրկել Ազգը հաւատարիմ գործիչներէն. քանզի եթէ տարբերութիւնը դրուիր լաւին ու վատին մէջ, մանաւանդ եթէ լաւը կանարգուի և վատը կը յարգուի, տարակոյս չըկայ, որ Ազգը բարի գործիչներու, պարտակատար հաւատարիմ պաշտօնեաներու կարօտ պիտի մնայ։ —Ամեն հոգւոյ մի հաւատայք, քննեցէք հոգիները և բարին ընտրեցէք. արդարը յանցաւորին հետ մի դատապարտէք...։

Դ.

Ս. ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՀԱՑՈՑ ՎԱՆՔԸ ԻՆՉՈ՞Ւ ՊԱՐՏՔ ՈՒՆԻ

Մինչև ցարդ մեր խօսաածներէն ուշիմ ընթերցողը կարող է հասկանալ Ս. Երուսաղէմի պարտուց անխուսափելի պատճառները, բայց մեք կաշխատիմք աւելի պարզել, որպէս զի նենգամիտներու զրպարտութեամբ գայթակղած մտքերը բժշկուին, և որպէս զի Ազգը հասկանայ, որ պաշտօնն ու պարտաւորութիւնները անթերի կատարել, օրական և պատահական ծախսերու հասնիլ, թէև աղքատութեամբ, բայց վերջապէս ապրիլ, զրկուիլ

տվորական հասոյթներէ. բացառիկ օգնութիւն մի
ալ չը գտնել և միևնոյն ժամանակ պարտք չա-
նել, — անկարելի էր։

Յայտնեցինք արդէն, որ Ս. Երուսաղէմի ազ-
գային հաստատութեանց պահպանող ոյժը և եկա-
մուտը ժողովուրդն ու նորա լումայն է։ Երբ ժողո-
վուրդն որչափ պակսեցնէ իւր այցելութիւնն ու
տուրքը, նուէրքն ու ընծայաբերութիւնքը, այնքան
ալ կը պակսի Ս. Երուսաղէմի ոյժն ու արդիւնքը,
ինչպէս որ եղաւ այս վերջին տարիներս։ Իսկ դա-
ւերով հաստատութիւն գտած մի այնպիսի ազգայ-
ին մեծ տուն, մի այնպիսի հռչակաւոր տեղ ու
առաւարութիւն, որ անակնկալ պատահական ծախ-
սերու ալ ենթակայ է՝ օտար ազգաց հետ ունե-
ցած յարաբերութեանց պատճառաւ, մի այնպիսի
պաշտօնական մարմին չէր կարող անհրաժեշտ ծա-
խուց առջև կասիլ։ Ներքնապէս ինքզինք որչափ
ալ ճնշէր, զրկէր ու սեղմէր, ինչպէս որ արաւ,
սակայն դուրսէն չէր կարող իւր դիրքը նուազեցնել,
օտարին առջև չէր կարող ստորանալ և Ազգայնու-
թեան պատիւը զոհել։ Քիչ թէ շատ բարձր դիրք
և պաշտօնական վիճակ ունեցող մի անձն կարող
է զայս իւր անձին վերայ չափել, և հասկա-
նալ, չմոռնալով, որ իւր պատիւը մասնա-
ւոր է, իսկ Ս. Երուսաղէմինը — ընդհանուր։

Ուրեմն ինչ կարող էր անել Միաբանութիւնը երբ,

ա) Օրէ օր ամէն բան կը թանկանար.

բ) Ազգի հին ու նոր պահանջներով զՄիաբանութիւնը կը թախանձէր.

գ) Ըստ պահանջից ժամանակին նորանոր ծախսերու դռներ բանալու կըստիպէր.

դ) Հեռի քաղաքներու մէջ Ս. Աթոռոյ կալուածները կը բռնաբարուէին.

ե) Մի կողմէն օտար հարստահարութիւնք կը նեղէին, բայց և միւս կողմէն պէտք եղած բարոյական և նիւթական օգնութիւններ չէին հասներ.

զ) Հնաւանդ սովորական նուիրակութիւնը շատոնց դադրած էր և տեղը նոր բան մի չէր դրուած.

է) Գանձանակաց դրամները շատ տեղերէ կանոնաւոր չէին հասներ, շատ տեղերէ ալ բնաւ չէին գար.

ը) Հնդախտները — թէ ի գաւառս և թէ Յերուսաղէմ — միմեանց կը յաջորդէին. նոյնպէս մարախը, սովը և գաւառաց հարստահարութիւնքը իրարու ետևէ կը հասնէին և շունչ առնել չէին տար.

թ) Պատերազմները, միմեանց կը յաջորդէին, Պուլղարաց ապստամբութենէն մինչև ռուս — թուրքական պատերազմին վերջը գրեթէ բնաւ հասոյթ չէր գար վանքը.

Ժ) Վրայ կը հասնէր թղթադրամոց, ընթացիկ խողերու և արժէթղթերու անկումն ու կտրու�ն անվճար մնալը մինչև ցայսօր։ Այս վերջին հարուածը ոչ միայն վանքին և ուրիշ բարեգործական հաստատութեանց և ուսումնարաններու գոյութեան մահառիթ եղաւ, այլև բոլոր տաճկահայոց վերջին ծայր աղքատութեան պատճառ դարձաւ։

Վերջապէս թողունք ուրիշ մանր ու խոշոր պատճառները, ահա այս ամեն բնական և պատահական, անակնկալ և անդիմադրելի պատճառներով երկար ժամանակ ժողովուրդ չէր գար ըստ բաւականին, տուրքերն ու նուէրները կը նուազէր, Եկեղեցեաց մէջ տեղտեղ Ս. Երուսաղէմի համար պնակաց և գանձանակաց շրջաբերութիւնը անհեռատես մարդկան ձեռքով կը խափանուէր, և կարուածներն ալ իրենց սովորական օգուտը չէին բերեր, և Ս. Երուսաղէմ ամեն կողմէն կը զրկուէր իւր հասոյթներէն։ Քանի որ Ս. Երուսաղէմ այս դրութեան մէջ կը մնար, կարելի՞ էր պարտք չանել. հաճի՞ էր յուսաբեկիլ. ի՞նչ անել պէտք էր...

Իրողութիւնք ժամանակակից ու շատ պարզ են, ամենուն ծանօթ են. թող ամեն մարդ այս պատճառներուն վերայ խորին ուշադրութիւն դարձնէ, եթէ կարող է խղճի մտօք արդարութեամբ ասել թէ, — Մ՝ինչանո�ն-ը կարող էր այդ ամեն զրկանք-

ՆԷՐԸ ԷՐԷԼ, ԱՆԽԱՓԱՆ ՊԱՇՏՕՆԸ ԿԱՊԱՐԷԼ ԵՒ ՊԱՐԿ-
ԼԱՆԷԼ ԵՒ ՉԸ ՅՈՒՍԱՀԱՊԷԼ։—Սակայն այդպէս վճռե-
համարձակող կորովամիտ և հանճարեղ անձն թող
բարեհաճի նաև դորա եղանակն ու միջոցն ալ ցոյ-
տալ. բայց նախապէս գիտնալ պէտք է, որ կարե-
լի հնարք և միջոց ճնացած չէ, զոր Միաբանու-
թիւնը փորձած չը լինի. բայց անյաջող պարագայի
պատճառաւ իւր բոլոր հնարքներն ի դերև ելա-
են, որով ուրիշ բան չէր ճնար անել, բայց միայ-
ապագայ յաջողութեան յուսով՝ կամայ ակամայ
ի հարկէ ստիպեալ— պարտք անել։ Այս էր վեր-
ջին և հնարաւոր միջոցը, և այսպէս ալ արաւ, սպա-
սելով մինչև որ Աստուծոյ այցելութիւնն հասնի,
ժողովուրդն իւր տառապանքներէն ազատի, այն
ատեն մարդ զգալով իւր պարտականութիւնը կը
հատուցանէ իւր կարողութեան չափով իւր բաժի-
նը և առանց դժուարութեան պարտքն ալ կը վճա-
ռուի, եկամուտն ալ կարգի կը դրուի։ Այսպէս
միշտ Ազգին արդարասիրութեան և ջերմեռան-
դութեան վրայ վստահելով դիմեց այս վերջին
փորձին։

Բայց գժբաղդաբար ձախորդութիւնք ու պա-
տահարք յուսացուածին չափ շուտով չը վերջացան,
այլ երթալով շատցան ու ծանրցան. ընդ նմին ծանրը-
ցաւ և Ս. Երուսաղէմի պարտքը, և քանի որ փութով

գնութեան չը հասնինք՝ կասկած չը կայ որ օր յաւուր աւելի կը ծանրանայ։

Շատերը կասկած և կարծիք կը յայտնեն, որ անհոգութիւն, սխալմունք և անզգուշութիւն պատահած լինելու է այս գործին մէջ, որ պարտքն այսքան ստուարացեր է. սակայն եթէ նկատողութեան առնուն վերոյգրեալ պատճառները. եթէ Ս. Աթոռոյ գործոց մեծութիւնն ու բազմակողմանիութիւնը խորհին. եթէ հաշուեն որ 1861 թուականէն սկսած է պարտքը, և եթէ Միաբանութեան գործունէութիւնն ու արդիւնքը անկողմնակալ արդարութեամբ դատեն, այն ատեն կը հաւատամք, որ ամեն կասկած ու տարտկոյս կը փարատին, և Միաբանութիւնը կարեկցութեան, զովութեան և վարձատրութեան արժանի կը դատուի։ Մանաւանդ եթէ նկատողութեան առնուի Միաբանութեան անձնազոհութիւնը, անշահասիրութիւնն ու ուշիմութիւնը, որով հնարեցաւ վարկը բարձրացնել և ծանր տոկոսները պակսեցնել տալով պարտուց մեծաքայլ յառաջանալուն առջև թումբ դնել. այն ատեն զարմանօք, ակնածութեամբ և շնորհակալութեամբ պիտի նային նոցա վերայ. բայց նոքա զայս պահանջող չեն։

Այս պարտքը որչափ ալ մեծ երևի, սակայն կը գտնուին Աղգին մէջ պատուական հարուստ ան-

ձինք, որ մէկ մէկ մասնուիրելով՝ զոր օրինակ 50,000 ական լուրլի, վեց կամ եօթն անձնաւորութիւն կարող են առանց իրենց գործոց վնաս բերելու մնալ, և փոխարէն մեծամեծ արդիւնաւոր և մշտատեւ յիշատակներ տեսնել կանգնած իրենց երախտաւոր անուան. և ազգօգուտ ձեռնարկութիւններու պատճառ դառնալ, ասանկ դիւցազնական առաքինութիւն մը մինչև անգամ միայն մի անձնաւորութիւնալ կարող է անել, որպիսիք, փառք Աստուծոյ պակաս չեն մեր Ազգին մէջ, բայց պէտք է շարժուած լինին առաքինութեամբ և մեծագործութեամբ, կը յուսամք և կաղօթեմք, որ Տէրը ինքնին առաջնորդէ և յարուցանէ մեզ ասանկ անմահ յիշատակաց արժանի բարերարներ։

Բայց ասանկ անորոշ ակնկալութեամբ սպասել չէր կարելի, ուստի Միաբանութիւնը և Ազգային վարչութիւնը չը համարձակեցաւ մասնաւորաց վերայ ծանրանալ, յարմար սեպեցին Ազգին ընդհանրութեանը դիմել, որ եթէ առանց բացառութեան Ազգին ամէն անհատը իւր կարողութեան համեմատ մասնակցի, դարձեալ խիստ դիւրութեամբ և շուտով կարելի է վճարել։ Սակայն հասարակութիւնը տակաւին չէ հասկացած գործին սիրոյական կարևորութիւնը, թէ ազգին անդին քաշքշելով ժամանակը կերկարի, թէ առհասարակ ամենքը չեն

մանակցիր, և թէ իրրև մի հասարակ հանգանակութիւն նկատելով՝ թեթև կերպով կը մասնակցին. բայց նկատելու է, որ միւս կողմէն տարին կը գլորի և տոկոսը կը բարդուի։

Իսկ եթէ ապագային նորէն պարտք կը կասկածիք, ինչպէս որ հնարաւոր է, (զի ո՞վ գիտէ թէ ապագայն ինչ՞ը կը ծնանի և ինչ՞ով կարելի է զայն երաշխաւորել), մեք այդ կասկածը փարատելու համար կը կրկնենք.— Եթէ ամեն Հայ, այր, կին, տղա և աղջիկ, անձ-գլուխ՝ անխտիրաբար՝ ամեն տարի ըստ կարողութեան 10—20—40—50 կոպէկ վճարեն և ամբողջ անկորուստ տեղ հասցնեն, ապահով թող լինին, որ ոչ միայն պարտք չը լինիր, այլ նաև Մխիթարեանը շատ ազգօգուտ ձեռնարկութիւններ ալ կանէ։ Այս խնդիրը մեք յաճախ կը կրկնենք, զի ուսումնասիրելու արժանի է և Ազգին ուշադրութիւնը հրաւիրել կուզենք գիտնալով՝ որ ամեն հաստատ եկամուտներէ աւելի ապահով է ժողովրդեան սէրն ու համակրութիւնը. ամեն հաստատուն կարծուած բան կրնայ փճանալ՝ բայց Ազգը միշտ կայ։

Ե.

Ս. ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՄԻԱԲԱՆՈՒԹԻՒՆՆ ԻՆՉՈ՞Ւ ՉԷ ՀՈԳԱՑԱԾ ՀԱՍՑԱՑ ԵԿԱՄՈՒՑ ՈՒՆԵՆԱԼ.

Վերև ասացինք թէ Աղգութենէն աւելի հաստատուն բան չը կայ. և Նախնիք ալ իմաստութեամբ այսպէս կարգադրած են, վասնզի Ս. Երուսաղէմ որչափ ալ հաստատ եկամուտ ունենայ, սակայն միշտ ժողովրդեան ներկայութեանը կարօտ է. ամեն աղգայնոց հետ պէտք է յարաբերութեան մէջ լինի, այս է բարոյապէս և նիւթապէս օգտակարը և այս շատ խոհական տնօրէնութիւն է։

Բայց մեք այդ հարցին ուրիշ պատասխաններ ալ ունիմք։ Նախ, Երուսաղէմ ուրիշ վանքերու պէս երկրագործութիւն և գիւղեր չունի, վասնզի տեղը և դիրքը յարմարութիւն չունի. երկրորդ, իւր ծանր զբաղմունքը, գիշեր ցերեկ հսկողութեան պարտաւորութիւնքը, աղգաց հետ ունեցած յարաբերութիւնները չէին ներեր իրեն մի այսպիսի տարբեր զբաղման ալ ձեռնամուխ լինել և յաջողել, մանաւանդ իւր մերձակայքը տեղ չը կայ, հեռաւոր տեղեր և օտարազգի մշակաց ձեռօք անհնարին էր անշնաս յաջողել, մեր նախորդք զայդ ալ փորձած և ցնաստով վերջացուցած են։ Իսկ ուրիշ

շինուածական կալուածներու մասին Միաբանութիւնը անհոգ գտնուած չէ. այլ առանց պատեհ առիթները ձեռքէ փախցնելու՝ երբ կարողութիւն ունեցած է՝ միշտ ջանք արած է կալուածներ գնել կամ շինել, բայց անոնք ալ դեռ չեն հասած այն քանակութեան, որ բաւական լինին. սակայն միաբանութիւնը միշտ հետամուտ է կալուածներն աւելացնելու։

Կըստիպուիմք այստեղ մի տխուր իրողութիւն ալ խոստովանիլ, որ թէպէտ անախորժ, բայց մեր նիւթին վերաբերութիւն ունենալուն համար հարկ է յիշել, որ Ս. Երուսաղէմի Միաբանութիւնը հեռաւոր երկիրներու մէջ ունեցած կալուածներովն ալ վնաս կրած է, ոչ թէ օտարին, այլ նոյն իսկ ազգայնոց ձեռօք։ Կը թողումք ուրիշ տեղերը, յորոց մուտքի տեղ շատ անգամ միայն ծախք կըդայ, վեր կառնումք միայն Եգիպտոսի և Աղեքսանդրիոյ կալուածները. յորոց կրած վնասուն մի համառօտ ցուցակը կը դնեմք այստեղ։

Եգիպտոսի գլխաւոր Ազգայինք 1845 թուին այնտեղ և Աղեքսանդրիա գտնուած Ս. Երուսաղէմի կալուածները կը բռնաբարեն և եկամուտները կը սահմանեն իրենց դպրոցաց և եկեղեցեաց, անանկ ժամանակ, որ կալուածներն շատ աւելի արդիւնաբեր էին քան այժմ, մեք նուազ մի թիւ

առնելով տարին 500 ոսկի հաշուեմք, կը գտնեմք որ առ նուազն Մխիթարեանութիւնը մինչև ցարդ՝ առանց տոկոսն հաշուելու՝ զուտ արդիւնք կորուսած է 20,000 ոսկի, այն ատենէն սկսեալ Մխիթարեանութիւնը շարունակ աշխատած է այդ կալուածները ձեռք ձգելու համար ծախսեր անել, և չէ յաջողած. Թողունք հինները, միայն 1865 թուէն ի վեր եղածները դնեմք.

Գեր. Սահակ Եպիսկոպոս կը գնայ 1865—66 և ծախք կը լինի, առանց օգտի	10240 զուռուշ.
1867—68. Ս. Պատրիարք Հայրը կերթայ և ծախք կը լինի .	54,190 „
1868—69. Գեր. Իգնատիոս Եպիսկոպոս	59,508 „
1879—80. Գեր. Սիմէոն Եպիսկոպոս	13,219 „
Աւելցնենք սորա վերայ բռնաբարուած կալուածներէն արդիւնքը	2,000,000 „
Միայն Եգիպտոսէն 40 տարուան մէջ Ընթացը ջնջած կը լինի .	2,137,157 „

Եթէ հին տարիներու ջնջանները և դրամոց տոկոսներն ալ հաշուեմք, այն ատեն ներկայ պարագէն շատ աւելի գումարի մը կը հասնիմք։ Թէպէտ վերջապէս իրը թէ յանձնեցին, սակայն մէկ մասը,

այն ալ աւերակ վիճակի մէջ և անշահաբեր, որ դեռ միշտ նորոգութեան կարօտ են։

Մխիթարեանութիւնը հեռաւոր կալուածոց մէջ առանց վնասներ տեսնելով, ջանացած է կարելի եղածին չափ Ս. Երուսաղէմի մէջ և նորա մերձաւոր շրջակայքը կեդրոնացնել և շատցնել իւր կալուածները. այս նպատակաւ ալ երբ մի քիչ կարողութիւն ունեցած է, գետիններ գնած է յատուկ շէնք կառուցանելու համար, բայց վերը յիշուած ձախորդութեանց, և կարևոր ժամանակներ նիւթապէս Ազգին օգնելով՝ ձեռքը փող չը մնալուն պատճառաւ մինչ ցարդ լրիւ չէ յաջողած։

Հայրական ամենաքաղցր սիրով հրաւէր կը կարդամք ձեզ, ո՞վ բարեսէր՝ հարուստ՝ ազնիւ Ազգայինք, որ նախնեաց մեծագործութեանց նախանձաւոր ժառանգներ հանդիսանալով, նոցա ճշմարիտ, բարեպաշտօն, առաքինի ոգւով վառուած՝ բարեհաճիք շնորհք անել և այն գետիններուն վրայ շինուելիք շէնքերուն ծախքերն հոգալ։ Առատաձեռնութեամբ նուիրեցէք Ձեր կարողութեան մի փոքրիկ մասը և յիշատակաց արժանի անուն թողէք։ Հարստութիւնք կը գան ու կը գնան, բայց բարերարութիւնք դարուց ի դարս կը մշանջենաւորեն, այժմ ձեր կենդանութեան ատեն արէք այս բարիքը և վայելեցէք նորա քաղցրութիւնը. ձեր ձեռ-

քը տուէք, որ ձեր ձեռօք քաղէք. ո՞րչափ հարուստներու մեծամեծ կարողութիւնները անօգուտ տեղեր փճացած են, օրինակները շատ են, ամեն օր կը տեսնէք. երանի՜ այն խոհեմ, խելացի հարուստներուն, որ իրենց կարողութիւնը իրենց ձեռքով օգտակար կերպով կը տնօրինեն։ Սքանչացած եմ և օրհնութեամբ կը յիշեմ այստեղ վսեմ. Մկրտիչ Աղա Սանասարեանցը, որ կարողութիւնն ու կեանքը դրած է իւր Կարնոյ վարժարանին վրայ. վսեմ, Յովհաննէս Աղա Ս. Յոզնանեանցը որ Տփղիսի Գայիանեան օրիորդաց ուսումնարանով փառաւորուած է, Նախիջևանի Աղա Յ. Խաչիկեանցը և Մ. Կոկոյեանցը, որք իրենց ուսումնարաններուն անմահացած են. մանաւանդ անմահ յիշատակաց արժանի մեծ. Մարգար աղա Փոփովը, որ այժմէն խոստացած է նուիրել 400,000 ռուբլի Նոր-Նախիջևանի մէջ իւր մեծագործ փառաւոր անուան՝ ի յիշատակ գիշերօթիկ վարժարան բանալու համար։ Ասկէց աւելի ի՞նչ քաղցր մխիթարութիւն կը լինի մարդու մը համար, որ շատերու երջանկութեան պատճառ կը դառնայ. մարդ մը ասկէ աւելի ի՞նչ արժանաւոր բանի կրնայ զոհել իւր հարստութիւնը, որ այսօր իւրն է, բայց մի օր պիտի թողու և ո՞ գիտէ ինչ ունայն տեղեր պիտի վատնուի։ Թող օրհնութեամբ յիշուին ասանկ դիւցազն առաքի-

նեաց անունները և թող առատագութն Աստուած վարձատրէ զերեանք հոգևոր և մարմնաւոր բարութեամբ։ Երանի՜ թէ սոցա օրինակէն քաջալերուած, Ս. Երուսաղէմի ալ ասանկ առատաձեռն նուիրատուներ տեսնէինք, որոց անմահ անունը ոչ միայն ներկայ և ապագայ մարդկութեան պիտի աւանդէինք, այլ և Փրկչին Յիսուսի Տնօրինական սուրբ տեղեաց վերայ Անմահ յաւիտենականին սեղանին առջև երախտագէտ սրտով մշտամրմունջ յիշատակաւ պիտի մեծարէինք։ Ս. Երուսաղէմի մէջ ալ գիշերօթիկ ուսումնարան ունիմք, յորում կը կրթուին ոչ միայն մի քաղաքի երեխայք, այլ ամեն կողմերէն շրջանաւ կընդունուին աղքատ ։այ մանկունք, որոց մտաւոր և նիւթական սնունդ կը տրուի ձրիապէս վանքէն. քաղաքի երկսեռ վարժարաններն ալ վանքը կը հոգայ։ Ո՞նչ մեծ երջանկութիւն պիտի լինի, երբ ասանկ առատաձեռն նուիրօք վանքին հետ մէկտեղ ապահովուի և ուսումնարանաց վիճակը. երանի՜ անոնց, որ կարող են և կը կատարեն ասանկ առաքինական մեծ գործեր։

Յուսալով որ կը գտնուին բարեսէր անձինք, որ փափաքին ի յիշատակ իրենց անունի շէնքեր շինել տալ վանքին հողերուն վրայ, հարկ կը համարիմք մի համառօտ տեղեկութիւն տալ շէնքին և ծախքին վերայ։ Մեր վանքին գեղեցիկը կը գտնուի Ռու-

սաց վանքին դիմացը՝ բարձր դիրքի և պատուաւոր տեղն վերայ, որ շատ ընդարձակ է. որոյ մէջ մի շէնք 520 քառակուսի մեթր գետնի վերայ 9½ մեթր բարձրութեամբ ամբողջ քարուկիր, տակը չորս խանութ, վրան երկու տուն՝ ամէն կարևոր բաժանմունքներովը, շինութեան ծախքն է 1,500 օսմանեան ոսկի, (փոքր աւելի կամ պակաս)։ Խակ օգուտ կը բերէ ½ 6։ Դիտատել պէտք է որ Ս Երուսաղէմի շինուածները ամբողջ սրբատաշ քարաշէն են, և մեր դրած հաշիւը մեթրի վրայ է, և ոչ թէ կանգունի։ Այս մասին հետաքրքրուողք կարող են գրքիս վերջը դրուած երեք վիմագրական պատկերներէն իմանալ։

Զ.

Ս. ԵՐՈՒՍԱՂԷՄՆ Ի՞ՆՉ ՕԳՈՒՑ ԱՐԱԾ Է ԱԶԳԻՆ.

Մենք երբ Գ-րդ հատուածով Միխիթարեան պաշտօնի մասին խօսեցանք, այս հարցին ևս պատասխանած եղանք, և տեղ տեղ ակնարկութիւններ արինք. բայց մեր հարցասէրները ասով գոհ չեն լինիր, նոքա մեր հրատարակի Գիմոսթէնեներէն շարժեալ թիւեր շշափել կը պահանջեն. մեք զի-

ջանելով նոցա թախանձանաց կը կատարեմք իրենց պահանջը, բայց ակամայ կամօք. վասն զի չէինք ցանկար բնաւ որ մեր առ Ազգն արած նիւթական և բարոյական ծառայութեանց հուշակը մեր բերնովն անէինք, այլ յաւէտ ցանկալի էր մեզ, որ ընդունողք՝ տեսնողք և վայելողք կատարէին այդ պարտականութիւնը, որ փոխադարձ արդարութիւնը տեղը գտնէր։ Բայց որովհետև քրիստոնէական գործնական կրթութեան և դաստիարակութեան պակասութենէն պարտաճանաչութիւնն ալ սակաւագիւտ է այժմ, և դարս ինքնագովութեան դար է եղեր, և համեստութիւնը ծանծաղամիտներէն արհամարհուած նախապաշարման կարգն է դրուեր. և որովհետև հակառակ յաճախ վշտացուցիչ հրատարակութեանց ոչ ոք դեռ բարեսիրտ չը գտնուեցաւ որ խօսէր այս մասին, ուստի մեք ընդդէմ մեր կամաց այս անգամ կը համակերպիմք փոքր ինչ։

Բայց մեք դարձեալ չը պիտի յիշեմք այստեղ մանրամասնաբար այն ամեն նիւթական ու բարոյական օգուտները, զորս Ս. Երուսաղէմ իւր դպրոցներով և տպարանով արած է և կանէ ազգին, չը պիտի յիշեմք այն պարտաճանաչ գործիչները՝ զորս տուած է ազգին. չը պիտի յիշեմք այն օգուտները, որովք ըստ կարի մասնակցած է միշտ բարեգործական հաստատութեանց, աղքատ ուսումնարաններու,

ընկերութեանց, սովելոց, տնանկաց, Դամասկոսի և Եգիպտոսի ապստամբութեան ժամանակ փոխստականներուն և այլն. այլ միայն աչքի զարնող մի քանի թիւեր պիտի նշանակեմք, որ շօշափեն, տեսնեն ու հաւատան. բայց երանի՜ չը տեսնելով հաւատացողներուն, որ հաւատարիմին ու անհաւատարիմին մէջ տարբերութիւն լինէր։

Ս. Երուսաղէմ Պօլսոյ արուարձանի, Լուսկիւտարին մէջ մի փոքրիկ շինութիւն ունէր՝ Վանք անունով, ուր հիւանդ Միաբանք օդափոխութեան կը գային. 1838-ին Ազգը վճռաջարկէ, որ այդ շինութիւնը իւր ընդարձակ գետինով արուի Ազգին՝ ճեմարանի համար. Միաբանութիւնը կը յանձնէ զայն, առանց փոխարինի, շէնքը կը մեծացնեն և նորա ծախքը Ս. Երուսաղէմի Միաբանութէնեն կը պահանջեն և կառնեն . . . . 300,000 ղուռուշ.

Կը պահանջեն որ յօգուտ այդ ազգային ճեմարանին վանքը տարեկան տուրք տայ . . . . . 120,000 „

Միաբանութիւնը կընդունի և մինչև 1861 թիւը կը վճարէ . . 2,760,000 „

Նոյն ժամանակներն կը պահանջեն ազգային այլևայլ պիտոյից համար և կըստանան . . . . . 1,000,000 „

1835 թիւէն պատրիարքարանի տուրք

կը վճարուի 18,000 ղուռուշ մինչև
1875 . . . . . 72,000 „
1850—65, Սամաթիոյ և Միջագիւղի
դպրոցաց 3000-ական ղշ. ամսական 90,000 „
Գումարն. . 4,222,000 „

առանց յիշելու տեղւոյն և նախկին շինութեան արժէքը. առանց յիշելու դեռ ուրիշ թիւեր, որովք վանքը Ազգին 40 տարուան մէջ գրեթէ 7 միլիոն ղուռուշի զուտ դրամական օգնութիւն արած է։ Մեք զայս միայն գրինք այստեղ այն պատճառաւ, որ սա մի անանկ յայտնի պատմական իրողութիւն է, որ շատ գիտցողներ և անձամբ ճանաչողներ կան այսօր կենդանի, չենք յիշեր ծածուկ օգնութիւնները ակնածական զգուշութեամբ։

Ասկացող, խորհող և իմաստասիրողի համար այսքանը բաւական է. միայն կը ցանկայինք, որ եթէ արդարութեան և պարտաճանաչութեան զգացում կայ, հարկ է խորհիլ, որ ինչպէս եղած ատեն Ազգին կարևոր դէպքերուն մէջ Մխիթարեանները օգնած է Ազգին, նոյնպէս ալ վանքին կարօտութեան ժամանակ՝ Ազգը պարտական է փութալ օգնութեան։

Ը.

Ս. ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՄԻԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ ԻՆՉՈ՞Ւ ՀԱՇԻՒ ՉԸ ՑԱ

Այս հարցման կարճ խօսքով կը պատասխանեմք. — Ս. Երուսաղէմի Միաբանութիւնը օրէնքով պահանջուած օրէն է վէր է՝ որ հաշիւը պուած է և նը պայ ամ ոչ անկ է. և այս հանգանակութեան թոյլտուութիւնն ալ հաշիւ տուած լինելուն հետևանքն է։

Հաշիւ տալու մասին մի զարմանալի պահանջ կայ հրապարակի և ժողովրդեան մէջ։ Այս ալ հակառակորդաց թելադրութեամբ մուտ գտած, տեսակ մի նորութիւն դարձած է. ամենուն բերանին մէջ խօսքի նիւթ եղած, դիտցող չդիտցող հաշիւ կը պահանջէ, կարծես հաշիւ տուող մը դատապարտուած է ամեն մարդու հաշիւ տալ.— ի՞նչ ապօրինի պահանջ է այս։ Անաւանդ ասանկ մի Ազգային մեծ տան մասին, ինչպէս է Ս. Երուսաղէմը, որոյ պատիւն ու վարկը ամբողջ Ազգին կը վերաբերի, ներելի չէ, որ նա իւր հաշիւն հրապարակ հանէ. մինչև անդամ այս պարտուց ձայնը այսչափ հռչակուելն ալ Ազգին պատուոյն և Ս. Երուսաղէմի վարկին մեծապէս վնասակար է... թող լուրջ խորհին կարծեցեալ աղգասէրները և շուտ կըմբռնեն։

Ըստ օրինի մի Հաղուագոս մարդին կը տայ իւր հաշիւը Հասարակութեանն Ճանչցուած Վարահութեան արժանի մի փնտող մարդոյ, և նա հասարակութեան կը յայտնէ քննած ընդունած և հաստատած լինելը. հասարակութիւնն ալ պարտաւոր է վստահութեամբ հաւատալ։—Երբ Ս. Երուսաղէմի Միաբանութիւնն իւր հաշիւն ո՞ւմ տալու էր.—Հարկաւ իւր գանուած երկրին ազգային գործերը տնօրինող, Ազգէն ընտրուած, ազգային ձեռնհաս Իշխանութեան,—Ազգային Վարչութեան։—Միաբանութիւնը տուած է և կը տայ իւր հաշիւները Ազգային Վարչութեան, ցորչափ նա օրինաւորապէս Ազգէն ընտրուած կլինի, և նա իւր ընդունած և հաստատած լինելը հրատարակած է ի գիտութիւն հասարակութեան։ Ի՞նչ է ուրեմն այս ապօրինի հաշուեպահանջութեան ընդհանուր աղաղակները։ Բաց յայտնէ, ես և իմ ընկեր Գ. Ս. Սահակ Վարդապետ „Մեղուի“ և „Արձագանքի“ մէջ ալ բաւականէն աւելի հրատարակած եմք, եղած հարցմանց և ընդդիմախօսութեանց պատասխանած և խնդիրը լուսաբանած եմք, սակայն զանոնք կարդացող և չը կարդացող՝ դարձեալ միևնոյն խօսքերով ու հարցերով կ՚ողջունեն զմեզ. պարտաւորուած եմք ամեն մարդու զատ զատ կրկնել մի և նոյն բաները. չը կարդացանք գնացած տեղերնիս մի բաղմութիւն մէկտեղ

հաւաքել, որ մէկ անգամէն ձեռքերնիս եղած վկայութիւններով հաստատէինք և բացատրէինք ամէն բան։

Շնորհակալութեամբ կը յիշեմ այստեղ Պետերբուրգի մէջ վսեմ. Կարապետ Աղա Եղեանցի, Մոսկուայի մէջ վսեմ. Յ. Ս. Յովհաննէսեանցի և Ամբ. Տ. Յակոբ Աւագ Քահանայ Սուրէնեանցի, Նախիջևանի մէջ Մեծ. Գրիգոր Աղա Սալթիքեանցի փոյթն ու բարեսէր ջանքերը ի մասին ժողովուրդն ի միասին մէկտեղ հաւաքելու և իրենց հարցասիրութիւնը գոհացնելու, բայց հնար չեղաւ, կարծես խօսք մէկ արած միշտ գտնուեցան 10—7—6 հոգիներ միայն յաճախակի պատճառ կը բերեն հանգանակութեանց տարապայման յաճախելէն ձանձրացած լինելնին։

Հշմարիտ է, որ վերջին տարիներս ժամանակ ձախող պարագաներէն ստիպեալ՝ ընդհանուր և մասնաւոր, կարևոր և անկարևոր հանգանակութիւններ եղած են. և որ ցաւալին է, դոցա մէջ խարէութիւններ ալ գործածուած են, որով ժողովուրդը ձանձրացած և զզուած՝ կը դժկամակի օգնել այս ընդհանուր և կարևոր գործին։ Բայց դիտել պէտք է, որ այդ գանգատի պատճառ տուող ժողովարարները Ս. Երուսաղէմէն չէին, նոքա իրենց անունով իրենց համար եկած՝ և բուն նպատակէն դուրս քարոզած էին. ժողովուրդն ալ առանց նոցա

գործն ու վկայութիւնը քննելու, համակրած՝ միսի-թարած՝ ճամբած է, նոքա իրենց յայտնած նպա-տակին և խոստման հաւատարիմ չեն գտնուած. Ա. Երուսաղէմն ի՞նչ յանցանք ունի այստեղ, որ ոչ թէ ապագայ անելիքներու խոստումով մի նոր բան պահանջելու եկած է,— ո՛չ. այլ արդէն արածին արդիւնքը ներկայացնելով՝ քու մոռացած պարտա-կանութիւնդ քեզ յիշեցնելու և իւր իրաւունքը խնդրելու եկած է, որ իւր վկայութիւնները քննել ինք կառաջարկէ.—ինչո՞ւ կոյժը կոտրողն ու ջուրը բերող միևնոյն կարգի կը դասես։—Մասնաւոր մի անձ իւր անունով խաբէութիւն է գործեր, ի՞նչ յարաբերութիւն այս ընդհանուր գործին հետ, քանի որ ամբողջ Միաբանութիւնը, Երեսփոխա-նական ընդհանուր ժողովը, Ազգային Պարչութիւնը, Յանձնաժողովը իրենց նախագահներով, Պ. Հափաս Կաթողիկոսը, Ս. Սինոդը և վերջապէս՝ Տորին ողորմած Կայսեր Արքրագոյն բարեհաճութեամբ թոյլատու-թիւնը կը հաստատեն, որ այս գործն ըստ ամենայն մա-սանց քննուած՝ հաստատուած, հսկողութեան առնո-ւած և երաշխաւորուած է։ Արդ մեք, որ այսքան վաւե-րական հաստատութիւններ ունիմք ձեռքերնիս, մեք որ մեր հանգանակած դրամներն միշտ երկիւղած հաւատարմութեամբ տեղը կը ղրկենք, առանց մո-տերնիս պահելու, և անմիջապէս կը հրատարակեմք

մեք որ լոկ առաքուած անձնագիր պաշտօնեաներ եմք Ազգին և ծնողասէր զաւակներ Ս. Էջմածնոյն, ամօթ կզգամք երբ կը բաղդատուիմք շահամոլ խաբեբաներու հետ. մի և նոյն ժամանակ արդար ցասում և զարմանք կզգամք, որ այս անհաւասար բաղդատութիւնն անողներն ի՞նչպէս չեն մնացեր, որ մեզ ղրկողներուն ալ պատիւ չէ այդ և նոյն իսկ իրենց ալ նախատինք է, որ թէ՛ իրենց դատողութեան պակասութիւնը կը յայտնեն և թէ իրենց ընդհանուրի պատիւը մասնաւոր ինքնագլուխ մի անձի կը հաւասարեն։

Ուստի այս ամենուն միանգամ ընդ միշտ պատասխանած և դայթակղութեանց վերջ տուած լինելու համար կը վերակրկնեմք.

Ա) Ս. Երուսաղէմի Միաբանութիւնը իւր հաշիւը տուած է Ազգ. Վարչութեան, ժամանակին յայտնած է վանքին վիճակն ու դրութիւնը և դարմանը խնդրած է. վարչութիւն ալ իւր առօրեայ տագնապներէն հաղիւ աչք բացած՝ ուշադրութիւն դարձուցած, քննած և հասու եղած է պարտուց հարկաւորապէս գոյանալուն։

Բ) Ամեն. Տ. Ներսէս Ս. Պատրիարք Հայր Նախագահութեամբ պատուաւոր և վստահութեան արժանի անձերէ պարտուց բարձման Յանձնաժողովը կազմած և հաստատած է, նաև իւր քննու-

թիւններն ու դիտողութիւնները արած, բացատրութիւններն ընդունած և կարևոր կարգադրութիւններն արած է։

Գ) Այսով ալ չը բաւականանալով՝ գործը թէ աւելի անցեալէն և բուն տեղւոյն վերայ քննելու և թէ ապագայ ապահովութեան մասին տեսչութիւն անելու համար, յատուկ լիազօր պատուիրակ ղրկած է Ս. Երուսաղէմ։ Նա ևս իւր քննութիւններն մանրակրկիտ խուզարկութեամբ, ամենայն խստութեամբ և անաչառ արդարութեամբ կատարած իւր տեղեկագիրն հանդերձ մանրամասն բացատրութեամբ մատուցած է Ընդհանուր Ժողովոյն, որ և լիովին հասկացած և համոզուած լինելով՝ քննիչը վարձատրած է շնորհակալութեան քարէով և փութացած է կարգադրութիւնները վճռել և իւր արձանագրութիւններն հրատարակած է։

Դ) Որոշուած է Տաճկաստանէն տարեկան 3 լուսուշի տուրք հաւաքել և այս առթիւ հրահանգներ՝ տոմսակներ տպուած են մեծ քանակութեամբ և մեծ ծախքով։ Ամեն. Տ. Ներսէս Ս. Պատրիարք Հայրն իւր շրջաբերական կոնդակաւ ծանուցած է ժողովրդեանն (Տես յաւելուած Ա)։

Այն կարգադրութիւնը Ռուսաստանի Ազգայնոց մէջ ալ հաստատել խորհուած և աշխատուած է, բայց Ազգիս Ս. Էջմիածնայ Հայրապետը գոր-

ծոյն ստիպողական կարևորութիւնը ի նկատի ունե-
նալով և այդ կարգադրութեան հաստատութիւնը
երկար ժամանակի կարօտ լինելը դիտնալով, գործի
փութով օգնութեան հասնելու համար կամեցած և
հրամայած է որ առ այժմ նուիրակներով հաւա-
քուին լինի, որ մասնաւոր մեծամեծ գումարներու
նուիրաբերութեամբ պարտքը զեղջուի:

է) Այսչափ գործողութենէ յետոյ Միաբանու-
թիւնը զիս և զեր. Սահակ վարդապետն ընտրելով
յանձնեց մեզ օրհնութեան և վկայական կոնդակին
հետ մի մի Մատեան, որոց սկիզբը արձանագրուած
է Ամեն. Տ. Եսայի Ս. Պատրիարք՝ օր յայտա-
բարութիւնը (տես յաւել Ա), նոյնպէս և Ամեն.
Տ. Ներսէս Արբազան Պատրիարք՝ օր ինքնագիր
հաստատութիւնը և յորդորը առ ժողովուրդն և
Յանձնաժողովոյ հաստատութիւնը (տես յաւել. Գ):
Մատեանները ժապաւինելով կնքեց Պատրիարքա-
բանը և Յանձնաժողովը, նոյնպէս Ս. Էջմիածին
գալով կնքեց և հաստատեց նաև Ս. Սինոդը, վիճա-
կաց Առաջնորդաց և Ազգաւոր կառավարութեանց
ղրկեց իւր կարգադրութիւններն ու հրամանները:

ը) Վեհափառ Հայրապետը շնորհեց իւր օրհ-
նութեան կոնդակը. (տես յաւել. Դ): Իսկ մեք ըն-
դունելով այս ամեն վաւերական հաստատութիւն-
ներն ու Վեհափառ Հայրապետի օրհնութիւնը,

Ոսիթարութիւնը և յուսալիր քաջալերութիւնները ընկնեցանք լի յուսով։

է) Մեր պաշտօնի սկսած վայրկենին յանակընալս հրապարակի մէջ երևեցան հակառակորդներու ուտ ու սխալ՝ միայն գայթակղեցնելու համար նենգութեամբ հրատարակուած յօդուածներ. որոց պատասխանեցինք ամենայն պարզութեամբ և համեստութեամբ։

ը) Թշնամիք Տէրութեանց կասկածն ալ յարուցին, բայց Աստուած նոցա թշնամութիւնը յօգտակարն առաջնորդեց. քանզի Տէրութիւնք ևս քննելով ստուգեցին գործոյն կարևորութիւնն ու ստիպողականութիւնը և մեք ընդունեցինք Ռուսաց ողորմած Կայսեր Ռարձրագոյն բարեհաճութեամբ շնորհած արտօնութիւնը, որ հրատարակեցաւ Ռուսաց և Հայոց լրագիրներով. նոյնպէս Տաճկաստանի համար օսմանեան բարեխնամ կայսեր թոյլատուութիւնը։

Ը) Գործոյն ստիպողականութիւնը բռնադատեց, որ Ս. Երուսաղէմի Պատրիարք Աստուն Տ. Նշանի Սրբազան Հայրը անցեալ տարի Կ. Պոլիս եկաւ և տարին կը մնայ, որ տաժանելի նեղութեամբ կաշխատի Աստուն Տ. Ներսէս Ս. Պատրիարք Հօր, Պարզութեան և Յանձնաժողովոյն հետ, որպէս զի շուտով այս պարտուց վերջ տալու հնարքը գտնեն.

բայց միշտ անագորոյն արգելքներ չեն պակսիր, և օրէ օր պարտքը կաւելնայ։

Ժ) Այս ամեն դժուարութեանց ու տառապանաց վերայ աւելցան և ներքին երկու թշնամիներ ալ։ Վարչութիւնն ու Յանձնաժողովը խառն նիստերով վերստին քննեցին այդ երկու ապաշնորհները և նոցա բերնին ու սրտին մէջ ուրիշ փաստ ու պատճառ չը գտնելով, բայց միայն իրենց միաբանակից արդիւնաւոր ընկերին Եր. Ղևոնդ վարդապետին բարի համբաւին և գործունէութեան դէմ նախանձ ու ատելութիւն. ուստի յետ երկար քննութեան, դատապարտելով մերժեցին զիրենք և երկու ընդարձակ յայտարարութեամբ յայտնեցին հասարակութեան նոցա խաբէութիւնն ու նենգութիւնը։ Այս երկու յայտարարութիւնք հրատարակուած են արդէն „Մասիսի“ և „Արձագանքի“ մէջ (տես յաւել. Ե, Օ)։

Ժա) Բաց յայսցանէ, Ամեն. Տ. Գերսէս Ս. Պատրիարք Հայր այս վերահաստատութենէն յետոյ այս տարուան յունվար ամսոյ մէջ ընդունեցինք Նորին Արքաղնութեան մի յանձնարարական յորդորն առ ժողովուրդն (տես յաւել. Ե)։ Այս ամենը, մանաւանդ այս վերջինս հզօր փաստեր են մեր բոլոր ասածներուն ճշմարտութեան, որ կարծեաց և կասկածի տեղիք թեացած չէ. հաւատարմութիւն,

խստահութիւն և համակրութիւն կարող են նկատել այս ամենը։

Մեր այս ամեն համրած կոնդակներն ու գրութիւնները մի յաւելուածով կը դնեմք այստեղ կարգաւ, որպէս զի հետաքրքիր հարցասէրք ամբողջը մէկտեղ տեսնելով՝ համոզուին ու գոհ լինին, որ իրենց հարցերը լուծուած են արդէն. միայն իրենց առատաձեռն օգնութիւնը մնացած է, որուն յուսով կսպասեմք։

Կը դնեմք այստեղ նաև պարտուց մի համառօտ ցուցակ՝ հանելով Յանձնաժողովոյ քննած հաշուետումարէն, և կը յաւելումք կարևոր ծառայութիւններ, յորմէ պարզ կը տեսնուի պարտուց սկիզբն ու յառաջանալը և այժմեան վիճակը։

Ցուցակ Ս. Երուսաղէմի պատրիարքութեան յոլովքական ծծման, Սկսեալ 1860 թ. Մայիս 1-էն մինչև 1882 թ. ապրիլ 30.

1860	Մայիս 1-էն, 1861 Ապրիլ 30, պարտք եղած է	Ղուռուշ 29,053
61	Մայիս 1-էն 62, Ապրիլ 30 աւելցած է	93,534

		Դուռուլ
1862	Ապրիլ 30-ին եղած է	122,587
62	Մայիս 1-էն, 63 Ապրիլ 30, պակսած է	55,735
63	Ապրիլ 30-ին մնացած է . . .	66,852
63	Մայիս 1-էն, 64 Ապրիլ 30 աւելցած է	31,120
64	Ապրիլ 30-ին, եղած է. . . .	97,972
64	Մայիս 1-էն, 65 Ապրիլ 30 աւելցած է	306,560
[1]) 65	Ապրիլ 30-ին եղած է	404.540
65	Մայիս 1-էն, 66 Ապրիլ 30 աւելցած է	421,598
66	Ապրիլ 30-ին եղած է	826,138
[2]) 66	Մայիս 1-էն 67, Ապրիլ 30 աւելցած է	314,619
67	Ապրիլ 30-ին եղած է	.1,140,757
67	Մայիս 1-էն 68, Ապրիլ 30 աւելցած է	255,522
[3]) 68	Ապրիլ 30-ին եղած է	.1,396,279

[1]) Մինչեւ 65 թիւն անիշխանութիւն էր, այդ թուոյն նստաւ 8. Եսայի Ս. Պատրիարք Հայրը, բոլոր ծախքերն պարտքով եղաւ Այդ թիւին պատահեցաւ Պօլսոյ քոլերան, այդ թիւին եղաւ Ս. Երուսաղէմի կալուածոց նորոգութիւնը, որ մինչեւ 69 թիւը տեւեց։

[2]) Ճոպպէի կալուածոց նորոգութիւնը կսկսի. բայց հետեւեալ տարին այն կողմերը հիւանդութիւնն սկսելով, փոխանակ առաւել օգտի, նախկին վարձքերն ալ պակսեցան։

[3]) Սրբազանին յեղիպտոս եղած մեկնումն է։

1868	Մայիս 1-էն 69, Ապրիլ 30 պակասած է	Դուռուշ փոխ. 97,909 —
69	Ապրիլ 30-ին հնացած է . .	1,298,370 —
69	Մայիս 1-էն 70, Ապրիլ 30 պակասած է	100,919 —
70	Ապրիլ 30-ին հնացած է . .	1,197,451 —
70	Մայիս 1-էն 71, Ապրիլ 30 աւելացած է	31,885 —
71	Մայիս 1-էն 72. Ապրիլ 30 աւելացած է	66,315 —
71	Ապրիլ 30-ին եղած է . . .	1,229,336 —
72	Ապրիլ 30-ին եղած է. . .	1,295,651 —
[1]) 72	Մայիս 1-էն 73. Ապրիլ 30 պակասած է	116,368 02
73	Ապրիլ 30-ին հնացած է . .	1,179,282 38
73	Մայիս 1-էն 74, Ապրիլ 30 պակասած է	41,692 03
74	Ապրիլ 30-ին հնացած է . .	1,137,590 35
74	Մայիս 1-էն 75, Ապրիլ 30 աւելացած է	164,577 18
75	Ապրիլ 30-ին եղած է . . .	1,302,168 13
[2]) 75	Մայիս 1-էն 76, Ապրիլ 30 աւելացած է.	382,457 17

[1]) Գեր. Երեմիա Սրբազանին Նուիրակութեան ժամանակներն է։

[2]) Պուլղարաց եւ այլոց ապստամբութեան սկսիլն է, յորմէ սկսաւ դրամոց եւ արժեթղթոց անկումը, թանգութիւնը. այս ապստամբութիւնը չը վերջացած՝ յաջորդեց պատերազմը եւ հարուածը կատարեալ եղաւ, որոյ հետեւանքը դեռ կը կրեմք։

		Ղուրուշ	Փող
1876	Ապրիլ 30-ին եղած է . . .	1,684,625	30
76	Մայիս 1-էն 77, Ապրիլ 30 աւելցած է	425,355	33
77	Ապրիլ 30-ին եղած է . . .	2,109,981	23
77	Մայիս 1-էն 78, Ապրիլ 30 աւելցած է	447,436	39
78	Ապրիլ 30-ին եղած է . . .	2,557,418	22
78	Մայիս 1-էն 79, Ապրիլ 30 աւելցած է.	322,742	22
79	Ապրիլ 30-ին եղած է . . .	2,880,161	04
79	Մայիս 1-էն 80, Ապրիլ 30 աւելցած է.	61,819	37
80	Ապրիլ 30-ին եղած է . . .	2,941,981	01
80	Մայիս 1-էն 81, Ապրիլ 30 աւելցած է.	295,363	08
81	Ապրիլ 30-ին եղած է . . .	3,237,344	09
81	Մայիս 1-էն 82, Ապրիլ 30 աւելցած է	264,707	34
82	Ապրիլ 30-ին եղած է պարտուց համագումարը ողջ	3,502,052	03

Ահա մէկ ու կէս տարին անցաւ, որ մեք հանդանակութեան սկսած ենք, բայց տակաւին մէկ տարուան տոկոսին կէսն ալ չը հաւաքուեցաւ. պ նկատելու է, որ մանէթը փոխուելով ոսկի

գրեթէ կէս մասը կը պակսի։ Այսպէս երկարելով ահա մի պատճառ ևս պարտուց աւելնալուն։

Այս մեր տուած համառօտ, պարզ և խորհրդածութեան արժանի տեղեկութեանց վերայ եթէ գտնուին մարդիկ, որ տակաւին պնդեն թէ „պէտք չէր Միաբանութիւնը պարտք անէր“ և այլն—, այն ատեն եթէ կլցանք շօշափել այդպիսեաց ոգին, արժանաւոր պատասխանը կը տամք. վասն զի „Սիոնի սիրոյն համար չը պիտի լռեմ և Երուսաղէմի համար վատ խօսողներուն չը պիտի ներեմ, մինչև որ նորա արդարութիւնը լոյսի պէս ծագի և նորա ազատութիւնը փայլակի պէս ճառագայթէ“։

Մեր այս աշխատութեան պատճառն այն է, որ նախ՝ իրօք տեղեկութիւն չունեցող և անկեղծ մտօք հետաքրքրուող բարեսիրտ ազգայնոց հարցասիրութիւնը գոհացնեմք, որք կը ցանկան օգնել, բայց և կուզեն գիտութեամբ ու համոզմամբ օգնել. իսկ լոկ խօսող երևելու համար անսպառ առարկութեամբ և անտեղի հարցերով ժամավաճառներուն խօսք և փաստ, պատճառ և ապացոյց օգուտ չաներ. երկրորդ՝ կամեցանք ցոյց տալ հասարակութեան, մանաւանդ հակառակ խօսող և գրող մասին, որ այսքան դղրդոց հանել, այսքան գայթակղութիւն սերմանել, այսքան սիրտ ու պատիւ վիրաւորել չէր արժեր։

Ազգային արժանապատուութիւնը ճանչցող ազնուութիւն ունեցող մարդը պիտի գիտնար այս...

Գրքիս վերջը գրուած առանձին ՝աշուեցոյցն ու ՝աշուեկշիռը յայտնի ապացոյց են վերոգրեալ խօսքերուն, որն որ Ընդհանուր Ժողովոյ առեն գրութենէն հանած եմք։

Ժողովուրդ ՝այոց.

Կը յուսամ, որ այս ամեն պարզ տեղեկութիւններով իմացար որ Ս. Երուսաղէմի մէջ ՝այոց հաստատութեանց ապահովութիւնը քեզմէ և քու բարեպաշտ սրտիդ նուէրէն կախումն ունի. հասկացար, որ Ս. Առաքելոց ժամանակէն այսպէս կարգադրուած և ցայսօր յարատեւած է, քու բարեպաշտ նախնիքդ սրբութեամբ պահպանելով մինչև քեզ հասուցած են այս թանկագին աւանդը. նոքա պարտական չեն մնացած, ջանա՛ որ դուն ալ չը մնաս։

Ս. Երուսաղէմ ամեն քրիստոնէի հոգևոր տունն ու հայրենիքն է. Քրիստոսի Տնօրէնութեանց սրբավայրն ու մեր փրկութեան հանդիսարանն է. զայն պայծառ պահելը մեր սիրոյն, երախտագիտութեան և շնորհակալութեան ապացոյցն է. որչափ հեռանամք անկէ, այնչափ ալ կը զրկուիմք բազմաթիւ

հոգևոր ու մարմնաւոր, բարոյական ու նիւթական բարիքէ և օրհնութիւններէ. կը զրկեմք Ազգը իւր փառքէն ու պարծանքէն։

Ժողովուրդ Հայոց, չարին բարի և բարիին ալ չար ասելը մեծ մեղք և ծայրայեղ անբարոյականութիւն է, որ և Աստուծոյ վայրին արժանի։ Դու գիտես, որ Ս. Երուսաղէմի մէջ Ս. տեղեաց վրայ անխափան պաշտօն կատարող, քու ազգային սեպհականութիւններն ու իրաւունքները պահպանող անօգնական Միաբանութիւն մի կայ, որ ձեռքէն եկածը չէ խնայած, իւր պարտքն անթերի կատարած է, միամտութեամբ և սրտի անկեղծութեամբ Եկեղեցւոյ և Ազգին ծառայած է. — ինչո՞ւ չարերու և պարտազանցներու հետ կը դատես։

Միաբանութիւնը միշտ ազգասիրական գործի մէջ լինելով՝ ազգասիրական ոգւով կրթուած ըստ ժամանակին կրցածին չափ միշտ ազգին լաւութիւն և օգնութիւն արած է. և համեստութեամբ չէ ցանկացած որ ինքն լինի իւր անձին գովաբան, ես ալ արդէն մի թեթև ակնարկութիւն արած եմ և ոչ այլ ինչ։ Միաբանութիւնը մինչ ցարդ անձնագով լինելէ խորշած է, դեռ մի քիչ ժամանակ ալ պիտի համբերէ. տեսնելու համար թէ ո՞վ առաւել ազնիւ պիտի գտնուի անկեղծ ողջմտութեամբ խոստովանելու ճշմարտութիւնը, և թէ ո՞վ մինչև ի՞նչ աստիճան պիտի հասցնէ ապերախտութիւնը։

Բայց դու եթէ լուրջ խորհիս, ով ազնիւ ընթերցող, արդարութեան օրէնքով պարզ կը տեսնես, որ Ս. Երուսաղէմի Մխիթարեանութիւնը ուրիշ ոչինչ ալ արած չը լինի, սակայն բաւական է, որ իրեն յանձնուած այդ ազգային մեծ աւանդը անկորուստ պահպանելու համար անձը չէ խնայած. այնտեղ իւր բուն պարտքն ու պաշտօնն ալ այս էր, ուրիշ բան չէր պահանջուեր իրմէն, և սակայն նա ինքզինքը վարձկան ծառայ չը ճանչնար. նա գիտէ, որ ինքն առօրեայ մշակ կամ շահամոլ պաշտօնեայ չէ. նա գիտէ, որ ինք զաւակ է, տան տէր է, Ազգին անդամն է և ազգին օգտին նուիրուած, ուստի իւր աշխատասիրութեան առջև սահման չը դներ. այլ արած է և կանէ, ինչ որ կարող է։

Բայց այսօր իրմէ անկախ պատճառներով ճընշուած է դառն նեղութեան մէջ, կը թողնուս որ խպտառ վհատի, կը զրկուս գինքը իւր իրաւունքէն, այդպէս կը խրախուսես քու հաւատարիմ գործիչներդ կը մատնես գինքը դառն հառաչանաց. կը թողնուս որ Ս. Տեղեաց և Ազգային սեփականութեան վերայ վշտակիր խորհնացուցն աղիողորմ ողբերը յօրինելու դատապարտուի։

— Ո՛չ, ոչ, Հայոց բարեպաշտ ժողովուրդ, դու չես սիրեր անիրաւութիւնը, բայց խաբեբաներն ու

ապաշնորհները ամեն բան գէշ կողմէն ներկայացնելով մոլորեցուցին զքեզ և գայթակղեցուցին, ցաւալի է որ աշխարհի մէջ չարիք կան ու պիտի լինին միշտ, բայց նոցա չարութիւնը խեթան պէտք է լինի առաքինութեան և ոչ թէ խափան, անոնցմով աւելի պայծառ պէտք է փայլի բարին ու կատարեալը. իմաստուն եղիր ուրեմն, ճանչցիր շինողն ու կործանողը. մի՛ յաղթուիր չարէն, առաքինութեամբ յաղթէ չարին. սուտը ճշմարտէն որոշէ, զօրացիր և փառաւոր եղիր. մի՛ թողուր որ արդարութիւնն ու իրաւունքը ոտնակոխ լինի, և վատն ու անիրաւը իւր անօրէնութեան վերայ պարծի:

Ազնիւ ընթերցող, դու արդէն գիտես և ահա նորէն իմացար, որ այսօրուան Ս. Երուսաղէմի պարտքը նոր չէ. 1860 թուականէն սկսած՝ անակնկալ և անդիմադրելի պատճառներով ածած է, ամեն կողմէն եկամուտներուն պակսելովը հնար չէ եղած աւելի կանուխ վճարել, մի՛ թողուր որ աւելի ուշանայ և դժուարանայ:

Ժողովուրդ Հայոց, տոկոսաւոր պարտքը ապականիչ խոց է, Ազգային այգիին մէջ մտած է այդ աւերիչ խոցը. նախ զայն դուրս հանէ և ապա որ տեղէն և ինչպէս մտնելը փնտռէ և զգուշացիր, որ ուրիշ անգամ չը մտնէ:

Բայց դուն տեսար զայն այգիին մէջ. թողիր

այնտեղ, սկսաւ ծանր ծանր փնտռել նորա ո՞ր տեղէն մտնելը. գտաւ պատառուած խրամնելը, հասկացաւ, որ անակնկալ հեղեղի բռնութիւնը բացեր է զայն, զգացիր, որ հսկողները յանցանք չունին. այնու ամենայնիւ դեռ չէս փութար դուրս հանել. հակառակորդներուդ հետ խօսքի բռնուած չես նայիր, որ այդիւդ վայրկեան առ վայրկեան փճանալու վրայ է. արդէն քեզ խօսքի բռնողներուն նպատակն ալ այդ է. կուզեն, որ քու ամեն օգտակար բաներդ և ազգայնութեան նշաններդ ու նեցուկներդ փճացնեն, որպէս զի զքեզ իւրացնելը դիւրին լինի։ — Ա՜խ, ե՛րբ պիտի ճանչնաս դու այս որոգայթը և զգուշանաս...։

Ժողովո՛ւրդ Հայոց, խաբեցին զքեզ, որ Ս. Երուսաղէմի Միաբանութիւնը հաշիւ չը տար. խաբեցին, որ պարտք չունի. խաբեցին, որ զգուշութիւն չէ արած. բայց ահա կը տեսնես հաստատ ապացոյցներով, որ խօսածնին սուտ և սխալ էր. տեսար, որ ամեն քննութիւն և զգուշութիւն լինելէն յետոյ այս հանգանակութեան կարգադրութիւնն եղած է, և քու առատանուէր օգնութեանդ ու սիրոյդ յանձնուած է. մի՛ ունայնացներ այսքան հոգ, աշխատութիւն և ծախքեր, — վասն զի յաջողելու համար տակաւին ծախքեր կը լինին. — քու ձեռքդ է այժմ շուտով վերջացնելը.

քիչ մը սէր, կարեկցութիւն և աւելորդէն մի քիչ ողորմութիւն ունեցիր, և ահա ամենայն ինչ յաջողութեամբ կը վերջանայ. Ս. Երուսաղէմ պարտքէն կազատի, նախնեաց մեզ յանձնած հաստատութիւնք ալ կը պահպանուին, հրապարակէն այս գայթակղութիւնք ու անարգութիւնք ալ կը վերնան և խաղաղութիւնը կը տիրէ:

Մաղթելով որ Աստուածն շնորհաց սիրոյ և խաղաղութեան լինի միշտ ձեզ հետ, ճնամ յառաջադիմութեան Ազգիս անձնուէր և նորա իւրաքանչիւր անհատին բարօրութիւն ցանկացող

Միաբան Ս. Երուսաղէմի եւ Նուիրակ Ռուսաստանի·

ՄԱՄՐԻԷ Վ. ՄԱՐԿՈՍԵԱՆ·

15 Փետրուարի 1883,
Է՛նոր Նոխիջևան·

ՅԱՒԵԼՈՒԱԾ

ԳԼՈՒԽՔԻՆ ԱՌԱՋԻՆ.



Ներսէս Ծառայ Քրիստոսի եւ շնորհիւ Ա. Հոգ-
ոյն արքեպիսկոպոս եւ Պատրիարք Հայոց Ի. Պոլ-
սոյ առ ամենայն եկեղեցիս որ ի մայրաքաղաքիս եւ
յամենայն հայաբնակ գաւառս օսմանեան պետու-
թեան եւ Հայաստան աշխարհի։

Առ Գերապատիւ Առաջնորդս և Վանահարս, Եր-
իանապատիւ Առաջնորդական Տեղապահս, Բարե-

խրատ Քարոզիչս, և Սրբակրօն Քահանայս, Գաւառական Վարչութիւնս, Քաղաքական Ժողովս և Թաղական Խորհուրդս ողջոյն և սէր ի յոյսն բնաւից, յերկնային խաղաղութիւն, ի զօրագլուխն հաւատոյ և յառաջնորդն սիրոյ, ի Տէր Յիսուս Քրիստոս։

Եւ ընդ Աստուածապարգեւ Տիրաւանդ սրբոյ ողջունիս և օրհնութեանս յայտ առնեմք համայն մերազնէից, զի ըստ որում արդէն իմացած էք թէ Սուրբ Երուսաղէմայ Միաբանութիւնը մեծագումար պարտքի տակ ինկած է, և այս առթիւ Սուրբ Աթոռոյն նեղութիւնն այն կէտին հասած էր, որ Ազգային Կեդրոնական Վարչութիւնն ստիպուեցաւ ի նկատի առնուլ այս ցաւալի վիճակն, և Ազգային Ընդհանուր Ժողովոյ որոշմամբ յատուկ Յանձնաժողով մը կազմեց Ազգին պատուաւոր վաճառականներէն և երեւելի անձերէն, որոց անուանքն ահաւասիկ.

Մեծ.	Աստուածատուր Էֆէնտի Ջունդ,		Ատրանդէր.
Վսեմ.	Յակոբ »	Նորատունկեան,	Գանձակեր.
Մեծ.	Յովհաննէս »	Կիւմշեան,	Ատրանդէր.
»	Սենեքերիմ »	Մանուկեան,	Ընդամ.
»	Սերովբէ »	Կիւլպէնկեան,	»
Վսեմ.	Սերվիչէն »		»

Այն Յանձնաժողովն ընդ մեր նախագահութեամբ քանի՛ քանի՛ նիստեր ըրաւ, Սուրբ Երուսաղէմայ վանուց հաշիւներն և պարտքերը քննեց, և այդ պարտքը բառնալու և այլ ևս պարտք չգոյանալու համար պէտք եղած միջոցները մտածեց, և որոշեց որ ընդհանուր Ազգէն կամաւոր նուէր ժողվելով սոյն պարտքը ջնջուի՛ և Սուրբ Երուսաղէմայ Աթոռը Եկեղեցւոյս պայծառութեան և Ազգիս յառաջադիմութեան մեծագէս նպաստելու կարող վիճակի մէջ դրուի։ Եւ ահա այս նպատակաւ՝ սահմանեցինք յետագայ պայմաններով Օրհնեալ Ազգիս օգնութեանը դիմել։

'Նախ՝ իւրաքանչիւր ՀԱՅ անհատէ տարին երեքական արծաթ դահեկան նուէր հաւաքել։

Երկրորդ՝ ի հաւատարմութիւն այս հաւաքման և նուիրատուաց յատուկ բուն՝ աւորտոմակներ տպել տալ, և այդ տոմսակներն ըստ պատշաճի և ըստ հաւանական թուոյ ժողովրդեան ամեն կողմ Առաջնորդաց խրկել։

Երրորդ՝ իւրաքանչիւր Առաջնորդ իւր նախագահութեան ներքեւ Մասնաժողով մը կազմել, որ պաշտօն ունենայ խրկուած տոմսակները թեմական ամեն քաղաք, գիւղ և աւան ցրուելու, յորդորելու, հսկելու և հաւաքեալ դրամը Կեդրոնական

Յանձնաժողովոյն տրամադրութեան ներքեւ դնելու ըստ պայմանագրութեան հետեւեալ յօդուածոյ։

ՀՈՐՐՈՐԴ՝ իւրաքանչիւր թաղերէն հաւաքեալ գումարին հարիւրին տասը նոյն թաղի խորհուրդին պիտի մնայ, տեղւոյն Դպրոցին, Եկեղեցւոյն պիտոյից գործածուելու համար։

ԵՐԻՆԳԵՐՈՐԴ՝ Դահանայք պարտաւոր են Կեդրոնական Յանձնաժողովոյ տալիք հրահանգին համաձայն իրենց ծուխերն եղող ընտանեաց, թէ արու և թէ էգ, բոլոր անդամոց ցանկը պատրաստել և իրենց ստորագրութեան ներքեւ յանձնել Թաղական Խորհրդոց, և սոյն ցանկին հաշւոյն համեմատ իրենց ծուխերէն հանգանակեալ գումարին հարիւրին հինգը պիտի ստանան։ Հետեւաբար՝ հանգանակեալ գումարին մնացորդ հարիւրին ութսունեւհինգը Սուրբ Երուսաղէմայ պարտուց բարձման Կեդրոնական Յանձնաժողովոյն պիտի յանձնուի։

ՎԵՑԵՐՈՐԴ՝ այս հաւաքումը երեք տարի միայն պիտի տեւէ։

ԵՐԴ՝ Կեդրոնական Վարչութիւնը սոյն անօրինութիւններն ընդունելով, որոշեց յատուկ շրջաբերական Կոնդակաւս ծանուցանել բոլոր Առաջնորդաց, Առաջնորդական Տեղապահաց և Փոխանորդաց ի գործադրութիւն պարտ ու պատշաճիցն։

Ուստի սոյն շրջաբերական Կոնդակս յղելով կը հրաւիրեմք զՁեզ, ըստ որոշման Կեդրոնական Յանձնաժողովոյն, որ անմիջապէս Ձեր Նախագահութեան ներքեւ Մասնաժողով մի կազմէք, և Կոնդակիս հետ Կեդրոնական Յանձնաժողովոյ կողմանէ յղեալ և Երուսաղիմայ Ընթոռոյ ու Կեդրոնական Յանձնաժողովոյն կնիքներով վաւերացեալ տոմսակները և ասոնց հետ հրահանգ, շրջաբերական նամակ Յանձնաժողովոյ, ստացագիր, տանց ցուցակ և այլն, Ձեր վիճակին ամեն թեմերը ցրուելու, ժողովուրդին յորդոր կարդալու և մարդ-գլուխ, ըստ յանձնարարութեան Կեդրոնական Յանձնաժողովոյ, երեքական արծաթ դահեկան հաւաքելու հոգ տանիք։

Նոյնպէս հաւաքեալ դրամէն՝ ինչպէս որ Հորորդ և հինգերորդ յօդուածներով յիշատակուած է, հարիւրին տասը տեղւոյն Եկեղեցւոյն և դպրոցին համար և հարիւրին հինգը Պահանայից համար հանելէն ետեւ, մնացածն ամբողջապէս Կեդրոնական Յանձնաժողովոյ տրամադրութեան ներքեւ դնելով, նորա այս մասին տալիք հրահանգին համեմատ պէտք է շարժիք։

Որպէս զի սոյն հաւաքումն աւելի ճիշդ և կանոնաւոր կերպով կատարուի, Կեդրոնական Յանձնաժողովը, տոմսակներու հետ, կը յղէ առ Ձեզ հրահանգ մը, յորում մանրամասնօրէն նշանակեալ

են հաւաքման եղանակին բոլոր պարագաները։ Կեդրոնական Յանձնաժողովն, ի պահանջել հարկին, ասկից զատ ուրիշ հրահանգներ և յանձնարարութիւններ ալ պիտի ուղղէ առ Ձեզ։

Հարկ կը համարիմք ի ծանօթութիւն զայս եւս յաւելուլ թէ սոյն հանգանակութիւնն ոչ միայն Օսմանեան Պետութեան Հայոց, այլ և միւս Տէրութեանց ներքեւ գտնուող մեր բոլոր ազգայնոց վրայ տարածուած է, և այս մասին Սուրբ Էջմիածնի ամենայն Հայոց Կ. Եհափառ Կաթուղիկոսէն ալ խնդրուած է շնորհք ընել Ռուսաստանի, Պարսկաստանի և Հնդկաստանի մեր ազգայիններէն պէտք եղած օգնութիւններն հանգանակութեամբ ձեռք բերելու համար։

Աւելորդ է յաւելուլ թէ Սուրբ Երուսաղիմայ հաստատութիւնք Ազգին վերաբերելով անոնց մշտատեւ պայծառութեան համար հոգ տանիլ ամեն Հայ Քրիստոնէին պարտքն է։ Մեր պատուական ժողովուրդը պէտք է յիշէ թէ Սուրբ Երուսաղիմայ մէջ սկսեալ յաւուրց անտի մեր հարց՝ աշխատած է մեր օրհնեալ Ազգը և պէտք է որ միշտ աշխատի, որ միւս Քրիստոնեայ ազգաց մէջ թէ մեր Աթոռը; թէ Մխիթարեանութիւնն և ամեն ինչ որ վերաբերի մեր Սուրբ Տեղեաց, պայծառ և փառաւոր վիճակի մէջ պահուին։

Յիսուս Քրիստոս Տէրն մեր՝ որ իւր անճառելի անօրէնութեամբը նուիրագործեց նոյն Սրբազան և Վեհափայլ տեղիքը, յանուն իւր Աստուածային փառաց և Սուրբ Տեղեաց՝ մեր Ջերմեռանդն և ազգասէր ժողովուրդին շնորհած զուարթառատ տուրքն և ողորմութիւնն ի հաճոյս իւր ընկալցի, փոխարէն հազարապատիկ պարգեւելով նախ՝ յերկրաւոր աստի կենաց և ապա յերկնաւոր անսպառ ճոխութեանցն անտի կենաց, օրհնելով զԱղգ մեր և փրկելով յերեւելի և աներեւոյթ փորձանաց և հոլանի և պաշտպան կանգնելով Ձեզ ամենեցուն, այժմ և միշտ և յաւիտեան:

Ողջ լերուք և օրհնեալ ի Տեառնէ մերմէ և յամենայն Սրբոց նորա և ի մէնջ. ամէն:

Ցունալ ի Պատրիարքարանէ Հայոց Կոստանդնուպոլսոյ յամի Տեառն 1880 Յունուարի 11 և Հայոց ՌՑԻԹ. թիւ Կոնդակի 274.

Պապճէն Էրէրոդ.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Առաջիկայ Տօմարս, որ պարունակէ թերթս 185 (հարիւր ութսունեւհինգ) յանձնեցաւ ամենահաւատարիմ և անձնուէր Միսրանի Ս. Ուխտիս՝ սրբոց Յակոբեանց Ազգ. վանուցս Երարկերցի Երիցանաշնորհ Տ. Մամբրէ Հոգեզգօն վարդապետի Մալկոսեան, Որդւոյ մերոյ սիրելւոյ և այցելւոյ և նուէրընկալի նպաստից օրհնեալ և մեծահաւատ Ազգայնոց Ռուսաստանի Ռ. հրամանաւ Նորին Վ. Եհափառութեան Տ. Տ. Գէորգ Գ., Սրբազնակապար Կաթողիկոսի ամենայն Հայկազանց և Աստուածաշնորհ Ընդհանրական Քահանայապետի Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի Լս և Տնօրէութեամբ Ամենապատիւ և Քարձրաշնորհ Սրբազան Տ. Ներսէս Երբեպիսկոպոս, Քարեխնամ Պատրիարքի համայն Տաճկաստանի։

Երիցանաշնորհ Մամբրէ վարդապետ Հոգեզգօն որդին մեր ունի պաշտօն ընդունելոյ զառատանուէր նպաստս Քարեպաշտօն Ազգայնոց Ռուսաստանի վասն բարձման պարտուց Ազգ. վանուցս՝ եղելոյ յերեսաց պատերազմին, և զոր ունի յականէ անուանէ արձանագրել աստ ի Տօմարիս և տալ ի վա-

ւերացուն Արժանաշնորհ և Սրբակրօն Անդամոց Հոգևոր կառավարութեանց, Մաքրակրօն քահանայից և Եպիսկոպոսաց գերամեծար իշխանաց ըստ դրից իւրաքանչիւր քաղաքաց և գիւղից։

Բաց ի նպաստից, որ յաղագս վճարման պարտուց, ունի նաև իրաւունս ընդունելոյ զմասնաւոր տուրս, ողորմութիւնս, պարգևս և նուէրս վասն պայծառութեան Սրբազնասուրբ և Տնօրինական Տեղեաց Քրիստոսի Աստուծոյ մերոյ, և շինութեան Ազգային վանուցս. և որք բաժանին յեօթն տեսակս.

1) Պտակք (դրամական կամ կալուածական),
2) Յիշատակիք,
3) Հոգեբաժինք,
4) Պիտոյք և գործիք վարժարանի և տպարանի,
5) Հնութիւնք ազգի ազգիք պատկանեալ Թանգարանի Հնութեան,
6) Մատեան տպեալ կամ գրչագիր,
7) Եկեղեցական զգեստք, Ս. անօթք և զարդք։

Տ. Կ.

Սրբոյ Աթոռոյս Երուսաղէմ Պատրիարք
ՆՍԱՑԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ։

15 օգոստոսի 1881 ամի
ի Ս. Երուսաղէմ.
ՅԱՌԱՔՈ Սրբոյ Յակոբեանց։

Գ.

ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ.

Ըստ հրամանի Տեառն Տեառն Գ.Էորգայ Գ.-ի, վեհափառ Կաթողիկոսի ամենայն Հայոց, որոշմամբ Կեդրոնական Վարչութեան Թուրքիոյ և պարտավճար Յանձնաժողովոյ Ս. Երուսաղէմի ժապաւինեցաք զայս Տօմար և յանձնեցաք ի ձեռն Արժանապատիւ Տ. Մամբրէ վարդապետի Մարկոսեան Ըրաբկերցւոյ՝ միաբանի Ուխտին Ս. Յակոբեանց՝ ստորագրեալ ի ստորև և կնքեալ։

Յոյս մեծ ունիմք ի վերայ բարեպաշտ ժողովրդեան Հայոց որ ընդ հովանեաւ մեծի պետութեանն Ռուսաց, զի ի տեսանելն զայս Տօմար յօժարակամ նուիրելոց են զուարթառատ տուրս ողորմութեան, վասն ազատելոյ ի ծանրաձանր պարտուց և բարգաւաճման Ս. Վանացն և սուրբ Աթոռոյ սրբազան առաքելոցն Յակոբեանց, որ պարծանք է ազգիս և փառք առաջի ազգաց և ազանց. և զի միաբանք Ս. Ուխտին զօր հանապազ ջերմեռանդութեամբ աղօթեն առ Աստուած՝ վասն բարօրութեան Հայաստան աշխարհի և ամենայն ոլորտաց նորա որ ի սփիւռս տիեզերաց՝ Տէրն Ամենակալ աղօթիւք նոցա, այլև

լսելով ձայնի աղաչանաց մերոց և սրբազան եղբօրն մերոյ Աստուածարեալ Պատրիարքին Տ. Եսայիայ, այլև մաքուր մաղթանօք Սրբազան Հայրապետին մերոյ երկիցս երանեալ Հովուապետին աղջիս՝ պահեսցէ զձեզ ամենեսին զսիրելի եղբարս մեր հոգեհարազատ որ ի Ռուսիա, ընդ հովանեաւ ամենախնամ Աջոյն իւրոյ. ամէն։

Աշխարաբար, Պատրիարք Կ.-Պոլսոյ

ՆԵՐՍԷՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՎԱՐԱԳԱՊԵՏԵԱՆ.

Կ.-Պոլիս, Պատրիարքարան Հայոց (Ստէպ Կնիք)

9 Սեպտեմբերի 1881 և Ազգական Ռ61Ը.

Պ.

Ըստ հրամանի Բարձրաշնորհ Տ. Տ. Ներսիսի Սրբազան Պատրիարքի՝ Նախագահի Յանձնաժողովոյս, կնքեմք և մեք առընթեր Պատրիարքարանի ժառաւինող կնքոյն, և ստորագրեմք աստանօր յապահովութիւն նուիրատուաց, զորոց նուէրս ի նուիրակացն ստանալով՝ Յանձնաժողովս ի զորձ արկա-

նելոց է վասն բարձման պարտուց Ս. Աթոռոյն Երուսաղէմի, ըստ տրամադրութեան վերոգրեալ պատրիարքական հաստատագրոյն։

Ի դիմաց Ս. Երուսաղիմայ պարտուց բարձման Ցանձնաժողովոյ

ԱԲԻՆ-ԴՊԻՐ
Ս. ՋՈՒՆՑ-ԱՍՊԵՏ·

ԱԲԻՆ-ԴԵՐ
ՅՈՎՀԱՆՆԷՍ ԿԻՒՄԻՒՇԵԱՆ·

(Տեղի Կնիքոյ.)

Ե·

ԳԻՆՈՐԳ Ծառայ Քրիստոսի և անհասանելի կամաքն Աստուծոյ եպիսկոպոսապետ և Կաթողիկոս ամենայն Հայոց, Նշայրագոյն Պատրիարք համազգական նախամեծար Աթոռոյ Արարատեան Առաքելական Մայր Եկեղեցւոյ սրբոյ Կաթողիկէ Էջմիածնի. գերապատիւ Առաջնոյդաց, հոգեշնորհ Յաջորդաց, բարեկրօն Աւագերիցանց և քահանայից, հոգենուազ պաշտօնէից եկեղեցւոյ և համայն յարգամեծար ժողովրդոց մերոց և ազգայնոց սիրելեաց՝ բնակելոց յաստուածախնամ վիճակս Հ. ամախւոյ, Աստրախանու, Ռեսսարարիոյ և Նոր Նախիջևանու, որոց ամենեցուն մատուցանեմք սէր, օրհնութիւն և ողջոյն Փրկչական. և աղօթս առնեմք առ Աստուած, զի շնորհօք Հոգւոյն Սրբոյ լիցին ի խաղաղութեան,

ի սէր, ի խնդութեան, յերջանկութեան և ի կեանս անդորրաւէտս, անփորձ յերևելի և յաներևոյթ թշնամեաց, անսասան ի հաւատս, լի և առաւելեալ ի բարեգործութիւնս, զարդարեալ ամենայն աստուածահաճոյ առաքինութեամբ ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ և հովանաւորեալ ՅԱՋՈՅՆ Ռարձրելոյ. ամէն։

Եւ ընդ աստուածապարգև և քրիստոսական սուրբ ողջունիս և օրհնութեանս յայտ առնեմք աստուածասէր որդւոց մերոց՝ սիրեցելոց ի Քրիստոս, զի հանրահռչակ վանքն Ս. Յակոբեանց Հայոց, որ Յերուսաղէմ, անկեալ է ի ներքոյ ծանրագոյն պարտուց, և Ազգային Վարչութիւն Հայոց Կ. Պոլսոյ խորհեալ է ազգովին բառնալ զայնս ի միջոյ և ազատել զպարծանաց տեղին զայն ի պատահեալ նախատելի վիճակէն յայնմանէ, որոյ վասն և ի մէնջ խնդրեալ էին կանխաւ և ընկալեալ զՀաւանութիւն մեր։

Արդ ընկալեալ ի յարգանս զխնդիր երկուց արքեպիսկոպոսաց — պատրիարքացն Յերուսաղէմի և Կ. Պոլսոյ, արժան համարեցաք իբրև ի գործ կարեւոր և հոգեշահ, մանաւանդ իբրև ի մշանջենաւոր յիշատակ ազգային պարծանաց ձերոց և ջերմեռանդ հոգեսիրութեան և սիրոյ առ Աստուած շնորհել նոցա զկրաւունս դիմելոյ առ բարեպաշտութիւն ձեր։

Եւ որպէս զի վաղընդփոյթ լիցի աւարտումն գործոյն և շնորհի ձերոյ, որ ըստ ջերմեռանդն հոգեսիրութեան առնելոց էք յօժանդակութիւն բարձման պարտուց, բարւոք դատեցաք զամենայն զլիճակս Ռուսաստանի յերկուս տրոհել, վիճակելով զայնոսիկ առանձին առանձին վարդապետացն՝ զորս առաքեալ էին, յորոց ահաւասիկ զբարեշնորհ Մամբրէ վարդապետ Մարկոսեան՝ մերով այսու Հայրապետական Կոնդակաւս առաքեմք առ բարեպաշտութիւն ձեր և յորդորեմք սիրովն Յիսուսի Քրիստոսի զարդիւնս սիրոյ ձերոյ որ յԱստուած, յօժարակամ նուիրաբաշխութեամբ ձերով պայծառացուցանել և փառաւոր առնել առաջի Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ առաւել հայի ի տուրս որ զուարթն է սրտիւ և բորբոքեալ հրով ջերմեռանդութեամբ և յօժարութեամբ, որոյ փոխարինութիւն խոստանայ ինքնին զանանց մեծութիւն երկնից և զերկրաւորիս առատութիւն բարեաց։

Մի՛ զուր ինչ թուեսցին լսելեաց ձերոց ամենայն աստուածապատում մատենից բանք, զոր հոգւովն խօսի ընդ մեզ Աստուած ի ձեռն սրբոց առաքելոց և մարգարէից. քանզի Աստուած, որ մարդասէրն է բնութեամբ, որ զամենայն ինչ արար վասն մարդոյ, որ ինչ յերկինս և որ ինչ յերկրի, որ կամի ամենեցուն զփառաւորութիւն և զաստուա-

ծամերձ երանութիւնն երկնաւոր կենաց, ըստ իւրում անգիտելի տնօրէնութեանն նախասահմանեաց վիճակել զերանութիւնն երկնային այնոցիկ, որք բարեգործք են և առաքինիք. և այս՝ որպէս և ուսեալ եմք ի հաւատոց, զի մարդիկ՝ որ ի պատկեր և ի նմանութիւն Աստուծոյ արարան՝ լիցին պատկերք և խնամոց իւրոց և սիրոյ։

Օ՜այս ամենայն յիշելով բարեպաշտութեան ձերում հայրաբար՝ իբրև սիրելի որդւոց և հաւատովք որդեգրելոց Հօրն երկնաւորի, յորդորիմք ի բարեպաշտական տուրս և ի նուէրս, որով փառաւորի անուն մեծին Աստուծոյ. որով և մեք փառաւորիմք ի նա փոխարինելի վարձատրութեամբ. առ որ և յամենայն ժամ աղօթս առնեմք, որ քննէ զծածուկս սրտից և հատուցանէ ըստ գործոց ըստ իւրումն առատութեան, ընկալցի զնուէրս սիրոյ ձերոյ ի հաճոյս բարեսէր կամաց իւրոց։

Օրհնեսցէ Տէր Աստուած զամենայն զվաստակս ձեր, զի առատասցին բարութեամբ և լցցին շտեմարանք ձեր ամենայն պարարտութեամբ երկրի։ Օրհնեսցէ զձեզ և զմանկունս ձեր, զի շնորհազարդեալք Հոգւոովն Սրբով՝ կացջիք միշտ աստուածամերձ կենաց, զարդարեալք հոգեկան բարեմասնութեամբք և փառաւորեալք ի բարձունս ընդ տուրբս և ընդ սիրելիս անուան իւրոյ. պահեսցէ զձեզ յամենայն

ներգութենէ չարին. և յաջողութեամբ, սիրով և խաղաղութեամբ առաջնորդեալ ի կենցաղումն, արժանի արասցէ տեսանել զլոյս փառաց իւրոյ ի փառաւոր գալստեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Աղջ լերուք և օրհնեալք Աստուծոյ և յամենայն սրբոց նորա և ի մէնջ. ամէն։

ԳԻԼՈՒԳ Գ.

Կաթողիկոս ամենայն Հայոց.

Տ. Կ.

Դրէց՝ Կանոնք Հայրապետական
ի 20 Հոկտեմբերի 1881 ամ.
Ըստ Տումարիս ՈՒՇԼԱ ի Ս. Էջ-
միածին ի Վաղարշապատ թ. 410.

Ջ.

Ներսէս Ծառայ Քրիստոսի և շնորհիւ Սուրբ Հոգւոյն արքեպիսկոպոս և Պատրիարք Հայոց Թուրքիոյ. եկեղեցական եղբարց մերոց ի Քրիստոս և առ հասարակ բարեպաշտ ժողովրդոց ի Տէր մեր Յիսուս Հաւատացելոց, մեծաց և փոքունց, արանց և կանանց, ծերոց և տղայոց, երիտասարդաց և կուսանաց, ազնուատոհմ իշխանաց, բարեսէր վաճառականաց և արհեստաւորաց ողջոյն Տիրանուէր և օրհնութիւն։

Շնորհք, սէր և խաղաղութիւն յԱստուծոյ Հօրէ և ի Տեառնէ մերմէ Յիսուսէ Քրիստոսէ և յԱկից Ս. Հոգւոյն հեղեալ ծաւալեսցի ի ձեզ յամենեսին։

Ընդ տիրաւանդ ողջունիս և ընդ աստուածապարգև օրհնութեանս յուշ ածեմք սիրելեաց մերոց ի Քրիստոս զյորդորական Կոնդակ մեր, որով յայտ արարեալ զտառապակիր վիճակ Ս. Աթոռոյն Երուսաղէմի՝ հրաւէր և յորդոր կարդացաք մասնակցիլ բարձման պարտուց հոյակապ վանուցն։

Ոչ աւելորդ վարկանիմք աստանօր յիշեցուցանել ամենեցուն թէ նախնիք մեր ոչ միայն ի պայծառութիւն սրբազան վայրացն այնոցիկ բարեպաշ-

տական նուիրօք և բարոյական օժանդակութեամբ միշտ հոգատար եղեն, այլև ի տառապանս անդ իսկ դրամական նպաստիւք, ի պահպանութիւն եւեթ սրբոյ Աթոռոյն, որ ի վերջին ժամանակ յամաց ինչ հետէ յերեսաց պարտուց ի վտանգի լինել թուի։

Եւ որպէս ամենայն ազգ և ազինք քրիստոնեայք որ ընդ տիեզերս իցեն, փոյթ տանին անօրինական սուրբ տեղեաց պայծառութեան, նոյնպէս Ազգիս Հայոց հարկ անհրաժեշտ է հոգ ունել ոչ միայն պահպանութիւն սրբոյ Աթոռոյն, այլև բարձման պարտուց՝ որ գամ քան զգամ ծանրանայ զԱթոռոնն։ Պարտիմք ապա զնորայն անվթար պահել զհաստատութիւն ի պարծանս Ազգիս, և կամ ջան ի գործ արկանել միանգամ ընդ միշտ ի բարձումն պարտուց Ս. վանուցն։

Ամենապատիւ Տէր Եսայի սրբազան Պատրիարքն Ս. Երուսաղէմի՝ եղբայրն մեր հոգեհատոր դիմեալ է ի մայրաքաղաքս ստանալ կամաւոր նուէր ի բարեպաշտ մերազնէից Կոստանդնուպօլսոյ. և մեք ըստ պարտաւորութեան մերում թէպէտև զցայգ և զցերեկ զԱզգային բազմադիմի խնդրովք և գործովք պատաղեալ եմք, սակայն գործակցիմք մերովսանն յամենայնի անդուլ ջանից՝ Նորին Սրբազնութեան հայցել զնուէրս ի մեծամեծ և յազգասէր անձանց Ազգիս, քարոզելով և հարկ ի վերայ դնելով բա-

ցատրիլ միշտ ի պաշտօնական մարմնոց զկարևորութիւն սրբոյ Աթոռոյն և զպարտիս Ազգիս, որ առ այն։

Եւ որպէս մեք ըստ սեպուհ պարտաւորութեան մերում ջանահնար լինիմք բանիւ և արդեամբ առնել այնպէս, զոր ինչ պարտ է և արժան ի բարձումն պարտուց Ս. վանուցն, նոյնպէս ամենեցուն պարտ է առատապարգև նուիրօք մասնակցիլ նոյն հանգանակութեան ի պատիւ և ի փառս Ս. Եկեղեցւոյս մերոյ Հայաստանեայց և ի պարծանս Ազգիս մերոյ սիրելւոյ։

Արժանապատիւ Տէր Մամբրէ վարդապետ Մարկոսեան ի Միաբանութենէ Ս. Ուխտին օրհնաձիր Կոնդակաւ երիցս երանելի Հայրապետին մերոյ և արտօնութեամբ Նորին շրջի ի միջի ձերում հայցել զնուէրս կամաւորս, յորդորեմք զամենեսին ի մեծամեծաց ցփոքունս՝ նուիրել նպաստս առատապէս և մասնակցիլ ազատութեան Ս. Աթոռոյն ի մեծաքանակ պարտուցն և պահպանութեան Ազգային իրաւանց տնօրինական սրբազան տեղեացն։

Աղաչեմք զամենագութ և զամենախնամ Աստուած լցուցանել զամենեսեան շնորհօք Ս. Հոգւոյն, շնորհիլ փոխան նուիրաց յանսպառելի գանձէն բարութեան իւրոյ, բարեյաջողութիւն գործոց պարգևել, պահել և պահպանել յամենայն չարեաց,

զօրացուցանել զձեզ ընդ հոլաթևովք իւրովք և պարգևել երկար և բարեբաստիկ կեանս։

Հնորհք ընդ ամենեսին ընդ ձեզ, եղբարք. Ամէն։

Նէրսէս Արքեպիսկոպոս Վարժապետեան.

Պատրիարք Կոստանդնուպօլսոյ

28 Դեկտեմբերի 1882
Ի յանգիստն Բ. Ութլր.
Թիւ Կոնդակի 351.

(Տիրէ Կնոյ.)

Ի՞

Ի սուրբ և հրաշալի մայրաքաղաքիս Երուսաղէմ, ի սուրբ Նազարէթ, ի սուրբ Բեթղեհեմ, ի սուրբ Յորդանանէ, ի Թաբիորական սուրբ լեռնէն, ի սուրբ Գողգոթայէ, ի փրկագործ Խաչելութենէն Քրիստոսի, ի սուրբ պատանատեղւոյն, ի սուրբ Գերեզմանէն և ի հրաշալի Յարութեան Աշխարհամատրան տաճարէն. ի Զիթենեաց լեռնէն, ի սուրբ Ամբարձման ոտնակոխ տեղւոյն և ի սուրբ Գալիլիայ Ժամադիր տեղւոյն Քրիստոսի, ի

սուրբ Սիոն Ա՝ երնատանէն, ի Գալատեանէ Հոգւոյն Սրբոյ ի դասս Առաքելոցն և ի սրբոց Հրեշտակապետաց տաճարէն, յառաջին բանտէն, և ի սուրբ Փրկչի տաճարէն — յերկրորդ բանտէն Քրիստոսի, ուր ամփոփեալ կայ ի հրեշտակէն թաւալեալ կափարիչ վէմն, և ի սուրբ Յովհաննու աւետարանչի տաճարէն, ուր զետեղեալ կայ մասն սեան, յոր կապեցաւ կենարարն մեր Քրիստոս. և ի սուրբ Գերեզմանէն Տիրամայրն Ս. Աստուածածնի. ի սրբոց Յակոբեանց Առաքելոցն և ի սուրբ դամբարանաց նոցին. ի վայելչազարդ սուրբ Եթոռոյս Տեառնեղբօր՝ ի հոյակապ Ս՝անուցս ամենայն Հայոց։ Եւ յայլ ամենայն Տնօրինական փրկագործ տեղեաց Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի և ի սոցին սպասաւոր ի Տ. Նոսայի արքեպիսկոպոսէ և պատրիարքէ սրբոյ քաղաքիս Երուսաղէմի. ժամանեալ հասցէ Աստուածային օրհնութիւն, նախախնամական գթութիւն և շնորհք ի վերայ աստուածախնամ երկրին Ռուսաստանի մայրաքաղաքաց, գիւղաքաղաքաց և գիւղօրէիցդ. ոլք ընդ հզօր իշխանութեամբ օրհնեալ և Աղօրմած Կայսեր ամենայն Ռուսաց և ի միջի դոցա կառուցեալ սրբոց եկեղեցեացդ. բարեջան և արթուն անդամոց հոգևոր կառավարութեանց և եկեղեցական դէտ կարգեալ հոգևոր Առաջնորդացդ և սիրելի եղբարց մերոց առաքելաշնորհ արքեպիս-

կոպոսաց և ժրաջան յաջորդաց. աստուածարան վարդապետաց, պատուամեծար աւագերիցանց և առ. հասարակ սրբազնագործ և մաքրակենցաղ քահանայից, շնորհունակ սարկաւագաց, քաղցրանուագ դպրաց. մաքրասուն կուսանաց և ամենայն ուխտի մանկանց սրբոյ եկեղեցւոյ։ Այլև ի վերայ բազմաշխատ եկեղեցպան հաւատարիմ երեսփոխանաց. գանձապետաց և օրհնեալ հայկազուն Ազգիս պայազատ ազգասէր իշխանաց, ազնուազարմ մելիքաց, մեծիմաստ բարեջան վարժապետաց, առատասիրտ մեծատանց և վաճառականաց. աղքատաց, բնակաց և եկաց, արանց և կանանց, ծերոց և տղայոց, երիտասարդաց և կուսանաց և ամենայն չափու հասակի ի Քրիստոս Յիսուս հաւատացելոցդ, սիրելեաց հոգևոր հարց, եղբարց և որդւոց մերոց. Ս. Աթոռոյս ողորմած բարերարաց և փափաքողաց պայծառութեան Տնօրինական տեղեացն Քրիստոսի բարեպաշտօն օրհնեալ ժողովրդականացդ և լուսաւորչածին հարազատ որդւոց համազգական մայր Աթոռոյս սուրբ Էջմիածնի, կալ մնալ ձեզ միշտ խնդութեամբ և խաղաղութեամբ, պահպանեալք և նախախնամեալք ամենազօր տիրական սուրբ Աջոնն յարաղուարձ բերկրութեամբ, անձառ ցնծութեամբ և անպատում ուրախութեամբ. ամէն։

Շնորհք, սէր և երկնաւոր խաղաղութիւն Ամ-

սուրբ Երրորդութեան Հոր և Որդւոյ և Սրբոյ Հոգւոյն կենարարի և օրհնութիւն համայն Տնօրինական սուրբ տեղեաց Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի միշտ և հանապազ ի վերայ հոգւոց և մարմնոց ձերոց եղիցի ամենայն բարեմասնութեամբ. ամէն։

Եւ ընդ աստուածապարգև օրհնութեան և քրիստոսաւանդ ողջունիս յայտ առնեմք ջերմեռանդ հաւատացելոցդ՝ թէ հաւատքն Քրիստոսի Աստուծոյ մերոյ աճի ի մեզ առաւել ի ձեռն կենդանի բանից հոգեբուղխ իրողութեանց նորա, քան թէ ի քարտէզս անշունչս ևեթ դրոշմեալ։ Ազանորոյ և աստուածային հաւատոյս մերոյ երկնաւոր Ազարդապետն Յիսուս, իբրև կտակ վերջին, պատուիրեաց աշակերտաց իւրոց յետ ընդունելոյ զՀոգին Սուրբ՝ երթալ յաշխարհ ամենայն և քարոզել զԱւետարանն իւր սուրբ և շնչել ի սիրտս և ի հոգիս մարդկան զշնորհս արդեանց մարդեղութեան իւրոյ և սփռել յամենեսին զհոգեպարար բուրուճն շնորհաց սրբազան երկրիս սրբոյ Երուսաղէմի, յորում գործեցան կենսատու խորհուրդք Տնօրէնութեան իւրոյ։ Ազանորոյ և Ընթն ընտրութեան Պօղոս, ոչ դադարէր ի շրջագայելոյ ի քաղաքս քաղաքս և քարոզելոյ զԱնն կենաց, ընդ նմին և հոգալով զեկեղեցւոյն՝ որ յԵրուսաղէմ, զորոյ զշնորհս լիուլի

բաշխէր յամենայն որդիս իւր, զոր աւետարանաւն ծնանէր, զամենեսին զնոսա զուարթ նուիրօքն կապէր ի հաղորդակցութիւն սրբոցն, որք յԵրուսաղէմ էին։ Եւ վասն կենդանի պահելոյ զհաւատս և զսէր եկեղեցւոյ, ուր ոչ զօրէր ինքն անձամբ երթալ, առաքէր զՏիտոս և զայլս յաշակերտաց և ի գործակցաց իւրոց ի հեռաւորս և ի մերձաւորս, և այսպէս յօդիւ սիրոյ ձգէր կապէր զսիրտս և զհոգիս նոցա ընդ Տնօրինական վայրս, որ է կեդրոն միութեան եկեղեցեաց և գանձարան աստուածային շնորհաց, որ բաշխին ի մեզ ի ձեռն Տնօրէնութեանց Յիսուսի Քրիստոսի Փրկչին մերոյ։ Վասնորոյ և սովորութիւն էր ի սկզբանէ անտի հաստատութեան սուրբ կրօնիս ելանել հաւատացելոց ամի ամի յԵրուսաղէմ ի Յատակի տօնին, և ինքն իսկ Պօղոս բազում անգամ գտանէր անդ, առ ի վայելել անձամբ զփրկարար շնորհս Հոգւոյն և աղօթակից լինելոյ սրբոց ի վերայ սրբազան տեղեաց։ Իսկ առ հեռաւորսն զնոյն շնորհս փութայր մատակարարել ի ձեռն աշակերտաց իւրոց և առաքելական թղթոց, և փոխանակ ընդ այնր զպտուղս բարեպաշտ սրտից նոցա զնուէրս առեալ մատուցանէր ի գանձանակ Տեառն ի պէտս եղբարց։ Արդ և մեք ըստ առաքելաւանդ կարգադրութեանս՝ հրամանաւ Սուրբին Վեհափառութեան բարեգութ Հօր մերոյ երա-

նեալ Պահանայապետի Տ. Տ. Գէորգ Գ, Արքազ-
նակատար Կաթողիկոսի ամենայն Հայոց և Ծայ-
բագոյն Հայրապետի Համազգական Աթոռոյ
սուրբ Էջմիածնի, և տնօրէնութեամբ Ազգային Կե-
դրոնական Վարչութեան Տաճկաստանի և հայրե-
նանուէր Յանձնաժողովոյ բարձման պարտուց սուրբ
Աթոռոյս՝ զՀաւատարիմ և զանձնանուէր միաբան
սուրբ Ուխտիս՝ զսիրելի որդեակս մեր Արաբկերցի
Տ. Մամբրէ վարդապետն Մարկոսեան և զԽար-
բերդցի Տ. Սահակ վարդապետն Խապայեանց առա-
քեցաք առ Քրիստոսազօր օրհնեալ Ժողովուրդդ,
որ էք ընդ հզօր պաշտպանութեամբ Օգոստափառ
և Աղորմած Կայսեր Աստուածախնամ Տերութեան
ամենայն Ռուսաց։ Խնդրեմք ընդունել զնոսա փո-
խանակ մեր, զի պատկեր մեր են և զան առ ձեզ
բերել զշնորհս և զօրհնութիւն Տնօրինական սուրբ
վայրացն, զհոգևոր մխիթարութիւնս և հարցանել
զանձկալի ողջունէ ձերմէ և ընդունել զառաւա-
պարգև նուէրս բարեպաշտութեան ձերոյ. զի սրբա-
զան Տեղիք Քրիստոսի Տեառն մերոյ կարօտին զբ-
թոյ և զոլովոյ հաւատացեալ քրիստոսասէր ժո-
ղովրդոցդ։

Յուշ լիցի սիրելեացդ մերոց, զի յառաջին
աւուրսն քրիստոսական կրօնիս անխարիր ամենայն
ազգք հաւատով եղբարք էին ի Քրիստոս, արդ

եթէ յայնժամ բազում նպաստից հաւատացեալքն պէտս ունէին սուրբ տեղիքս, քանիո՞ն առաւել յայսոսիկ դառնութեան ժամանակս, յորս խորութիւն աղգային ցամաքեցուցեալ է զայն սուրբ սէր և լինի առիթ ոչ սակաւ խռովութեանց, յափրշտակութեանց և մեծադումար ծախուց. մանաւանդ որոց արժանի եղեալ են յայց ելանել սրբազնասուրբ վայրացս՝ յայտ է թէ ի պահպանութիւն Ազգային նուիրական հաստատութեանցն բազում դրամոց պէտք են, նոյն և յաղագս սրբոց Յակոբեանց հրաշակերտ աղգապարծանք սուրբ Աթոռոյս, և սակս Վանաց Փրկչին կառուցելոյ ի վերայ լերինն Սուրբ Սիօնի, որ ցարդ կիսաւեր կործանեալ կայ ի հակառակութենէ. և ոչ այսչափ միայն, այլ և յերեսաց քառամեայ աղետալի պատերազմին դադարելով այցելութիւն Տէրունական Ուխտաւորաց և նուազելով սովորական եկամտից, ընկճեցաք ընդ տոկոսաւոր ծանր պարտուք. սակայն և ի վերայ այսր ամենայնի, զայս ամենայն՝ որ նշանաբանն է սուրբ Ուխտիս, արարաք, և զայն որ վասն բարոյական հաստատութեանցն է յօգուտ ընդհանուր Ազգիս՝ չթողաք ի բաց, այլ վստահացեալ ի սէր և յաջակցութիւն սիրելի Ազգիս, յայսքան նեղութեան միջի շարունակեցաք զջան մեր ի յառաջադիմութիւն Դառանդաւորաց Ուսումնարանի, յորում ի դաւա-

ռացն Հայաստանի մանկունք՝ աղքատ ծնողաց որ-
դիք վարժին ի կարևոր ուսմունս սուրբ Եկեղեցւոյ
և յարտաքին գիտութիւնս, թէպէտև աղքատու-
թէն. և ոչ ի մասին Տպարանին վերջոտնեալ եմք,
այլ ճգնիմք ի լոյս ածել զեկեղեցական, զուսումնա-
կան և զպատմական գրեանս՝ որքան կար մեր ներել։

Ոչ աւելորդ համարիմք յիշել աստէն նաև զԱնան-
գարանն ձեռագիր մատենից և այլ հնութեանց,
որք հետզհետէ ճոխանան ջանիւք ազգասիրաց։ Այ-
սոսիկ ոչ ի պարծանս ինչ գրեմք, այլ զի հեռաւոր
Ազգայինք փափաքողք փառաւորութեան և յառա-
ջադիմութեան Ազգային Վանուցս՝ որոց չիցէ տես-
սեալ, իմասցին և ծանիցեն, եթէ յոր ինչ ձեռք
մեր բաւեն ըստ կոչմանս մերոյ՝ ոչինչ իւիք
զանց արարեալ եմք. և տեղեկացեալ ըստ ամենայնի,
քաղցր և հաշտակամք հայեսցին ի գործս և ի տա-
ռապակիր վիճակ մեր, և գթացեալ ի վերայ մեր
ողորմեսցին Երուսաղէմի։

Եւ արդ քանզի բազմիցս վայելեալ է մեր զքաղցր
արգասիս բարեպաշտական ողորմութեանց և աթո-
ռասէր նպաստից բարեյիշատակ նախնեաց ձերոց և
ունիմք առաջի զբազմատեսակ յիշատակս նոցին, և
զի դուք, աստուածասէր սիրելիք, արժանաւոր ժա-
ռանգք էք բարեպաշտութեան նոցին, վասն որոյ
առաքեցաք առ սիրելութիւն ձեր զՏ. Մամբրէ

վարդապետն Մարկոսեան և զՏ. Սահակ վարդապետն Խաչատրեան զՀարազատ որդեակս մեր ի յիշեցուցանել ձեզ զԽրուսաղէմ, սիրել զշնորհս Տնօրինական սուրբ Տեղեացս ի հոգիս ձեր և ընդունել զկամաւոր և զառատանուէր պտուղս հաւատոց ձերոց. ուստի այսու օրհնութեան գրովս յորդորեմք զմեծահաւատ և զբարեպաշտն Ազգայինսդ՝ զՀարազատս Հայաստանեայց Առաքելական սուրբ Եկեղեցւոյ՝ զկամաւոր նուէրս ձեր չը խնայել, այլ առատասրտութեամբ շնորհել, յաղաւթիւն Ս. Աթոռոյս և ի շինութիւն և ի պայծառութիւն սրբոցնասուրբ և հոգեպարար վայրացն Տնօրինականաց։

Եւ մեք աղաչեմք զԱստուածն ամենայն բարութեանց շնորհիւ սուրբ Տեղեացս չարչարանաց և փառաւորութեան Որդւոյ Իւրոյ Միածնի, անդառնալի բարեխօսութեամբ սրբուհւոյ Աստուածածնի և սրբոց Յակովբեանց երջանիկ Առաքելոցն և սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչին օրհնելով օրհնեսցէ զարդիւնս վաստակոց ձերոց, զօրացուսցէ զձեզ ի գործս արդարութեան և ի պտուղս աստուածպաշտութեան, զորդիս և զընտանիս ձեր ըստ Նահապետացն օրհնութեան օրհնեսցէ, ի խնամն և ի շնորհս ճոխացուսցէ, և յիշատակ բարի ձեզ և աղգիս կացուսցէ. տացէ և պարգևեսցէ յաջողութիւն

ամենայն գործոց ձերոց յառս և ի տուրս, և յամենայն երևելի և յանեղևոյթ փորձանաց ազատ կացուսցէ։ Յամենայն շնորհաբաշխութեանց, օրհնութեանց, աղօթից և սրբարար պատարագաց, որք անխափան մատչին յամենայն աւուրս և կատարին ի սրբազան Պ. այրս՝ հանցէ մասն և բաժին եւ ձեզ և ամենայն ննջեցելոց ձերոց. և ցորչափ յաշխարհի կայք, խաղաղ, երջանիկ և բարգաւաճ կենաց ի բարօրութեան, ի ճոխութեան և ի պերճութեան պահեսցէ, և ի հանդերձելումն ընդ սուրբս իւր դասեսցէ շնորհօք մարդասիրութեան իւրոյ, որում փառք յաւիտեանս. ամէն։

Սրբոյ Ամենայն Երուսաղէմի Պատրիարք

ԵՍԱՅԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ։

Գրեցաւ օրհնութեան կոնդակս ի Մայրաքաղաքն Սուրբ Երուսաղէմ, յԱռաքելական Ամենայն Սրբոց Յակոբեանց, ի թիւ շնորհաց 1881 ի 15 Օգոստոսի։

Ը.

ՅԱՅՏԱԳԻՐ

Ազգային Վարչական խորհուրդն Երուսաղէմի պարտուց բարձման Յանձնաժողովոյ հետ համագումար նիստ կազմելով՝ ուշադրութեան առաւ երբեմն Սրբոց Յակոբեանց վանուց միաբան Մկրտիչ վարդապետի կողմէ „Ուրուագիծ անկարգութեանց և առարկայից պարտուց Ս. Երուսաղէմի“ մակագրով և տարեոյս յունիս 23 թուականաւ առ նոյն Յանձնաժողովն մատուցեալ գրութիւնն, ինչպէս նաև նոյն միաբանութենէն արտաքսեալ Յակոբեան Վահան վարդապետի համբաւած այն գրոյցներն՝ որ կը ձգտէին Ս. Աթոռոյ պարտուց գոյութիւնը կասկածի ներքև ձգելու և անուղղակի կերպով կը ծառայէին փոքր ի շատէ ուժ տալու Ուրուագծին պարունակութեան։

Յիշեալ երկու վարդապետք Ս. Աթոռոյ ելումբից տեսուչ Արժ. Վ. Լեոնդ վարդապետի եղբօր ամուսնութեան հանրածանօթ խնդրոյն առթիւ ըմբոստ գտնուելով Երուսաղէմի Ամեն. Սրբազան Պատրիարքին և կեդրոնական վարչութեան տնօրէնութեանց դէմ, միաբանութենէն արտաքսեալ և հետևաբար

ամբաստանողք իրաւունքէն զրկեալ էին, և եթէ զանուէին իսկ այդ վիճակին մէջ, ըստ օրինի չպիտի կրնային դարձեալ առաջի Պարչութեան և Ազգին ամբաստանող հանդիսանալ. վասն զի նախ՝ մատուցեալ ուրուագիծը զուրկ էր օրինաւորութեան այն բացորոշ պայմաններէն և ձևէն, զորս Հրուսաղէմի վանուց վերջին կանոնագիրն իւր 9 յօդուածով ուրոյն ուրոյն կը սահմանէ միաբանութեան ամէն կարգի և աստիճանի անդամոց, այն է Պատրիարքին, Եպիսկոպոսաց և եկեղեցական կամ աշխարհիկ միաբանաց դէմ տեղի ունեցած ամբաստանութիւնները նկատողութեան առնլու համար. բայց որովհետև Ս՝կարիչ և Պ՝ահան վարդապետք՝ մին գրաւոր և միւսն բերանացի՝ այնպիսի յայտարարութիւններ կ՝ընէին, որպէս թէ Ս. Աթոռոյ ելումանից մասակարարութեան հաշուոց մէջ զեղծումներ մուտ գտած լինէին, իբր արդիւնք նենգութեանց, և ինչպէս պարտուց բարձման Յանձնաժողովը կը ծանուցանէր, հատարակութեան մէջ գայթակղութիւն սփռելով՝ հանգանակութեան ձեռնարկը դժուարացնել կը փորձէին, Պարչական խորհուրդն, այս ամէն պարագաներն ուշադրութեան առնելէ յետոյ, խորհելով որ եթէ յիշեալ վարդապետաց այս տեսակ յայտարարութիւններն՝ օրինաւորութենէ զուրկ ըլլալնուն պատճառաւ՝ մերժուին առանց քննութեան, թերևս

ինչ ինչ իրողութիւններ ծնան ի մթան, և մէկ կողմէ հասարակութեան մէջ տարաձայնութիւնք քաջալերի՝ և միւս կողմէ Ազգական վարչութեան մէջ զանցառութիւնք մուտ գտնեն, որոշեց վերահասու լինել թէ եղած յայտարարութիւնք ի՞նչ իրական արժէք ունին, և թէ կը զօրե՞ն երբէք պաշտօնական կերպով խնդրոյ ենթարկել Երուսաղէմի պարտուց քանակութեան ճշդութիւնն, ինչպէս նաև ազգային պատուիրակին կատարած քննութեան արդիւնքը, և մի նորագոյն քննութեան հարկն յառաջ բերել։ Հետևապէս Ազգական խորհուրդն այս տեսակէտով արժան դատեց յիշեալ վարդապետներն իրը լրատու հարցաքննել, և հրաւիրեց զիրենք իւր առեանը՝ բացատրութիւն և տեղեկութիւն ստանալու համար այն զեղծումներու և յափշտակութեանց մասին՝ զոր կ՚ակնարկէին։

Այս հրաւիրանաց համաձայն՝ նախ Մկրտիչ վարդապետ ներկայանալով՝ խոստովանեցաւ առ Յանձնաժողովն մատուցեալ ուրուագծին հեղինակն ինքն ըլլալը. հետևապէս իւր ներկայութեան յօդուած առ յօդուած կարդացուելով ուրուագիծն, հարկ եղած բացատրութիւնները պահանջուեցան իրմէ. բայց Մկրտիչ վարդապետ ջանաց խուսափիլ պահանջուած բացատրութիւնները տալէ, սա առարկութեամբ թէ ճնշման ներքև չուզեր պատասխանել,

և թէ յատկապէս քննիչ մասնաժողով մը կազմուի, այն ատեն կը պարտաւորի ապացուցանել զոր ինչ գրած էր։ Մկրտիչ վարդապետ չկրնալով սակայն հակառակ Վարչութեան հրաւիրանաց՝ ցոյց տալ և ապացուցանել ճնշման և բռնութեան ամենափոքր պարագայ մը, որու ենթարկուած լինէր ինք, Վարչական խորհուրդը դիտել տուաւ անոր թէ իւր Ուրուագիծն, ըստ որում Երուսաղէմի վանուց կանոնագրին նկատմամբ օրինաւորութենէ զուրկ էր և մերժելի, հետևապէս Վարչութիւնը չկարենալով ըստ օրինի նկատողութեան առնուլ զայն, արգելք չէր ճնար իրեն բոլորովին կարևորութիւն չընծայելու. այսու ամենայնիւ քանի որ պատշաճ դատած էր Երուսաղէմի վանուց մէջ գործօն պաշտօն վարող Մխիթարեանութեան երկու անդամոց յայտարարութեանց կարևորութեան աստիճանը սահմանել, Վարչութեան այս տրամադրութիւնն իրենց համար խօսելու ազատութեան ընդարձակ ասպարէզ մը կը բանար, հետևապէս եթէ ստուգիւ Մխիթարեանութեան ներկայացուցած և նախորդ Վարչութեան կողմէ քննուած հաշուոց մէջ գողութեան կամ յափշտակութեան արդիւնք եղող նենգութիւնք տեղի ունած, և իրենք իսողութեան տեղեակ ըլլալով՝ լռած են մինչև իրենց արտաքսման վայրկեանն և այսօր պիտի դէպքեր կը յիշեցնեն, չեն կրնար և ոչ

մէկ օրինօք արդարանալ, սքօղելով այն փաստերն՝ զորս կը կարծեն ունենալ իրենց յայտարարութիւն-ներն ապացուցանելու համար, և քննիչ յանձնա-խումբի մը կազմութիւնը պահանջելու պատրուակաւ խոյս տալով իրենց ուղղուած հարցմանց պատաս-խանելէ. զի Ազգային Պարչութիւնն՝ պարտուց բարձման լիազօր Յանձնաժողովոյ հետ ձեռնհաս միակ մարմինն է զիրենք հարցաքննելու և սահմա-նելու իրենց յայտարարութեանց կարևորութիւնն, և յետ այնորիկ յղելու խնդիրն ուրիշ մարմնոց քննութեան և որոշման, եթէ հարկը պահանջէ։ Այս դիտողութեանց վրայ Մկրտիչ վարդապետ սկսաւ իրեն ուղղուած հարցմանց պատասխանել, և յայտարարեց թէ ինք չէ կարող հաստատաբար կամ ժխտաբար ըսել թէ վանուց տնտեսութեան մէջ նենգութիւնք գործուածք են կամ ոչ, այս կամ այն միաբանի քով խորեալ դրամներէ գումարներ կան կամ ոչ. սակայն գիտէ թէ Ս. Աթոռոյ մուտքն ելքէն աւելի է, այսինքն տարեկան 10,000 լիրա եկամուտ և առ առաւելն 7000 լիրա ծախք ունի, և 16 տարուան միջոցի մէջ 30,700 լիրա ևս բա-ցառիկ հաստոյթ մը գոյացած է. միայն թէ Մկրտիչ վարդապետ իւր այս յայտարարութիւնն ինքնին ապացուցանելու համար յանձն չառնելով որ և է փաստ ներկայել, պնդեց որ ազգին կողմէ քննու-

թեամբ պարզուի իրաց վիճակն, և այսպէս ծայ-
ռայեղ զգուշութիւն բանեցուց ամբաստանութիւն մը
ցոյացնելու ծառայող գոհացուցիչ պատասխան մը
տալէ և մեկնեցաւ վարչութեան ատենէն։ Յետ
այնորիկ Ս. Հան վարդապետ Ներկայանալով, Ս. Գր-
չական խորհուրդն յայտարարեց անոր որ՝ թէև ինք
Մկրտիչ վարդապետի Ուրուագծին պարունակու-
թեանը վերաբերեալ գրաւոր յայտարարութիւն մը
չէ ըրած, սակայն Ս. Գրչութիւնը լսելով որ ասա
և անդ կը տարաձայնէ թէ վանքը պարտք չունի,
և շռայլութիւնք և զեղծմունք տեղի ունեցած են,
կուզէ ստուգել իրմէ թէ վանուց բուն պարտքն
որքան է, թէ կրնայ զեղչուիլ և թէ իրօք նենգու-
թիւնք կան։ Ս. Հան վարդապետ այս և նմանօրի-
նակ հարցմանց առանց ուղղակի պատասխանելու,
սկսաւ վանքէն իւր դուրս հանուելու դէպքն և Պոլ-
սոյ զրաղումները պատմել, և յարեց թէ՝ իւր ստո-
րագրութամբ Միաբանութեան ընդհանուր գանգա-
տանաց միայն մասնակցած է, թէ այդ գանգատներէն
զատ անձնապէս որ և է բան չունի գողութեանց
կամ հաշուական նենգութեանց և պարտուց քա-
նակութեան նկատմամբ, այլ Յանձնախմբի մը կաղ-
մութիւնը կը պահանջէ այդ գանգատները քննելու
համար։ Ս. Գրչական խորհուրդը դիտել տալով
անոր թէ՝ իւր խօսքերը չեն պատասխաններ իրեն

ուղղուած հարցմանց, հրաւիրեց զինքն որ բացորոշ յայտնէ ինչ որ գիտէ և կը համբաւէ Երուսաղէմի պարտուց նկատմամբ։ Սակայն Վ. ահան վարդապետ կրկնեց թէ՝ ինք առանձնակի բան մը չէ ըսած, և ուզեց գիտնալ թէ ո՞վ է իւր դատախազն, որ այսպէս կը հարցաքննուի։ Եւ թէպէտ ծանուցուեցաւ իրեն որ վարչութիւնը կուզէ իմանալ թէ ի՞նչ փաստեր ունի հաստատելու պարտուց գոյութեան նկատմամբ իւր համբաւած զրոյցներն, և կամ թէ իւր ունեցած տեղեկութիւններէն կրնա՞յ արդեօք Ազգը օգտիլ՝ պահուած կամ խորեալ դրամներ գտնելու և պարտուց բեռը թեթևցնելու համար. բայց Վ. ահան վարդապետ վերըսաին միևնոյն պատ ի պատ և փախստեայ պատասխանները տալով՝ յարեց թէ՝ ինք չը գիտէր 35 հազար ոսկի պարտք ըլլալն, և ո՛չ ալ կըսէ թէ, աւելի կամ պակաս, զի դրամական գործ չէ ունեցած վանուց մէջ, և կը պնդէ գիտնալու համար թէ՝ ո՞վ է զինքն ամբաստանողը։ Այսպէս Վ. ահան վարդապետ ևս նահանջելով ստանձնելէ պատասխանատուութիւնն այս տարաձայնութեանց՝ որ վերագրուած էին իրեն, մեկնեցաւ տեսանէն։

Ազգային Վ. արչական խորհուրդը սոյն հարցաքննութիւնները կատարելէ յետոյ, չկարենալով ստանալ այնպիսի բացատրութիւններ՝ որ զօրէին

պարտուց քանակութեան ճշդութիւնը կատարեն թարկել. պատշաճ դատեց դիմել միանգամայն Երուսաղէմի վանուց վիճակին և պարտուց խնդրոյն վրայ արդէն կատարուած քննութեանց և եղած տնօրէնութեանց վերաբերեալ արձանագրութեանց, և

Տեսնելով որ Երուսաղէմի Ս. Աթոռոյն վերաբերեալ գործոց անխուսափելի պահանջումները գոհացընող ծախուց փոխարէն՝ հասութից աղբիւրներուն նուազած լինելն, և այս պատճառաւ տեղի գտած փոխառութեանց տոկոսներուն Ս. Աթոռոյն ելումտից ներդաշնակութիւնը խանգարած ըլլալն ի վաղուց ծանօթ իրողութիւն մ'է Ազգային Կեդրոնական Վարչութեան, ինչպէս նաև Ազգին.

Տեսնելով որ Ազգային Երեսփոխանական ժողովոյ տնօրէնութեան համաձայն կազմուած լինելով Երուսաղէմի պարտուց բարձման լիազօր Յանձնաժողովն, ոչ միայն ընդհանուր հանգանակութեան մը ձեռնարկեր է նա, այլև Ս. Աթոռոյ վիճակը բարեկարգելու և անցելոյն խոլաղնին քննութենէն օգուտ քաղելով՝ անոր ապագայն երաշխաւորելու նպատակաւ ամենայն ինչ ի տեղւոջ անդ քննելու պաշտօնով լիազօր պատուիրակ մը յուղարկեր է, որ Միաբանական Յանձնախմբի մը հետ կատարեր է իւր պաշտօնը.

Տեսնելով որ Երուսաղէմի պատուիրակին կատարած քննութեամբ նոյն իսկ յատենի Ազգային ժողովոյ երևան ելած է թէ Ս. Երուսաղէմի մէջ ազգային սեփականութիւններն ու իրաւունքները պահպանելու համար՝ մեծամեծ ծախուց պիտոյքներ կային, և չէին կրնար զանցառութեան մատնուիլ, առանց Ազգին թանկագին յիշատակները կորստեան ենթարկելու.

Տեսնելով որ Ազգային ժողովն հասու եղած է թէ Երուսաղէմի Սրբազան Պատրիարքն և միաբանութիւնն համաձայն գործակցութեամբ Տնօրինական Ս. Տեղեաց մէջ այոց ազգին ունեցած իրաւունքներն և սեպհականութիւններն անկորուստ պահպանելու համար ամեն զոհողութեանց համակերպեր, ամէն տառապանաց տոկացեր, և չեն խնայեր պէտք եղած ծախքերը նոյն իսկ իրենց առ Ազգն ունեցած պատասխանատուութիւնը վտանգի ենթարկելով։ Եւ թէպէտ Սրբոց Յակոբեանց Միաբանութիւնը մեծաքանակ պարտուց ներքև կը գտնուի այսօր, սակայն բարձր ի գլուխ կը ներկայանայ առաջի Ազգին, զի շնորհիւ իւր աւանդական քաղաքացիութեան և իւր ճգանց՝ պատուաւոր կերպով կը ներկայացնէ զայն առաջի աշխարհի, և Ազգին վարկն օտարաց առջև կրցեր է ի յարգի պահել և դրամատեալց վստահութիւնը գրաւելով՝ գէթ տոկ-

սեաց օր քան զոր նուազմանն աշխատեր և մասամբ յաջողեր է.

Տեսնելով որ Ազգային ժողովը վերահասու եղած է թէ Ս. Աթոռոյն ելումտից մատակարարութեան մէջ տնտեսագիտական և հաշուագիտական թերութիւնք տեղի ունեցած են թէև, բայց խարդախութիւն, գողութիւն և յափշտակութիւն չէ եղած և չէ տեսնուած պաշտօնական մարմնոց կողմէ, ինչպէս կը վկայեն բազմաթիւ արձանագրութիւնք և ելումտից հաշուետուփարք, որ թէև նախնական և պակասաւոր, սակայն կան և մնան ի Ս. Աթոռն, հանդերձ արդարացուցիչ գրութեամբք ամենայն ծախուց։ Դու եթէ երբեմն գտնուեր են մասնաւոր անձինք այսպիսի պակասութեանց մէջ, զրեթէ միշտ ինչ որ ձախ ձեռքը խլել է ի կենդանութեան, զնոյն աջն Ս. Աթոռոյ նուիրեր է ի ժամու մահուան.

Տեսնելով վերջապէս որ Ազգային ժողովն, յետ լսելոյ Երուսաղէմի պատուիրակին կողմէ իրաց վիճակին վրայ հաղորդուած մանրամասն տեղեկութիւններն, առանց խնդիր յարուցանելու, Ս. Աթոռոյ ելումտից մատակարարութեան նկատմամբ անցեալոյն մէջ տեղի ունեցած տնտեսագիտական և հաշուագիտական թերութեանց վրայ, անոր վիճակը բարեկարգելու, տնտեսութիւնը կանոնաւորելու և ապագայն ապահովելու համար՝ կանոնագիր մը քուէարկեց

կած է, որ՝ իբր տիրող օրէնք՝ գործադրութեան մէջ է այսօր, և այս կերպով փակուեր է խնդիրն։

Ազգային Պարչական խորհուրդն այս պարագայից և իրողութեանց առջև,

Նկատելով որ Մկրտիչ վարդապետ 29 տարի Միաբանութեանց մէջ զանազան պաշտօններ վարելէ յետոյ, վերջի ժամանակները թարգմանչութեան պաշտօնն, իսկ Պահան վարդապետ եօթը տարի Միաբանական Ընդհանուր ժողովոյ ատենապետութեան պաշտօնը վարեր է, ինչպէս իրենք յայտարարեցին, հետևապէս երկուքն ալ Միաբանութեան մէջ գործօն դեր մը կատարած լինելով՝ եթէ որ և է նենգութիւն կամ զեղծում տեղի ունենար, ձայն բարձրացնելու վիճակի մէջ գտնուէին, և կրնային Միաբանական Ընդհանուր ժողովոյ մէջ բողոք բառնալ, և եթէ իրենց բողոքը լսելի չլինէր, պարտաւորութիւն և միջոց ունէին խնդիրը մինչև իսկ Կեդրոնական Պարչութեան ներկայելու, ինչպէս որ Պ. Լեոնդ վարդապետի եղբօր ամուսնութեան խնդրոյն մէջ իրենց անտեղի պահանջումն յառաջ տանելու համար՝ կրցին ոչ միայն բողոքել առ Կեդրոնական Պարչութիւնն և Ազգային ժողովոյ վճռոյն դէմ անսասանել, այլ և համարձակեցան մինչև իսկ Ռ. Պրան դիմել և անոր առջև ժխտել Կեդրոնական Պարչութեան Հրու-

սաղէմի վանուց վրայ ունեցած իրաւասութիւնն.

Նկատելով որ յիշեալ երկու վարդապետք ըստ ուրթիւն պահած ըլլալով ցարդ՝ Երուսաղէմի միաբանութենէն մերժուելէ յետոյ գրգռուած վիճակի մէջ այսպիսի յայտարարութիւններ կրնեն.

Նկատելով որ այս յայտարարութիւնք Ս. Երուսաղէմի մատակարարութեան նկատմամբ ազգային լիաղօր պատուիրակին կատարած քննութեան արդիւնքը թերի հրապարակելու և պարտուց քանակութիւնը կասկածի ներքև դնելու համար՝ փաստի նշոյլ մը չեն ցոյց տար. և ինչպէս որ ի պաշտօնէ նկատողութեան ենթարկուելու համար՝ զուրկ են ըստ հանգամանաց՝ օրինաւորութենէ, նոյնպէս և ըստ էութեան զուրկ են ամենայն կարևորութենէ, վասն զի ինչ որ վանուց անցեալ մատակարարութեան նկատմամբ կը յայտարարէին, քննութեան բովէն անցած էին արդէն, և վերաքննութեան պէտքն հաստատելու համար օրինաց պահանջած հանգամանքները կը պակսէին. իսկ ներկայ մատակարարութեան գալով, ըստ վերջին կանոնագրի Ս. Աթոռոյ ելումտից հաշիւներն ամի ամի կը ներկայանան Կեդրոնական Վարչութեան, և քննութեան պահուն, երբ դիտողութիւնք տեղի ունենան՝ կրնան միշտ նկատողութեան առնուիլ.

Նկատելով որ Վահան վարդապետի այն յայ-

տարարութիւնը՝ թէ ինք միաբանութեան ընդհանուր բողոքանաց մասնակից է, կը վերաբերի այն վէճին՝ որ Ղ. Լեոնդ վարդապետի եղբօր ամուսնութեան խնդրոյն առթիւ ծագում առած է, և որոյ քննութիւնը կը պահանջէ, հետևապէս ուղղակի առնչութիւն չունենալով պարտուց խնդրոյն հետ, ըստ ինքեան բողոք մ՚է Ազգային Եբրեսփոխանական ժողովոյ որոշման դէմ, և Ս. Աթոռոյն պարտուց գոյութիւնն երկբայութեան ներքև թողելու հանգամանք չունի, որմէ կը հետևի թէ այդ տարտամ և անորոշ յայտարարութիւնք խնդրոյն դոյնը փոխելու նպատակաւ յերիւրուած են.

Նկատելով որ յիշեալ երկու վարդապետաց հետ վանքէն մեկնող երկու եպիսկոպոսունք և երեք վարդապետք, որք Ղ. Հան վարդապետի ակնարկած բողոքանաց մասնակցած էին, իրենց բողոքն յետս կոչած և ներողութիւն ստանալով ի շարս Մխիթարեանութեան ընդունուած են, և Մկրտիչ և Ղ. Հան վարդապետաց բռնած վերջին ընթացից դէմ բողոք բառնալով՝ ծանուցած են իրենց համամիտ չըլլան անոնց հետ.

Նկատելով որ Մկրտիչ վարդապետին՝ Ս. Աթոռոյ հասութից և ծախուց տարեկան քանակութեան մասին ցոյց տուած գումարն, ինչպէս նաև նշանակած բացառիկ հասոյթն՝ բոլորովին ենթադրական

և մասցածին հաշուոց վրայ հիմնեալ՝ չեն պատասխաններ հաշուետումարաց և իրականութեան, որ ցոյց կուտան թէ՝ Ազգին հասոյթք ըստ մեծի մասին ուխտաւորաց նուէրներէ գոյանալով՝ հաստատուն չեն, և ամեն տարի նոյն քանակութեամբ չեն արտադրեր։ Իսկ Վահան վարդապետ այնքան տեղեակ կը գտնուի պարտուց գոյութեան, որ նոյն ինքն 1876 թուականին անոր բարձման համար 20,000 լիրայի փոխառութիւն մը առաջարկող միաբաններէն մին եղած է, ինչպէս կը վկայեն Միաբանական Ընդհանուր ժողովոյ ատենագրութիւնք.

Ակատելով որ եթէ ստուգիւ նենգութիւնք տեղի ունեցած էին, և յիշեալ երկու վարդապետք գիտակ լինելով մինչև ցարդ լռելէ յետոյ՝ այսօր կը հրապարակեն, անշուշտ այս առթիւ իրենց վերադրելի մեղսակցութեան յանցանքը ուրիշ կերպիւ չպիտի կարենային թեթևցնել, այլ միայն ճշմարտութիւնը բացարձակապէս խոստովանելով առ Ազգային Վարչութիւնն։

Արդ՝ իրաց այս վիճակին մէջ՝ որովհետև իրենց եղած հարցմանց ուղղակի և բացորոշ կերպով պատասխանելէ նահանջեցին, և ջանացին իրենց յայտարարութիւններն սքօղել և պատրուակել, որպէս զի յաջողին անոնց բուն արժէքն անյայտ թողուլ և մոքերու վրայ անոնց ըրած գայթակղելի տպաւո-

բութիւնը բառնալու արգելք ըլլալ, որովհետև Ս. Աթոռոյ ելումտից արդի տեսուչ Արժ. Պ. Լեոնդ վարդապետն, որ վանական ելումտից հաշուակալութեան նորոգ հաստատեալ դրութիւնն ամենայն ճշդութեամբ ի գործ կը դնէ, արտաքսել տալու նպատակաւ իրենց ձեռք առած միջոցները տեղի տուած էին նոյն իսկ իրենց արտաքսման. որովհետև իրենց յայտարարութիւններն ուրիշ բան չէին են. թադրեր, այլ Երուսաղէմի Սրբազան Պատրիարքին և Միաբանութեան դէմ թշնամական զրպարտութիւններ, որոց ուժ տալու համար կը փորձէին պարտուց գոյութիւնը կասկածելի ցուցընել և գայթակղութիւն տարածել Ազգին մէջ, Պ. արչութիւնն՝ ինչպէս նաև պարտուց բարձման Յանձնաժողովն իրենց համագումար չորս նիստերու մէջ սոյն խնդրով զբաղելէ յետոյ՝ համոզուեցան թէ յիշեալ վարդապետաց արարքն արդիւնք են վրիժառութեան ոգւոյ, և ըստ ամենայն հաւանականութեան տեղի չպիտի ունենային եթէ Պ. Լեոնդ վարդապետի միջադէպը ծագած չըլլար, թէ իրենց ձեռք առած միջոցները ոչ միայն անվայել են իրենց եկեղեցական կոչման. այլև ընտակար Ս. Աթոռոյ և ազգին պատուոյն, հետևապէս մերժեցին միաձայն Մկրտիչ վարդապետի Ալրուագիծը, ինչպէս նաև Պ. ահան վարդապետի բերանացի յայտարարութիւն-

ները, և ազգային Վարչութիւնն իւր օգոստ. 12-ի նստին մէջ անարժան համարեց յիշեալ Մկրտիչ և. Վահան վարդապետներն ազգային պաշտօններ վարելու, և որոշեց իրաց վիճակը Կրօնային Ատենի ուշադրութեան մատուցանելով՝ յանձնարարել, որ ըստ Եկեղեցական օրինաց՝ այդ երկու վարդապետաց արժանաւոր պատիժը տնօրինէ։

Ի բացակայութեան Ս. Պատրիարք Հօր, Փոխանորդ Նորին

ԳԷՈՐԳ Ծ. Վ. ՐՈՒՍՃՈՒԳԼԵԱՆ.

27 Օգոստոսի 1882

Ի Պատրիարքարանի Հայոց Կոստանդնուպոլիս.

(Կնքեալ Պ-ր-ի-ր-ի-ր-ն-ի)

Անդամք Ազգ. Վարչական Խորհրդոյ

ՏԻԳՐԱՆ ԵՈՒՍՈՒՖԵԱՆ
Մ. ՄԱՄԻԿՈՆԵԱՆ
Ս. ԱԶՆԱՒՈՒՐ
ՄԻՔԱՅԷԼ ՄՈՄՃԵԱՆ

Անդամք Երուսաղէմի պարտուց բարձման Յանձնաժողովոյ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԿԻՒՄՇԵԱՆ
ՅԱԿՈԲ ՆՈՐԱՏՈՒՆԿԵԱՆ
Ա. Խ. ՋՈՒՆԴ
ՍԵՆԵՔԵՐԻՄ ՄԱՆՈՒԿԵԱՆ
Տ. ԲԱՐԱՂԱՄԵԱՆ

Վասն Ճշդութեան պատճէնիս կնքեալ։

(Կնքեալ Յ-ան-ն-ի-ս-ի-ն Ս. Ե. Պ-ր-ա-ղ-ա-ն Բ-ա-ն-ի-ն)

Թ.

ՊԱՐՀՅՈՆԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ԵՐՈՒՍԱՂԻՄԱՑ ՊԱՐՏՈՒՑ ԲԱՐՁՄԱՆ

Ա. Երուսաղիմայ պարտուց բարձման յանձնաժողովս իրազգած ըլլալով Երուսաղիմայ ազգային սուրբ Աթոռոյ պարտուց նկատմամբ հասարակութեան մէջ տարածուած այլեւայլ աննպաստ և գայթակղեցուցիչ տարաձայնութեանց, և իմանալով միանգամայն որ այս առթիւ շուկան և ուրիշ տեղեր ստորագրութիւններ ալ կը ժողովուին, թէեւ ցաւ մեծ զգաց իւր պաշտօնին կատարման այս նոր խոչընդոտին առջև, այսու ամենայնիւ խղճմտանաց պարտք համարեց այդ տարաձայնութեանց սկզբունքը և ինչ փաստերու վրայ հիմնուած ըլլալը անաչառ քննութեան ենթարկել. յուսով և բաղձանօք այդ հարցաքննութենէն կամ պարտքը ջնջելու կէտեր գտնել, կամ ճշմարտութիւնն երևան գալով՝ գայթակղեալ մտքերը շինելու յաջողիլ։

Այսու դիտմամբ Յանձնաժողովս այդ տարաձայնութեանց հեղինակները փնտռել, գտնել և զատ զատ հրաւիրել փութաց, և նախ մեղադրելով որ փոխանակ ասպիս անդին խօսելու՝ ուղղակի չէին դի-

մած յանձնաժողովոյս, որ պարտաւոր էր սիրով ուս-
կընդիր ըլլալ, խնդրեց իրենցմէ որ ապագայիրաբար
դիտողութիւններն մեզ յայտնեն և փաստերը ներ-
կայացնեն, միանգամայն անկեղծօրէն յայտ առնե-
լով իրենց՝ թէ ո՛չ միայն Յանձնաժողովս պատ-
րաստակամ է մտիկ ընելու, այլ նաև, եթէ իրա-
պէս հաշիւներուն մէջ զեղծում մը կամ սխալ մը
ապացուցուի և պարտքը զեղչելու յաջողուի, Ազ-
գին ծառայութիւն մը և այնպիսի նուէր մը ըրած
պիտի համարուին, զոր թերևս ազգային և ոչ իսկ
փարթամ մէ անհնար է ակնկալել։

Ընդ, պարտք կը համարիմք յայտնել թէ այս
առաջին և առանձնակի հարցաքննութենէն անհնա-
րին եղաւ մեզ լուսաբանել և ի հրապարակ ելած
տարաձայնութեանց հիմ մը, կռուան մը կամ ճշգ-
մարտութեան փաստ մը գտնել։

Ամբաստանողաց մին, Երժ. Վահան վարդա-
պետ Յակոբեան, որ ըստ մեր տեղեկութեանց՝ տունէ
տուն և աւելի վտանգաւոր բողոքարկուն էր, հակա-
ւակ մեր ամենայն թախանձանաց, լեղուապահ և
ձեռնպահ ըլլալով, սոփեստական մանուածապատ
առարկութիւններէ զատ՝ չուզեց որոշակի տեղեկու-
թիւն մը տալ, և յետ երկար ժամավաճառութեան
առաջարկեց գրաւոր հարցում ընել իրեն, խոստա-
նալով նոյնպէս գրով պատասխանը տալ։ Պէտք

եղած գլաւոր հարցումը տարբոյս յունիս 24 թըւականաւ ուղղեցինք նմա, բայց դարձեալ՝ որոշակի յայտնութենէ փախուստ տուող և գործն երկարաձգող պատասխանագիր մ՝առինք իրմէ։

Ամբաստանողաց միւսն, Երժ. Մկրտիչ վարդապետ, 32 յօդուածով ամբաստանագիր մի ներկայացոյց, որոյ ներքև ի մեր ներկայութեան զինքը պատասխանատու ստորագրեց։ Սակայն որովհետև նոյն ամբաստանագիրը պարտուց վերաբերեալ ինչ ինչ թեթև ակնարկութիւններէն զատ, աւելի և գլխաւորաբար վանական գժտութեանց և միաբանութեան Ընդամոց վրայ ամբաստանութիւններ կը պարունակէր, Յանձնաժողովս իւր ձեռնհասութենէն թերևս վեր նկատելով զայնս քննել, պատշաճ դատեց ամբաստանագրոյն վաւերացեալ մէկ պատճէնն Ազգային պատկառելի վարչական խորհրդոյ հաղորդել յատուկ նամակաւ և խնդրանք որ անյապաղ քննութեան ձեռնարկել և զարժանն տնօրինել բարեհաճի։ (Թուական նամակի 26 յունիս 1882)։

Յանձնաժողովս այս մասին պատասխանուոյ սպասելով, 8 յուլիս թուականաւ վերստին գրեց պատկառելի վարչական խորհրդոյն, խնդրուած տնօրէնութիւնը փութացնելու ստիպմամբ։ Եւ պատկառելի վարչական խորհուրդն 9 յուլիս թուական պաշտօնագրով պատասխանեց թէ, նոյն ամբաստա-

նագիրն ի նկատ առնելով, տեսած է որ անոր մէջ նշանակեալ խնդիրներն հին տարաձայնութեանց բովանդակութիւն մ'են, որք արդէն փակուած են և չեն կարօտիր նոր տնօրէնութեան. իսկ եթէ Յանձնաժողովս անոր մէջ քննութեան կարօտ կէտեր կը նշմարէ, կրնայ այդ մասին պէտք եղած քննութիւնը կատարել և արդիւնքը տեղեկագրել, և թէ Ազգ. Վարչութիւնը Երուսաղէմի վանքէն դուրս ելնող միաբաններն իբր արտաքսեալ նկատած է, և անոնցմէ շատեր յետս կոչած են իրենց այն բողոքները, զորս ուղղած էին մասնաւորապէս Երուսաղիմայ Ս. Պատրիարքին դէմ։

Յանձնաժողովս միւս անգամ 10 յուլիս թուական յատուկ նամակաւ փութաց խնդրել Պատկ. Վարչական խորհրդէն որ, եթէ բոլորովին իրեն պիտի յանձնուի քննութիւնը, անյապաղ օրէնսգէտ ընկեր մի տուի իւր կողմէ յանձնաժողովոյս, և այս մասին բացորոշ պատասխան մի։ Ասոր վրայ Ազգ. Վարչութիւնը, ի պատասխանի, 16 յուլիս թուական պաշտօնագրով հրաւիրեց զՅանձնաժողովս՝ այս խնդրոյն վրայ ի միասին բանակցելու։

Ահա այսպէս Ազգ. Պատկ. Վարչական խորհուրդն և պարտուց բարձման Յանձնաժողովս համագումար երկարաձիգ քանի մը ժողովանստեր կ'ընեն ի Պատրիարքարան, որոց մէջ նախ այդ խնդրոյն

վերաբերեալ բոլոր առեւնագրութիւնները, նամակները, բողոքները, որոշումները, վերջապէս ի սկզբանէ ի վեր եղած բովանդակ թղթակցութիւններն աչքէ կանցուին՝ կը կարդացուին. երկրորդ՝ խնդիրն ի՞նչ կերպով կամ. իրագիտական ի՞նչ ձեւի տակ քննութեան ենթարկելուն վրայ երկար խորհրդակցութիւններ կըլլան։ Այնուհետեւ նորոգ ներկայեալ ամբաստանագիրն առաջ առանձին կը կարդացուի եւ անոր պատասխանները կը լսուին, յետոյ յաջորդ նստին մէջ ամբաստանագիրն ստորագրող Երժ. Մը-կըրտիչ վարդապետ ի ժողով հրաւիրուելով եւ նորին ամբաստանագիրը միւսանգամ ամբողջովին կարդացուելով՝ իւրաքանչիւր յօդուածի, մանաւանդ ժողովին մութ գտած յօդուածներուն վրայ բացատրութիւններ կը խնդրուին։ Երժ. Վահան վարդապետ ևս կը կոչուի, որ ըստ իւր սովորութեան դարձեալ պատ ի պատ եւ փախստի պատասխաններ կուտայ։ Վերջապէս, չորրորդ նստի մէջ ընդ երկար բանակցելէ յետոյ՝ միաձայն հաճութեամբ պատճառաբանեալ վճիռը կը տրուի եւ կը ստորագրուի, որոյ պաշտօնական պատճէնը Ազգ. Վարչութեան կողմէ ազգային լրագրաց մէջ այս օրերս հրատարակուեցաւ։

Ա. Երուսաղիմայ պարտուց բարձման Յանձնաժողովս աւելորդ համարելով ամբաստանութիւն-

ներն և զանոնք ցրող փաստերը մի առ մի ներկայիս շարադրել, սա եզրակացութիւնը միայն կուգայ խղճի մտօք իւր կողմէն ևս յայտնել ողջամիտ հասարակութեան թէ՝ ոչ միայն ամբաստանութիւններէն և ոչ մին օրինաւոր փաստիւք և համոզիչ ապացոյցներով կարող չեղաւ հաստատուիլ, այլև ցաւ իսրտի նշմարեցինք որ անխիղճ սրտէ և ապերախտութեան վատ զգացումէ մը յառաջ եկած զբրպարտութիւններ էին, որ ժողովրդեան իբրև օրինակ և խրատատու կարգեալ դասէ և մանաւանդ երախտաւորեալ հոգևորական անձերէ, իրենց սնունդ, ուսումն, կարգ և աստիճան բաշխող նուիրական հաստատութեան մը դէմ յախուռն ի հրապարակ հանուեր էին, որովք դիւրաբորբոք հասարակութեան մտքերը գրգռեր, և՝ ինչպէս երբեմն լրագրապետաց ոմանց՝ ողջմտութիւնը խաբեր էին։

Այս յայտարարութեան վրայ կը յաւելումք յիշեցնել ի շինութիւն հասարակութեան գայթակղեալ մտաց, թէ կանխաւ Ազգ. Վարչութիւնը Ս. Էթոռոյն ստուար պարտքն երևան ելնելուն խնդիրը հասուն դատողութեանց առարկայ ընելով, վանօրէից խորհրդոյ և յատուկ պատուաւոր և հաշուագէտ երեք անձանց յանձնեց հաշիւները, որք մանրակրկիտ խուզարկութիւններ ընելով՝ հաշուետումարները քննեցին, պարզեցին, սրբագրեցին և չորս ամիս աշ-

խատելէ յետոյ, նոյնը ներկայացուցին Վարչութեան, որ զայնս միւսանգամ աչքէ անցնելէ և հաստատելէ յետոյ, բարձրաշնորհ Տ. Տ. Ներսէս Ս. Պատրիարք Հօր առաջարկութեամբ և Ազգ. Երեսփ. ժողովոյ 1879 տարւոյ օգոստոս 24-ի Ը. նստի որոշմամբ ստիպողաբար պարտուց բարձման Յանձնաժողովս անուանեց, Ս. Երուսաղիմայ պարտքը՝ որ ըստ հաշուոյ մինչև 1879 թուականի վերջը 28,000 ոսկւոյ մօտ կը հասնէր, վճարելու լիազօր պաշտօնով։

Յանձնաժողովս իւր պաշտօնը խղճի մտօք կատարելու համար, կարևոր դատեց այն ատեն՝ տեղւոյն վրայ միւսանգամ քննութիւն մ՝ընել տալ. փոխատու անձանց ձեռքն եղած պարտամուրհակները աչքէ անցնել՝ ստուգելու համար թէ արդեօք և իրօք կը համապատասխանե՞ն անոնք հաշիւներու մէջ նշանակուած թիւերուն։ Եւ երկրորդ, տեղւոյն հանգամանքներն ի նկատ առնլով պատշաճ դատուած կարգադրութիւններն ու տնօրէնութիւնները առաջարկել և ընել, նոյնօրինակ պարտք մը նորէն չգոյանալու համար։ Երդ, այս պաշտօնով և Յանձնաժողովոյս գրաւոր հրահանգներով Երուսաղէմ ուղեւորեցաւ Ազգային ընդհանուր ժողովոյ բազմամեայ միջոցին և քանի մը նստաշրջաններու մէջ Ատենապետութիւն ընող և հետևապէս ամենէն աւելի

Ազգին համարումը վայելող Պ. սեմ. Ասլանեան Սահ-
փան փաշան, որն որ իւր պաշտօնը կատարելով, հա-
շիւն ու համարը և ըրած անօրէնութիւնները ընդ-
հանուր ժողովոյ 1880 հոկտեմբեր 10-ի ծ-րդ նստին
ներկայացուց և շնորհակալեաց քուէարկութեան ար-
ժանացաւ։

Արդ, այսչափ նախազգուշութիւններով շրջա-
պատեալ գործողութիւն մը, մանրակրկիտ խուզար-
կութիւններէ իրրև բովէ հանուած ու զտուած հա-
շիւներն ելնել միւսանգամ քննութեան ենթարկել
առաջարկելը, և զայնս՝ պարտուց հետ ամենևին
յարաբերութիւն չունեցող և արդէն լուծուած ամ-
բաստանութիւններու հետ խառնել կնճռել նկըր-
ալը, և այն այնպիսի ատեն որ Ս. Աթոռոյ Արձ.
Գահակալն յատկապէս Պոլիս եկած է՝ գործոյն մը-
ղում մը տալու համար, ազգային նուիրական հաս-
տատութեան անխիղճ հարուած մը տալէն, խնդիրն
անլուծանելի վիճակի մէջ ընդկրկելէն և նորա կար-
գադրութիւնը անվերջանալի կերպով յետաձգելէն
ուրիշ արդիւնք չէր կրնար ունենալ, եթէ ապե-
րախտութեան և չարամտութեան չուզենք վերրն-
ծայել զայն։

Իրրև Ազգին անհատ և անդամ՝ մեք ևս այս-
պիսի բազմագումար և ստուար պարտքի մը առջև,
մանաւանդ ներկայ տարաբաղդ ժամանակիս մէջ,

ահարեկ և դժկամակ կը կենանք, և ծանրապէս ալ կը մեղադրենք զայն։ Սակայն, անաչառութեան պարտք է միանգամայն ծանուցանել թէ, եթէ ինչ ինչ աննախատեսութիւններէ, երևակայական յոյսերով շահաւոր դասուած ձեռնարկներէ, կալուածներու գնումէ, նորոգութիւններէ, անկանոն հաշուակալութենէ և զեղծումներէ այս պարտքն ըստ իմիք գոյացած է, եղած խուզարկութիւնները լիովին ապացուցին թէ՝ պարտքը մեծագոյն մասամբ Կեդրոնական Վարչութեան ստիպմամբ ժառանգաւորաց պանծալի վարժարան մը հաստատելէն, հարուստ տպարան մը կառուցանելէն և շատ բարեկարգութիւններ միահաղոյն մուծանելէն պատճառած է, ինչպէս նաև աղետալի պատերազմէ, ժամանակին դժբաղդ պարագաներէ, սովի և հնդախտի տարիներն և յետ այնորիկ՝ ուխտաւորաց նուազումէն, Եկեղեցեաց մէջ պնակի շրջեցումն և զանձանակաց հաստատումն խափանուելէն յառաջ եկած է։ Ս. Էթոռոյն Պատրիարքը ներսէ՞ն թէ դուրսէն ընտրուելու անպատեհ վէճն ալ, որով վեց տարւոյ միջոց թափուր մնաց իւր գահն, և որ անիշխանութեան միջոց կը կոչուի, ո՛չ միայն հանգուցեալ Յովհաննէս Պատրիարքի թողած վեց հազար ոսկւոյ պարտաստի գումարն մնաց, այլ և ի վերջոյ, այժմեան Պատրիարքն ի գահ ամրառնալու առեն՝ ի Պոլիս և ի Ս. Երու-

աղէմ հինգ հազար հինգ հարիւր ոսկւոյ չափ պարտք գտաւ, որոց վրայ ամ ըստ ամէ ծանր տոկոսներ բարդուելով, այս ընթացքով և ի սկզբանէ անտի 1861 թ. ի վեր, ելից ու մտից հաւասարակշռութիւնը խանդարուեր էր. խանդարում, որ թէև պարբերաբար առ ոչ անկ է զեկուցուած էր, բայց նոյնպէս դժբաղդ պարագայից բերմամբ անտես և անլսելի եղած ըլլալով՝ պարտքն այժմեան ահագին գումարին յանգած է։

Ինչ և իցէ, եղածն եղած է և պարտքը պարտք։ Իրաց այս վիճակին մէջ, իրականութեան այս հարկին առջև հաշիւներն անգամ մը քննելէ և ստուգելէ յետոյ, ազգին ուրիշ բան չէր մնար ընել, բայց եթէ՝ կամ պարտքն ուրանալ ժխտելով, կամ նոյնը հատուցանելու ձեռնարկել։ Այս երկայրաբանութենէն խուսափիլն անհնար էր։ Արդ, ազգը ներկայեալ յընդհանուր ժողով, ազգին արժանապատուութիւնն և սուրբ Աթոռոյ այժմեան և մանաւանդ ապագային վտանգալից վիճակն ի նկատ առնելով, չվարանեցաւ բնաւ։ Եւ յիրաւի, կրնա՞ր այլազգ տնօրէնութիւն մ՚ընել. միթէ կրնայի՞նք մեք՝ թէ ազգային և թէ կրօնական տէսակէտով պատկառելի և մեր նախահարցմէ իրրև ամենասուրբ աւանդ մեզ թողուած այդ սուրբ Աթոռն ազատելու համար անտարբեր և անկարեկիր մնալ։ Այո՛,

սուրբ Աթոռն և տէրունական նուիրական սուրբ տեղեր, ուր մէն մի քայլ և մէն մի հայեացք մէկ մէկ սրտայոյզ զգացմունք, ազգային և կրօնական մէկ մէկ յիշատակներ ի մեզ կը զարթուցանեն։ Արդ, Աբգարու դշխոյն, մեր Հեղինէն, քրիստոնէութեան առաջին թագուհին, իբրև առաջին Հայ յուխտ կերթայ, և Ս. Փրկչայ գերեզմանի, Համբարձման լեռան, Ձիթենեաց պարտիզի, Գողգոթայ բլրակին, Ս. Յակոբայ գլխատման տեղւոյն և ի Ռէթղէհէմ ծննդեան մարոյն վրայ տաճարներ կը շինէ, անդ կը մեռնի և կը թաղուի. նոյնպէս, նախախնամական զարմանալի զուգադիպութեամբ Հայոցս վերջին թագուհին ևս Մարիամ, մեր Լևոն վեցերորդի և Փենոնա դստեր հետ, գերութենէն ազատելով անդ կը դիմէ, իւր կենաց վերջին տարիներն անդ կ'անցուցնէ և Սուրբ Յակոբայ եկեղեցւոյ գաւիթը կը թաղուի. Թողլով մեծին Տրդատայ, Լևոն Գ-ի, Հեթումայ և ուրիշ թագաւորներու շինութիւնները, նախապարական տոհմերէն ամենքը կարծես թէ ի վեգ գալով իրենց բարեպաշտութեան ի յիշատակ 70 վանք կը շինեն անդ, յորոց ոմանք յոսին կան և մեծագոյն մասն աւերելով, այժմ ամ ըստ ամէ օտար տէրութիւնք մեծագումար ծախքեր ընելով կը փորձեն և զայնս երևան կը հանեն։ Պատմութիւնը կ'ապացուցանէ մեզ թէ Հայոցս փառաւոր ժամանակները,

ինչպէս նաև յեսին թշուառութեան մէջ ինկած ատենն անգամ, ի սկզբանէ ի վեր մինչև ներկայ դարս, Հռովմայեցւոց, Պարսից, Յունաց, Եգիպտացւոց, Սէլճուգներու, Լատին խաչակրաց և Տաճկաց տիրապետութեան ատեն, յարուցուած ամեն չարադէպ արկածից Ազգը կուրծք տուեր, դիմագրաւ կռուեր, սրբավայրը ազատեր, նորանոր արտօնութիւններ ստացեր, պարտքերը վճարեր և Օսմանեան բարեխնամ Տէրութեան շնորհքը հինգ դարէ ի վեր վայելելով, անվթար՝ քան զամենայն ազգս աւելի հարուստ ժառանգութիւն մը մեզ թողուցեր է։ Արդ, միթէ կրնայի՞նք մեք պատասխանատուութիւնը, ամօթը և անխիղճութիւն ստանձնել՝ այդ սուրբ աւանդը մեր օրերուն ի վտանգի և ի կորուստ մատնել թողլով։ Այս ոչ միայն սրբապղծութիւն, և մեր նախահարց տուած օրինակին համեմատելով աններելի ոճիր մ՚է, այլ ազգին ներկայ և ապագայ վիճակին նկատմամբ ալ մահացու հարուած. որովհետև աշխարհիս և օտարաց առջև ակնածելի անցեալ մ՚ունեցած ըլլալնուս և հետևապէս տակաւին կենսական ոյժ և յետ այսորիկ ալ յառաջդիմելու ընդունակութիւն ունեցող ազգ մ՚ըլլալնուս իրև ապացոյց՝ Սուրբ տեղեաց անվտանգ սեպհականութիւնն ու պահպանութիւնը կը համարին քաղա-

քակրթեալ ազգերն, որոց գահակալք, և ուանց գահաժառանգք անձամբ այցելելով ի Ս. Տեղիս, մեր Ս. Յակովբեանց վանուց ասպնջականութիւնն և Հայոցս ձեռքն եղած սրբավայրերու շուքը գնահատած, նոցա մեծարելի յիշատակը և մեր ազգին վրայ համակրալից տպաւորութիւն մ՚իրենց հետ տարած են անմոռաց, որոյ ի նշան իւրաքանչիւրն յուշարկեցին իրենց իւղանկարները՝ որք վանուց մեծ սրահը կը զարդարեն. զի արդարև Յերուսաղէմ մեր ձեռքն եղած մեծափառութիւնը տեսնելով և ամեն կողմ մեր ստորին կացութեան բաղդատմամբ, անդ երեք ազգք, Ասորիք, Խպտիք և Հապէշք՝ մեզ հպատակ ունենալով՝ մեծ Ազգի մը կարևորութիւնն ու համարումը կը ստանամք։

Բաց ասոնի, կարելի չէ անտեսել նաև ներկայ օգուտները՝ զորս յիշեալ վանքը ազգային տեսակէտով կընծայէ Հայ ազգին։ Թողում իր ճոխ տպարանը, որ այնքան նպաստաւոր եղած է ազգային՝ մանաւանդ եկեղեցական գրեանց ծաւալման. Թողում բարեկարգ կազմարանն, ձուլարանն, ամեն կարևոր գործիքներովն օժտեալ, հարուստ թանգարանն՝ որոյ մէջ 1700 հատորէն աւելի միայն ձեռագիր կայ, գեղարանն և լուսանկարչական գործարանն որոց ամենքը՝ Մխիթարեանութիւնն այժմեան գահակալ Նոսյեալ Արքեպս. Պատրիարքին կը պարտաւորի

Երուսաղիմայ վանքն ունի իւր ժառանգաւորաց բարեկարգ վարժարանը, ուսկից ելած է այն հմուտ, ձեռնհաս և ընտիր եկեղեցական դասը, որ սփռուած է այսօր զանազան գաւառաց Առաջնորդութեանց գլխաւոր կեդրոնները, և որոյ արդասիքն են Սուրբ Տեղեաց սպասարկու անձնուէր միաբանք՝ որք անձնուրաց աշխատութեամբ դրացի ազգաց պարբերական ձեռնաձգութեանց ընդդէմ կրցած են անաղարտ պահել Ս. Աթոռոյ փայլն ու պատիւը, վասն Ազգին կրելով ամենայն տառապանք՝ որ այս անձնազոհ միաբանութեան դարաւոր ճակատագիրն եղած են։ Իսկ թէ ի՞նչպէս կապրի միաբանութիւնը, իրօք ցաւ է ըսել թէ՝ ի մեծաց ցփոքունս ամենախեղճ և անբաւական պարէնիւ կը շատանայ և իւր ծառայութիւնն ոգւով չափ մատուցանելով Սուրբ Տեղեաց, փոխարէն՝ այս սակաւապէտ կենաց կարօտութիւնը կը տանի լռին, արդահատելի վիճակ մը՝ զոր կը վկայեն նաև ի Ս. Տեղիս այցելող ուշադիր ականատեսք։

(Նոռնոլուին.—Ս. Յակոբայ պայծառաշէն վանքն ունի իւր մէջ արքայավայել վեհարանը, գրքատունը, վեհ ճեմարանը, լուսանկարչական գործարանը, տպարանը, հոգեւոր դարպասատունը և ուխտաւորաց համար 300-էն աւելի սենեակներ, այլևայլ թաղերու բաժանուած։ Ս. Յակոբեանց

հրաշակերտ եկեղեցին միայն՝ իւր մէջ 13 տաճար և մատուռներ կը պարունակէ, որք են, Ս. Էջմիածին, Ս. Հռիփսիմեանց և Գայիանեանց, Սրբոց Պետրոսի և Պօղոսի, Ս. Աստփանոսի՝ 3 սեղաններով, Գէլեազրի մատուռը, Ս. Մինաս 2 սեղաններով, Ս. Մակար, Ս. Նշան, Երկոտասան Առաքելոց, Ս. Համբարձում, Հոգւոյն սրբոյ մատուռը, Ս. Թորոսի եկեղեցին, Ս. Մերկեռիոս, և իւր մէջ ամփոփեալ հնութիւններովն, նախնեաց անգին յիշատակարաններովն ու ճարտարարուեստ ձեռակերտներովն ազգին ամենէն հարուստ թանգարանը պէտք է համարուի)։

Արդ, Ս. Աթոռոյ անցելոյն վեհապանծ յիշատակները, ներկայիս մէջ վայելած կարևորութիւնը և ապագային մէջ անկէ ակնկալեալ օգուտները, ինչպէս նաև Ս. Երուսաղիմայ մէջ ազգային սեպհականութեանց յարգն ու արժանիքը գնահատելով մէկ կողմէն, և միւս կողմէն Իսփիւռս և յայլևայլ աէրութիւնս տարածուած ընդհանուր ազգին Ս. Տեղեաց վրայ տածած ջերմեռանդութեան վրայ վստահ, Ազգային Կեդր. վարչութիւնը չվարանեցաւ Ս. Աթոռն արդի տագնապալից վիճակէն ազատելու և անոր ապագայն ապահովելու ձեռնարկել, վերոնշանակեալ քննութիւններն ընել և պարտուց բարձման Յանձնաժողովս անուանել։

Ուսոի այս համոզմամբ և ազգային նուիրական պարտք մը կատարելու զգացումով Յանձնաժողովս իւր բարձրաշնորհ Նախագահին հետ յանուն Ազգին վստահութեամբ ձեռք առնելով այս ծանրակիր պաշտօն, մի կողմէ 1880 տարիէն սկսեալ երեք տարւոյ համար անձնիւր ½ այ անձէ տարեկան 3 արծաթ դահեկան նուէր հաւաքելու կարգադրութիւնն ըրաւ, և միւս կողմէ Երուսաղիմայ Ս. Աթոռոյն սեպհական, բայց հեռաւոր, ապարդիւն և անօգուտ ծախք պատճառող և պայմանով կատկեալ չեղող կալուածոց քննութեան զբաղեցաւ, որպէս զի պարտուց օր յառաջ վճարման համար հանգանակութենէ ստացեալ մասը նոյն կալուածոց վաճառմամբ լնու, և ի վերջոյ հանգանութիւնն յառաջ տանելով՝ նոր և արդիւնաւոր կալուածոց ստացման յատկացնէ յաւելեալ արդիւնքը։

Սակայն ցաւ է ըսել թէ, Յանձնաժողովոյս ջանքերն՝ հանգանակութեան փութով արդիւնաւորման համար, չպսակուեցան ցարդ, զի եթէ մայրաքաղաքիս թաղերէ երկուքն կամ երեքը կատարեցին հանգանակութիւնը, շատերը դեռ բնաւ չգործադրեցին զայն. իսկ գաւառներէ մի քանին միայն կրցան դեռ մասամբ կատարել հանգանակութիւնը և ամենամեծ մասը գաւառաց դեռ չեն կատարած զայն։ Նոյնպէս Ռուսիոյ հայաբնակ քաղաքաց մէջ,

հրամանաւ և կոնդակաւ Պ. Հ. Հայրապետին, հանգանակութեան պաշտօնով ղրկուած Երուսաղիմայ Միաբան երկու Եպիս. նուիրակ վարդապետաց ձեռամբ սկսուած նպաստահաւաքութենէն տակաւին արդիւնք չէ հասած Յանձնաժողովոյս։

Գալով կալուածոց վաճառման գործոյն, Երուսաղիմայ Ս. Աթոռոյ հետ համաձայնութեամբ Յանձնաժողովոյս ձեռք առած կալուածաքննութիւնք կատարուելէ յետոյ, և ոչ մի կալուած տակաւին չէ վաճառուած, որովհետև Երուսաղիմայ Միաբանութիւնն իւր խղճին դէմ նկատելով վանուց սեպհականութեանց ծախուիլն վասն պարտուց, իւր բարձրաշնորհ Նախագահին հետ մինչև վերջին ատեններս Լրկարաձգած էր գործառնութիւնքն այս մասին։

Եւ սակայն պարտքը տարուէ տարի դիզուելու վրայ ըլլալով, Ս. Աթոռոյն պարտուց բարձումը փութացնել անհրաժեշտ էր, վանքը վտանգալից վիճակէ և կորստենէ ազատելու համար։

Հետևապէս հարկ եղաւ Երուսաղիմայ Ս. Աթոռոյ Գահակալ բարձրաշնորհ Տ. Դասյի Ս. Պատրիարք Հայրն մայրաքաղաքս հրաւիրել, այլևայլ միջոցներու վրայ ի միասին խորհելու և մանաւանդ կալուածոց վաճառման մասին համաձայնութիւն մը գոյացնելու և նուիրահաւաքութեան նոր մղումն տալու համար։

Եւ ահա այսօր Խարձր. Տ. Եսայի Արբազան մայրաքաղաքս հասած է, և Յանձնաժողովոյս ջանից զուգորդելով իւր հայրական ազգու ճգունքն, պատրաստուած է անձնադիր ոգւով իւր Ս. Աթոռն և Ս. Յակոբեանց վանքն միանգամ ընդ միշտ ազատել վտանգաբեր պարտուց լուծէն, և միանգամայն կարող անձերէ և ըստ կարի իւրաքանչիւր ազգայիններէ յատուկ նուէր մի ևս հաւաքելու ձեռնարկած է։

Արդ, իրաց վիճակն և գործոյն յո՛ր կէտ կայանալն այսպէս մերկապարանոց և անաչառապէս աղգին առջև տարածելով, Երուսաղիմայ Ս. Աթոռոյ պարտուց՝ բարձման Յանձնաժողովս՝ միւսանգամ հրապարակաւ կը յայտնէ իւր ցաւն՝ այս վերջին օրերս Երևան եկած տարաձայնութեանց վրայ, որ իւր յետին ճիգն ընդունայն հանելու կը նկրտին, և պաշտօնապէս կը յայտարարէ թէ բոլոր ըսուածներն ըստ ամենայնի անհիմն և պարզապէս զրպարտութիւն են. չվարանիր արտայայտել իւր համոզումը թէ՝ ձեռք առնուած միջոցներով՝ առանց ազգէն մեծ զոհողութիւն մը պահանջուելու՝ ընդհանրութենէն սակաւ ինչ համակրութիւն միայն գտնելով այդ պարտուց բարձումն հնարաւոր է։ Եւ ի վերջոյ, Յանձնաժողովս կը ծանուցանէ միանգամայն թէ՝ իւր խիղճն հանդարտ է՝ իրեն յանձնուած պաշտօնն իւրովանն սրտի մտօք հանգ հանելու համար պէտք

եղած ծիգն ու աշխատութիւնը չգլանալուն վրայ, որոյ ապացոյց կրնան ըլլալ իւր 65 նիստերու և խորհուրդներու կանոնաւորեալ արձանագրութիւնքն, ատ և ի գաւառս 1690 համարօք գրած նամականին, ինչպէս նաև բոլոր մանրամասն հաշիւներն ու տետրակները, զորս, սնապարծութիւն չհամարուի ըսել, իբրև օրինակ կընծայէ ամէն անոնց՝ որ պայնս քննել և թղթատել յօժարին. և կը յաւելու թէ՝ թէպէտ և անվկանդ մինչև ցայսօր շարունակեց իւր պաշտօնը, սակայն եթէ այսուհետև ևս նոյնպիսի անտարբերութեամբ պատասխանուի իւր ձեռնարկին՝ պաշտօնական մարմնոց և Ազգական խորհրդոց կողմանէ, պարտաւոր է ուրիշներու և թերևս աւելի բաղդաւորներու թողուլ իւր պաշտօնը և ընդհանուրին վրայ բեռնաւորել Ս. Աթոռոյն վանքի մէջ ձգուելու պատասխանատուութիւնն։

Ի դիմաց Ս. Երուսաղիմայ պարտուց բարձման Յանձնաժողովոյ

ԱՐԻՒՐԴԷՐ
Ա. Խ. ՋԱՒԻՆԴ

ԱՐԻՒՐԴԷՐ
ՅՈՎՀ. ԿԻՒՄՇԵԱՆ

16 Հոկտ. 1882

Դալաթիա.

ՀԱՇՈՒՆՑՈՑ

1881—82 ԱՄԱՑ

ԵՒ ԵԼԵՒՄՏԱՑՈՑ

1882—83 ԱՄԱՑ

ՍՈՒՐԲ ԵՐՈՒՍԱՂԻՄԱՑ ՎԱՆՈՒՑ

Գերապատիւ սիրելի մեր ի Տէր.

Ս. Աթոռոյս 1881—82 տարւոյ հաշուեցոյցն ու 82—83 տարւոյ համար ենթադրեալ ելեւմտացոյցը Միաբ. Ընդհ. Ժողովէն վաւերացեալ՝ և յատուկ տեղեկագրով մի հատած լինելով՝ ներփակեալ Ձեր Սիրելիութեան կը ղրկեմք ներկայացնել Ազգ. Երեսփոխանական Ընդ. Ժողովոյ։

Ընդ նոսին կը կցեմք նաև Միաբ. Ընդհ. Ժողովոյ կողմէն առ մեզ ուղղուած պաշտօնագրին պատճէնը՝ հաշուոց հետ անկ եղած տեղը ներկայացնել։

Մաղթելով Ձեզ կարողութիւն,

Ողջունիւ հայրական սիրոյ

Մնամք Աղօթարար

ԵՍԱՅԻ ՊԱՏՐԻԱՐՔ.

1882 Սեպտ. 22.

Ամենապատիւ Սրբազան Հայր, Նախագահ Ազգ. Եպիսկոպոսական Պատ. Ժողովոյ.

Ս. Աթոռոյս Միաբ. Ընդհ. Ժողովն իւր Տնօ. Խորհրդոյ անցեալ 1881—82 տարւոյ համարատուութեան տեղեկագիրը, տարեկան ելմտից հաշուեցոյցը և ներկայ 1882—83 տարւոյ Եելմտացոյցը ըստ օրինի ընդունելով ստուգելէն և վաւերացնելէն յետոյ, նոր կանոնագրով (Յօդ. 44) ստանձնած պարտաւորութեան համեմատ ներկայիս իւր համարատուութեան Տեղեկագիրը կ'ուղղէ առ Ազգ. Եպիսկոպոսական Պատկ. Ժողովն՝ ընդ նմին մատուցանելով 1881—82 տարւոյ ելմտից հաշուեցոյցը և 1882—83 տարւոյ ենթադրեալ Եելմտացոյցը։

Թէև անցեալ տարի 1880—81 տարւոյ ելմտից հաշուեցոյցը և 1881—82 տարւոյ ենթադրեալ Եելմտացոյցը՝ 1881 Յունիս 19 թուականաւ մասնաւոր Տեղեկագրով մը Միաբ. Ընդհ. Ժողովոյն կողմէ Ձեր Ս. Սրբազնութեան հաղորդուելուն առթիւ՝ ըստ նոր կանոնագրի տրամադրութեան ընտրուած Տնօ. Խորհրդոյ անդամոց անուններն ծանուցուած էին, սակայն Միաբանութեան մէջ անցեալ տարի ծագած միջադէպի մը պատճառաւ (որ պահ մը Միաբանութիւնը անիշխանութեան մէջ ձգելէ յետոյ Ազգ. Կենդրոն. Վարչութեան անօրէնութեամբ կարգադրուած լինելով, ծանօթ է Ձեր

Արքաղնութեան և Ազգ. Խորհրդոյն) Օգոստոս-Հոկտեմբեր ամսոց մէջ փոփոխութիւններ լինելով՝ յետ ամենայնի Տնօ. Խորհուրդը ամբողջացած էր հետեւեալ կերպիւ, (բայց ի լուսաբարապետէն, որ անփոփոխ անդամ է.)

Գերապատիւ Յարութիւն Եպիսկոպոս-Տեսուչ յարաբերութեանց կամ Պատր. Փոխանորդ.

Երց. Ղուկաս Ծ. Վարդ.-Կալուածապետ
„ Գաբրիէլ „ -Տնտեսապետ
„ Ղևոնդ „ -Տես. Երկամից
„ Գէորգ „ -Ուսումնապետ,

որք պիտի վարեն իրենց պաշտօնը ցկերջ 1882—83 տարւոյ։

Այսպէս միաբանական Ընդհ. Խորհրդի Տեղեկագրիս պատկանած տարեշրջանի սկիզբն նոր կանոնագիրը գործադրութեան դնելով՝ որոշած էր իւր բոլոր գործառնութիւնները հետզհետէ նորա տրամադրութեանց համաձայնացնել, և այս եղանակաւ իւր ամէն պաշտօններն ու կարգադրութիւնները նոյն հիման վրայ հաստատել, սակայն ինչպէս ամէն նոր ձեռնարկ՝ նոյնպէս և այս՝ անխուսելի դժուարութեանց և խափանարար արգելքներու հանդիպելով, հակառակ միաբանութեան բաղձանաց, անկարելի եղած է ամբողջապէս ի գլուխ հանել սոյն տարե-

շրջանի մէջ, որով հարկ եղած է բաւականանալ գլխաւոր տրամադրութեանց գործադրութեամբ։ Իրաց այս վիճակին մէջ, պէտք է պատահական դժուարութեանց և արգելքներուն հետ ի հաշիւ առնուլ նաև Ս. Աթոռոյ ներկայ բացառիկ վիճակը՝ Վարչական և Նիւթական դժուարութեանց և Միաբանական անդամոց նուազութեան կողմանէ, որք տեւական հանգամանք մը ստացած լինելով՝ կը սպառնան բացառիկ վիճակի մէջ թողուլ Ս. Աթոռոյ գործոց կանոնական անօրէնութիւնները։

Այն ընդհանուր բացատրութենէն յետոյ կը փութամք համառօտիւ յառաջ բերել Միաբանութեան կանոնական համարատուութեան՝ Մէջբանէն, Յաքոբէրդ-Ընէանց և Ս. Տեղէաց, Նիւմպէց պարտոց վճարման և նորա յարակից խնդրոց վերաբերեալ հետեւեալ գլխաւոր մասերը։

Միաբանական կազմութիւնը, որ Ս. Աթոռոյ պէտքը լեցնելու համար ըստ կանոնագրի պէտք էր բովանդակել, 5 եպիսկոպոս, 50 վարդապետ, 18 սարկաւագ, 16 դպիր, 30 ժառանգաւոր (Ս. տարւոյ համար), 82 միաբան և 34 մայրապետ. այժմ միայն կը պարունակէ 5 եպիսկոպոս, 38 վարդապետ, 3 սարկաւագ, 10 ուրարակիր, 27 ժառանգաւոր, 60 միաբան և 30 մայրապետ, բոլոր մերձաւոր և հեռաւոր բացականերն ու անկարող ծերու-

ինները միասին հաշուելով։ Այն տարեշրջանի մէջ Ս. Աթոռոյ սուիպողական պիտոյից համեմատ ձեռնադրութիւն մը կատարուելով սարկաւագութենէ յաստիճան վարդապետութեան կոչուած են Արժ. Նիկողայոս, Պետրոս, Գրիգորիս, Մարուքէ և Տըրդատ վարդապետք։ Այն տարուոյ մէջ Միաբանութիւնը նորեկ Միաբանական անդամ չունենալէ զատ, երկար ժամանակ ներողամտութեամբ սպասելէ յետոյ պարտաւորուած է Միաբ. անդամոց ցանկէն ջնջել անցեալ տարի ծանօթ միջադէպին առթիւ Ազգ. Կեդր. Վարչութեան տնօրէնութեանց անսաստելով մեկնող և ի Կ. Պոլիս մնացող Արժ. Մկրտիչ և Վահան Յակոբեան վարդապետաց անունները, իրենց հանրածանօթ ապօրինի արարմանց և անտեղի չարախօսութեանց համար, որով փորձեցին ժողովուրդը գայթակղեցնել և Ս. Աթոռոյ պարտուց բարձման հանգանակութիւնը խափանել ի վնաս Ս. Աթոռոյ և Ազգին։ Գալով Ս. Ուխտիս անդամոց պաշտօնավարութեան և հաւատարիմ ծառայութեանց համար լինելիք վարձատրութեանց, Միաբանական Ընդհանուր Ժողովն պարտք կը զգայ խոստովանիլ թէ Ս. Աթոռոյ ներկայ անձուկ վիճակին, նաև այս առթիւ եղած ծանր զբաղմանց և մտահոգութեանց պատճառաւ՝ անկարող մնացած է որ և է տնօրէնութիւն մ՚ընել։

Ըստ տրամադրութեան կանոնագրի 64-րդ յօդուածին Ս. Աթոռոյ Յառ. Վարժարանի դրութիւնը նոր ծրագրին համաձայնեցնելու համար, արդէն 1880 թուականի Օգստոսին միջոցները գտնուած աշակերտք արձակուելով, և հետզհետէ նոր ընկներ ընդունուելով, ներկայ տարւոյ սկիզբն՝ կազմուեցան երեք դասարաններ՝ աշակերտաց թուոյն համեմատ, որ 25-ի կը յանգէր, որք մի կողմէն Եկեղեցական դպրութեան պաշտօնը վարելով հանդերձ, կը պարապին կանոնագրով ծրագրեալ ուսմանց։ Նոյնպէս կը շարունակուի Ս. Աթոռոյ կողմէն քաղաքիս երկսեռ վարժարանաց, ինչպէս նաև Յոպպէի և Ռեթղէհէմի դպրոցաց հոգատարութիւնը. բաց յայսցանէ Միաբանութիւնս նպաստած է նաև Ազգ. Միացեալ և Փարիզի Հայկազեան ընկերութեան, ինչպէս նաև գաւառական մասնաւոր դպրոցաց, ձրի գրքեր նուիրելով։

Միաբանական ուխտս ըստ կանոնական պարտաւորութեան հոգ տարած է մի կողմէն Ազգային իրաւանց մէջ կորուստի տեղի չը տալով հանդերձ, միւս կողմէն ըստ առաջնոյն պահպանել իւր յարաբերութիւնքը ընդ կառավարութեան, ընդ օտար Ազգս և հետևակս (Խոպաի, Ասորի և Հապէշ), ընդ Մայր Աթոռոյ Էրարատեան, ընդ Ազգ. Կեդրոնական Վարչութեան և ընդ թեմական ժողովրդեան։ Նոյն յա-

բարեբական խնդրոց մէջ գլխաւորն է Ասորւոց հեռ պատահած վէճը.—Ասորիք ի Ս. Յարութեան տաճարը՝ Յովսէփ Արիմաթացւոյ մատուռին մէջ, մեր Տեսչին միջոցաւ նորոգուած փոքրիկ դարակի մը գործածութեան խնդիրն առիթ բռնելով, մեր անդ գտնուող սակաւաթիւ Միաբանները գանակոծած և վիրաւորած էին, սակայն Կառավարութեան ջանից շնորհիւ յարձակողաց յանցանքն ստուգուելէ յետոյ, Ասորւոց կողմէն յայտնուած զղջմամբ՝ և Վ. սեմ. Կառավարչին միջնորդութեամբ՝ պատուաւոր հատուցումն լինելով մեզ, յարաբերութիւնք նախկին վիճակին վերածեցան։ Հապէշաց Միաբանութիւնն ևս, որ 2 տարիէ ի վեր իւր Տեսչին մեքենայութեամբ դաղարած էր իւր օրական սովորական պարէնը Ս. Աթոռէս ստանալէ. և հետամտած էր մեր հետևակայութենէ անջատուելով՝ Հելլենական պաշտպանութեան տակ մտնելու, տակաւին մեծամասնութեամբ կը հետևի իւր Տեսչին. այս մասին Միաբ. Վարչութիւնը ժամանակի պարագաները նկատելով կը յուսայ որ վերջապէս պիտի յաջողի իրաց նախկին վիճակը հաստատել, և այժմէն նոցա Միաբանութեան մէկ մասը՝ իրենց Տեսչին ապօրինի վարմանց դէմ բողոքելով բաժնուած են, և ըստ առաջնոյն Ս. Աթոռոյ հովանւոյն տակ մնալով՝ իրենց օրական պարէնն կ'ընդունին։ Իսկ Ս.

Ծննդեան իրաւանց մասին ընդ Հայնս բաղում տարիներէ ի վեր առ կախ Ցեացած խնդիրները, որոց մասին Միաբ. Վարչութիւնը դադրած չէ իւր բողոքները կրկնելէ առաջի Ռ. Դրան և տեղական Կառավարութեան, նոյն կը ցնան և պատեհ առթիկը կը կարօտին։ Պէտք չէ անտես առնել թէ սոյնպիսի խնդրոց դարմանը պարտուց բարձման և նորա յաբակից դժուարութեանց յաջողութեամբ լուծուելէն կախումն ունի։

Դալով տարեկան ելեմտից վիճակին, ինչպէս ներփակեալ հաշուեցոյցէն կը տեսնուի. 1881—82

տարւոյ ծախքն եղած է	967,695 11
արդիւնքը	702,987 17
Որով տարեկան ելեմտից բացն . .	264,707 34

Մինչդեռ տարւոյն սկիզբը ենթադրեալն էր.

Ծախք	1,000,000 —
Արդիւնք	825,000 —
Բաց	175,000 —

Հետեւաբար տարեկան ելեմտաբը ենթադրեալէն (264,707 $^{34}/_{40}$—175,000) 89,707 $^{34}/_{40}$ աւելի բաց մը թողած է, որ արդեանց կամ հասութից նուազութենէն յառաջ եկած է։

Միաբանական Ընդհ. Յողովն 1881—82 տարուց սկիզբն Յելեմտացոյցը քուէարկած պահուն՝ նըկատելով որ ենթադրեալ 175,000 ղրշի բացը գոցելու և ելեմուտքը հաւասարակշռելու համար ամեն միջոց կը պակսի, յանձնարարած էր Տնօր. Խորհրդոյն որ ծախուց մէջ ամեն կարելի եղած խնայողութիւններն ու զեղչումներն ընէ, սակայն ստուգելով որ անկարելի եղած էր իրաց ներկայ վիճակն առաւել սեղմել, և նկատելով որ անանխատեսեալ ծախքեր և սեղած են (ինչպէս՝ նպաստ տրուած գրոց արժէքն 5000, վէճերու 6850 $^{25}/_{40}$, Ռերիոյ կալուածոց վարձքերէն օգնեցած ապառիկներ 5764, և Յոպպէի ծովեզերեայ պարսպի անհրաժեշտ եղած մասնակի նորոգութեան ծախքը 13888 $^{5}/_{40}$) բովանդակ ծախուց 967,695 $^{11}/_{40}$ համագումարը գոհացուցիչ գտաւ։

Իսկ տարեկան արդիւնքը ենթադրեալէն 122,012 $^{25}/_{40}$ նուազ եղած է, որոյ պատճառներն են գլխաւորաբար, 1) Ընդհ. կալուածոց կարգէն՝ Ռերիոյ, Տիգրանակերտի և Պարնոյ կալուածոց արդիւնքները, որոց հաշիւները դեռ եկած չեն, և որոց համար 44,000 ղրշ ենթադրեալ էր։ 2) Տպարանի վաճառեալ գրքերէն և այլ տպագրութիւններէն գոյացած արդիւնքը՝ նոր տպագրեալ գրոց և տպարանի զանազան պիտոյից գործածուած լինե-

լով՝ ապարանի համար ենթադրեալ 20,000 ղրշ զուտ արդիւնքը չէ գոյացած։ Եւ 3) Բարեպաշտական ընդհանուր արդիւնքը՝ փոխանակ 385,000 լինելու՝ եղած է միայն 316,699 $^{17}/_{10}$ ղրշ։

Տարեկան ելևմտից վերոգրեալ կերպիւ յառաջ եկած անհաւասարակշռութեան պատճառաւ Ս. Աթոռոյն Եկեղեցոյ ելևմտից բաց, որ

1881 Ապրիլ 30-ին էր միայն . .	3,237,344 09
1881—82 տարւոյ ելևմտից բացն ևս վրայ գալով	264,707 34
1882 Ապրիլ 30-ին եղած է . .	3,502,052 03

Ս. Աթոռոյ շահ և զէնի պատկերն եղող տարեկան հաշուեցոյցի բովանդակութիւնը հանդերձ բացատրութեամբ վերոգրեալ կերպիւ յառաջ բերելէն յետոյ, կը յաւելումք թէ՝ հաշուեցոյցին ստորև գրուած կշիռը Ս. Աթոռոյ 1882 Ապրիլ 30-ի ընդհանուր հաշուեկշռոյն բովանդակութիւնն է, ուր կը տեսնուի թէ տոկ. պարտուց գումարն եղած է 30,486,512 ղրշ կամ գրեթէ 35,000 Լիրա Օսմ։

Ներկայ 1882—83 տարւոյ համար քուէարկեալ Եկեղեցոյցը, որոյ բովանդակութեան օրինակն է ներփակեալը, կը ներկայացնէ 1882—83

տարւոյ համար ենթադրեալ ծախք .	1,000,000—
արդիւնք	815,000—
որով ենթադ. ելևմտից բացն կը լինի .	185,000—

Սակայն պէտք չէ մոռնալ, որ բարեպաշտական արդեանց համար ենթադրեալ գումարը 360,000 ղրշ անհաստատ է, և յաջող պարագայից մէջ միայն կրնայ գոյանալ. ուստի բարեպաշտական արդեանց առաւել կամ նուազ անյաջող լինելուն համեմատ՝ ելևմտից քաջն ևս կը ստուարանայ, ինչպէս եղած էր անցեալ տարի։

Այս վիճակին մէջ քանի որ տոկոսաւոր պարտքն անվճար կը մնայ, անկարելի է ելևմտից հաւասարակշռութիւն հաստատել, վասն զի ոչ ծախքերը կարելի է զեղչել և ոչ արդիւնքներն աւելցնել. և յայտնի իսկ է եթէ հաւասարակշռութեան խանգարման միակ պատճառն է այժմ այն մեծագումար տոկոսը, որ ամեն տարի կը վճարուի տոկ. պարտուց համար, հետևաբար իրաց ներկայ վիճակովը դատելով՝ Տոկ. պարտուց վճարումն է դիակ դիրոց ելևմտից մէջ հաստատակշռութիւն հաստատելու։

Իսկ պարտուց վճարման մասին Միաբանութիւնն իւր կողմէն ծախուց խնայողութեան, տոկոսաց սակի նուազման և արդեանց առաւելութեան ըստ կարելւոյն հոգ տանելէ զատ ուրիշ միջոց չունենալով ակնդէտ կը սպասէ պարտուց բարձման Ազգասէր Յանձնաժողովոյ ձեռնարկութեանց յաջողութեան, և առ այս ջանք ըրած է ամեն դիւրութիւն ընծայել բարեջան Յանձնաժողովոյն. որով համա-

կերպած է նորա հետևեալ տնօրէնութեանց, 1. Ս. Աթոռոյ ի զանազան գաւառս գտնուած ինչ ինչ ապարդիւն կալուածոց վաճառման, և 2. Ամեն. Տ. Տ. Նասայի Ս. Պատրիարքի անձամբ ներկայութեան ի Կ. Պոլիս՝ հանգանակութեան նոր մղում մը տալու և արդիւնաւորելու համար։ Սակայն ցաւալի է, որ հակառակ Նորին Բ. Սրբազնութեան երկար ժամանակեայ ներկայութեանն ի Կ. Պոլիս, զեռ որ և է արդիւնք մը տեսնուած չէ։ Աւելորդ կը համարիմք դիտել տալ թէ այսպիսի անյաջող վիճակի մը (մանաւանդ եթէ քիչ մ'ևս երկարի) վախճանը՝ անկարելի է որ ՀԷԱՍԱԿԱՐ հետևանքներ չունենայ, և Նշանաւոր ծանրագոյն տագնապի մը չառաջնորդէ, որ որչափ յապաղի, այնքան աւելի ծանր և վտանգաւոր պիտի լինի, ի ՀԵԱՍ Ս. Աթոռոյ և Ազգին։

Ուստի Սրբազան Հայր, Ս. Աթոռոյս Միաբանական Ընդհ. Ժողովը ներկայ համարատուութեամբ իւր կանոնական պարտականութիւնը կատարելով, և իւր ներկայ տագնապալի վիճակն անգամ մ'ևս բացատրելով, լիայոյս կը թախանձէ զՁեր Բ. Սրբազնութիւնը, զՊատկ. Ազգային Ժողովն և նորա կարգած պարտուց բարձման Ազգասէր Յանձնաժողովն, որ հաճիք շարունակել Ձեր ազգասիրական ջանքերը, վերջնական և ազդու ձեռնարկութեամբ պարտուց անմիջական վճարման արդիւնաւոր միջոցն

տնօրինելու՝ յաջատութիւն և ի պայծառութիւն Ս. Աթոռոյս և ի փառս Ազգին։

ի Դիմաց Միաբ. Ընդհ. Ժողովոյ Ս. Աթոռոյն Երուսաղէմի ի բացակայութեան Ամեն. Ս. Պատրիարքի

Ներսէս Եպիս.
Ս. Սահակեան.

Նախագահ եւ Պատրիարքական Փոխանորդ
Ցարութիւն Եպիս.
Վեհապետեան.

Ս. Աթոռոյս Միաբ. Ընդհ. Ժողովին վաւերացեալ հաշուեցոյցն ու եկամտացոյցը հանդերձ տեղեկագրով մեք ևս հաստատելով Ազգ. Երես. Ընդհ. Ժողովոյ Նկատողութեան կը ներկայանք բուն եկամտից գումարները, որոյմէ կը տեսնուի, որ եթէ առկոս չը լինէր, փոքր գումար մ՚ալ պիտի աւելնար, շնորհ ունինք որ Ազգ. Ժողովը 1879-ին Նկատողութեան առնելով սոյն ծանր վիճակը, զարժանն որոշինեց, սակայն ցարդ թէ Յանձնաժողովոյ և թէ մեր ջանքերը չեն պսակուած. և մեք սոյն անտանելի բեռան տակ կը ճնշուինք։

Սրբոյ Աթոռոյս Երուսաղէմայ
Պատրիարք Եսայեան Արքեպիսկոպոս.

1882 Սեպտ. 22
Գ. Պոլիս
յԵրուսաղէմացոյն.

ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՇՈՒԵՑՈՑՑ

ՍՈՒՐԲ ԱԹՈՌՈՑՆ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ

1881—82 ՏԱՐՈՅՑ

ԱՐԴԻՒՆՔ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱԼՈՒԱԾՈՑ	Մյբ տոմ.	Լիրա Օսմանեան		100 գրուշէն	
Երուսաղէմի կալուածոց հաւաքեալ վարձքերէն տարեկան արդիւնք	41	99775	25		
Վաճառեալ ջրի արդիւնք	44	6686	—		
Երուսաղէմի եւ Բեթղէհէմի ձիթենեաց եւ արտօրէից մշակութեան արդիւնք	40	8854	—		
Յոպպէի կալուածոց հաւաքեալ վարձքերէն տարեկան արդիւնք	64	103459	20		
Դամասկոսի կալուածոց հաւաքեալ վարձքերէն տարեկան արդիւնք	70	11401	10		
Գահիրէի կալուածոց հաւաքեալ վարձքերէն տարեկան արդիւնք	78	21137	12		
Աղէքսանդրիոյ կալուածոց հաւաքեալ վարձքերէն տարեկան արդիւնք	81	31626	28		
Բերիոյ կալուածոց հաւաքեալ վարձքերէն տարեկան արդիւնք.	82	11781	20		
Տփխիսու կալուածոց հաւաքեալ վարձքերէն տարեկան արդիւնք	66	585	—		
Պ. Պօլսոյ վագոնեերու տարեկան արդիւնք եւ 1 տան տարեկան վարձք	72	14967	—		
Ղազէի գետնի տարեկան վարձք	66	56	20		
Զմիւռնիոյ վագոնեերու տարեկան արդիւնք եւ մէկ Մաղազայի վարձք	»	3128	20		
Աղերդի կալուածոց արդիւնք .	»	100	–		
Ռեմլէի » »	»	10670	—		

Պերուքի կալուածոց տարեկան վարձքերէն արդիւնք . .	»	2118	—		
Լաւոդիկէի կալուածոց տարեկան վարձքերէն արդիւնք . .	»	2385	—	328731	35
ԳՈՐԾԱՐԱՆԱՑ					
Մոմատուներէն գոյացած տարեկան զուտ շահ	4	5009	25		
Լուսանկարի գործարանէն գոյացեալ տարեկան զուտ շահ . .	7	12024	20	17034	05
ԵԿԵՂԵՑԵԱՑ					
Ս. Յակովբայ, Ս. Աստուածածնի եւ Ս. Փրկչի մասնաւոր արդիւնքը	62	1502	—		
Ընդհանուր գանձանակադրամ յերուսաղէմ եւ ի զանազան գաւառս	60	5827	—	7329	—
ԴՊՐՈՑԱՑ					
Աւագեան Յակոբ Էֆէնտիի կըտակէն ժառանգաւորաց վարժարանի յատկացեալ	45	26950	—		
Օրիորդաց դպրոցի ձեռագործաց վիճակահանութենէ արդիւնք	»	2247	—	29197	—
ԲԱՐԵՊԱՇՏԱԿԱՆ					
Ի Ս. Յակովբ 1126 ուխտաւորաց մեծ դարպաս, դլխադիր եւ իւղագին	57	179811	35		
Պատարագուց, կոնդակադրամ, վարագոյր, պատահական նուէրք, տղայանուէր, կտականուէր եւ Ս. Յարութեան դրան բացման արդիւնք	56	69919	—		
Ի Ս. Յարութիւն 866 ուխտաւորաց դարպաս եւ մոմագին եւ այլն	9	23315	05		
Ի Ս. Ծնունդ 744 ուխտաւորաց դարպաս եւ մոմագին եւայլն	10	15203	37		
Յոպպէ եւ Ռէմլէի 759 ուխտաւորաց դարպաս եւ մոմագին եւ այլն	63	28449	20	316699	17

ՊԱՏԱՀԱԿԱՆ							
Վախճանեալ Մխիթարեանց անձնական դրամ. . . .	42	1419	—				
Պատահական մանաւոր արդիւնք	73	2577	—	3996	—	702987	17
ԲԱՑ						3502052	03
						4205039	20
						4205039	20

ՊԱՐՏՔ **ԿՇԻՌ 1882 ԱՊՐԻԼ 30** **ՊԱՀԱՆՋՔ**

Տոկոսաւոր պարտք.	3486512	—	Դրամարկղ — պատրաստ դրամ. . . .	92330	05
Զանազան պահանջատիրք	18904	21	Պարէն եւ Նիւթք. .	78519	05
Պահանջող հաշիւք .	396728	09	Զանազան պարտուկանք	44886	07
			Պարտական հաշիւք	184357	10
			Բաց պարտք. .	3502052	03
	3902144	30	Մայր ասմ. եր. 92	3902144	30

ԾԱԽՔ

	Մյր Ցոմ.	Լիրայ Օսմանեան 100 գրուշին			
ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ					
Ընդհանուր տարուոյ հաշուէն ճեացած բաց	—	—	—	—	3257344 09
Ի Ս. Յակովբ, ի Ս. Յարութիւն եւ ի Ս. Հրեշտակապետ միաբանից եւ մայրապետաց ուսանելեաց ծախք եւ ընդհ. սուրճ եւ փայտ .	3	138594	20		
Քրիստոնեից միաբանից, դըպրաց եւ սարկաւագաց հանդերձի եւ լուացքի ծախք	5	25371	—		
Միաբանական տարեկան . .	88	12000	—		
Միաբանից եւ ժառանգաւորաց, եւ Երուսաղէմի հայազգի աղքատաց բժշկի դեղի եւ ն ծախք . .	8	16285	—	192250	20
ԵԿԵՂԵՑԵԱՑ					
Ս. Յակոբայ, Ս. Աստուածածնի եւ Ս. Փրկչի խաչ, մոմ եւ զանազան ծախքեր . .	62	25597	20		
Ս. Յարութեան տաճարին տարեկան զանազան ծախքեր . .	9	21844	20		
Ս. Ծննդեան տաճարին եւ միաբանից ուսանելեաց տարեկան ծախքեր	10	30973	02		
Ի Ս. Յակոբ եւ Ս. Աստուածածին ժամուց	52	10755	30	89170	32
ՏԵՍՈՒԹԵԱՆՑ					
Կ. Պօլսոյ Փոխանորդարանի տարեկան ծախքը	71	25214	—		
Յոպպէի վանուց տարեկան ծախքերը	63	26343	20		
Ռէմլէի վանուց տարեկան ծախքերը	91	8885	-		
Պէրութի վանուց տարեկան ծախքերը	69	4517	10		
Դամասկոսի վանուց տարեկան ծախքերը	43	8119	15	72579	02
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՒ ԶԱՆԱԶԱՆ ԾԱԽՔԵՐ					
Պատրիարքարանի տարեկան զանազան ծախքերը	55	15965	35		

Թարգմանաւոր զանազան ծախքերը եւ պահակաց ամսականք .	47	10848	—		
Դիւանաւորաց ծախք, թղթատար, հեռագիր, եւ լրագրաց բաժանորդագին	46	19027	25		
Հանդիսաւոր աւուրց եւ տօնական ու պատահական երթեւեկութեանց ձիու եւ լեր ծախք . .	49	6431	25		
Սահմանեալ պարգեւ որոշեալ աւուրց եւ անձանց	53	7611	10		
Զանազան առիթներով զանազան անձանց տրուած տօնական եւ պատահական պարգեւք եւ ընծայք (ձեռամբ Ս. Պատրիարքին եւ թարգմանին) . .	48	20699	05		
Երուսաղէմի հայազգի աղքատաց հաց 11000, զինուորական տուրք 1905, ողորմութիւնք 3725, նաեւ Բեթղեհեմի հայ աղքատաց տուրք եւ ողորմութիւնք 1000, եւ այլոց 700 7/8	54	18330	35		
Ազգային ընկերութեանց, դպրոցաց նպաստ տրուած գիրք եւն.	54	5000	—	103914	15
ԴՊՐՈՑԱՑ					
Ժառանգաւորաց վարժարանի (7 1677), Երուսաղէմի երկսեռ դպրոցաց (9700 35/40) եւ Բեթղեհեմի դպրոցին (700) տարեկան ծախքերը	45			82077	35
ՎԷՃԵՐՈՒ					
Վէճերու առթիւ եղած ծախք .	75			6850	25
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԱՆՕՐԷԻՑ ԵՒ ԿԱԼՈՒԱԾՈՑ					
Երուսաղէմի կալուածոց 12258 5/8, Վանորէից 16780, Եկեղեցեաց 920, եւ Ս. Յարութեան 2140 Նորոգութեանց ծախք . .	41	32098	25		
Երուսաղէմի եւ Բեթղեհեմի ձիթենեաց եւ արտօրէից մշակութեան ծախք	40	6055	35		
Յոպպէի վանուց 2445, կալուածոց 8256, եւ Ծովեղերքի պարըսպի 13888 1/8 Նորոգութեանց ծախք	64	24589	05		

Դամասկոսի կալուածոց նորոգութեանց ծախք.	70	4024	—			
Գահիրէի կալուածոց 4174 38/40, աւերակաց քանդման 3069 1/8 եւ գործակալի ամսականք 8228 1/8 .	78	15472	33			
Ազէքսանդրիոյ կալուածոց համար մասնաւոր ծախք	81	270	13			
Բերիոյ կալուածոց նորոգութեանց 2033 3/4 եւ ոչնչացած պահանջք	82	7797	30			
Կ. Պոլսոյ վագոնեաց 353 5/8, եւ կալուածոց 3123, նորոգութեանց զանազան ծախք . . .	72	3476	25			
Ուէմլէի կալուածոց նորոգութեանց ծախք.	66	2285	—			
Զմիւռնիոյ կալուածոց նորոգութեանց ծախք եւ տուրք . .	»	691	20			
Պերութի կալուածոց նորոգութեանց ծախք.	»	283	—			
Լաւոդիկէի կալուածոց նորոգութեանց ծախք.	»	2385	—	99429	26	
ՈՒԽՏԱՒՈՐԱՑ						
Ուխտաւորաց առթիւ զանազան ծախք Յերուսաղէմ, ի Յոպպէ եւ ի Ս. Ծնունդ	50			30102	35	
ՏՈԿՈՍ						
Պարտատուրհակաց կամ տոկոսաւոր պարտուց տոկոս, եւ Ֆէրմանցի ամսականք	86			291319	18	967695 11
						4205039 20

(Մայր-տօմար. երես 23)

Հաշուեցոյցս վաւերացեալ է ի Միաբանական Ընդհ. Ժողովոյ Ս. Ամենայն ի 20 Օգոստոսի 1882, Նախագ.

Ի դիմաց Միաբանական Ընդհ. Ժողովոյ Ս. Ամենայն Երուսաղէմ
Ընժամեայ Առաջնորդ

ԵՐԵՄԻԱ ԵՊԻՍ. Տ. ՍԱՀԱԿԵԱՆ.

Ի յանգակայութեան Ամեն. Ս. Պատրիարքի Նախագահ եւ Պատ. Փոխ.

ՑԱՐՈՒԹԻՒՆ ԵՊԻՍ ՎԵՀԱՊԵՏԵԱՆ.

ԵՆԹԱԴՐԵԱԼ ԵԼԵՄՈՍԱՅՈՑ

ՍՈՒՐԲ ԱԹՈՌՈՑՆ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ

ՎԱՍՆ 1882—83 ՏԱՐՈՒՈՅ

ԱՐԴԻՒՆՔ

		Լ. օ. 100 դրէն	
1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱԼՈՒԱԾՈՑ			
Յերուսաղէմ եւ ի զանազան գաւառս (Դանօր. 2) . .		375000	—
2. ԳՈՐԾԱՐԱՆԱՑ			
Մոմատունէն զուտ շահ	5000		
Ցպարանէն զուտ շահ	30000		
Լուսանկարի գործարանէն զուտ շահ . .	12000	47000	—
3. ԵԿԵՂԵՑԵԱՑ			
Ս. Յակոբայ եւ Ս. Աստուածածնի եկն մասնաւոր արդիւնք, ընդհանուր գանձանակագրամ Յերուսաղէմ եւ ի զանազան գաւառս		6000	—
4. ԴՊՐՈՑԱՑ			
Յանուն ժառանգաւորաց վարժարանի Աղքատանի կտակէն		27000	—
5. ԲԱՐԵՊԱՇՏԱԿԱՆ			
1000 Ուխտաւորէ գոյանալի արդիւնք եւ զանազան եղեալք մասնաւոր կտակներ եւ նուէրներ (Դանօր. 1) .		360000	—
		815000	—
Նախատեսեալ ելեւմտից բացն		185000	—
		1000000	—

ԾԱԽՔ

		Լ. Օ. 100 դրշէն	
1. ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ			
Միաբանութեան ուսելոց ծախք . . .	163000		
Քրիստոնեից. միաբանութեանց, դպրաց, եւ սարկաւագաց հանդերձի եւ լուացքի ծախք	30000		
Միաբանական տարեկան	20000		
Միաբանութեան եւ Երուսաղէմի հայազգի աղքատաց բժշկի եւ դեղի	15000	228000	—
2. ԵԿԵՂԵՑԵԱՑ			
Ս. Յակոբայ Ս. Աստուածածնի տաճարաց իւղի, մոմի, զգեստուց նորոգութեանց եւ զանազան ծախք	30000		
Ժամուց ի Ս. Յակոբ եւ ի Ս. Աստուածածին	10000		
Ս. Յարութիւն տաճարին զանազան ծախքերը	30000		
Ս. Ծննդեան տաճարին եւ միաբանից ուսելոց ծախքը	40000	110000	—
3. ՏԵՍՈՒԹԵԱՆՑ			
Կ. Պոլսոյ Փոխանորդարանի ծախք . . .	25000		
Յոպպէի վանուց ծախքը	25000		
Ռէմլէի վանուց ծախքը	8000		
Պէրութի վանուց ծախքը	5000		
Դամասկոսի վանուց ծախքը	7000	70000	—
4. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՒ ԶԱՆԱԶԱՆ ԾԱԽՔ			
Պատրիարքարանի զանազան ծախքերը . .	20000		
Դիւանատանց, թղթատարի, հեռագրի ծախքերը եւ լրագրաց բաժանոր. . .	16000		
Թարգմանատան ծախք, տարեկանք պահակաց եւ երիտասարդութեանց ծախքերը.	18000		
Պարգեւք տահմանեալ եւ պատահական .	10000		
Երուսաղէմի հայազգի աղքատաց հաց (12000) զինուորական տուրք եւ պատահական նպաստք	18000	82000	—
5. ԿՐԹՈՒԹԵԱՆ			
Ժառանգաւորաց վարժարանի, Երուսաղէմի երկսեռ դպրոցաց եւ Բեթղեհեմի դպրոցին ծախքերը		85000	—

6. ՎԻՃԵՐՈՒ	15000	—
7. ԸՆԴՀ. ՎԱՆՕՐ. ԵՒ ԿԱԼՈՒԱԾՈՑ. (Դ-ոն. 2)	100000	—
8. ՈՒԽՏԱՒՈՐԱՑ		
1000 ուխտաւորի տարեկան զանազան ծախք Յերուսաղէմ եւ ի Յոպպէ	30000	—
9. ՏՈԿՈՍ. Տոկոս. պարտուց տոկոսն եւ Տէրոյէնցի ամնականք	280000	—
	1000000	—

Ելեւմտացոյցս ընկալեալ եւ վաւերացեալ է ի Միաբանական Ընդհ. ժողովոյ Ս. Աթոռոյն յ30 Օգոստոսի 1882, Նիսան Գ.

Ի դիմաց Միաբանական Ընդհ. ժողովոյ Ս. Աթոռոյն Երուսաղէմի Առաջնոյ Ատենապետ

ԵՐԵՄԻԱ ԵՊԻՍ. Տ. ՍԱՀԱԿԵԱՆ.

Ի բացակայութեան Ամեն. Ս. Պատրիարքի Նախագահ եւ Պատրիարքական Փոխանորդ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԵՊԻՍ. ՎԵՀԱՊԵՏԵԱՆ.

(Դ-ոն. 1) ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՔ ԲԱՐԵՊԱՇՏԱԿԱՆ ԱՐԴԵԱՆՑ.

	Լ. Օ.	100 դրչէն
Ի Ս. Յակոբ մեծ դարպաս, գլխադիր եւ իւղագին.	200000	—
Ս. Յարութեան դրան բացման արդիւնք, տղայ օրհնելոյ, պատարագուց, վարագոյրի, կոնդակադրամի կամ մոմագնի եւ կուսակային նուիրաց ընդհանուր արդիւնք	75000	—
Ս. Յարութեան դարպաս (անձգլուխ 33 դրչ. էն) .	25000	—
Ս. Ծննդեան » » » » » . . .	20000	—
Յոպպէի եւ Ռամլէի » » » 50 » . . .	40000	—
	360000	—

(Տառեր. 2. ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՆՔ ԸՆԴՀ. ԿԱԼ. ԵՒ ՎԱՆՕՐԷՒՑ

	ԾԱԽՔ Լ. Օ. 100 գրչէն		ԱՐԴԻՒՆՔ Լ. Օ. 100 գրչէն	
Երուսաղէմի եւ շրջակայից կալուած, վանօրայք եւ ջուր.	25000	—	105000	—
Մշակութիւն	6000	—	10000	—
Ցոպպէի կալուած	20000	—	105000	—
Ռէմլէի կալուած	2000	—	10000	—
Ղազէի կալուած 3 Մէջ			55	—
Պերութի կալուած.	500	—	2500	—
Լաւոդիկէի կալուած	2000	—	2000	—
Դամասկոսի կալուած	1000	—	10000	—
Աղէքսանդրիոյ կալուած	1000	—	30000	—
Գահիրէի կալուած	12000	—	24000	—
Զմիւռնիոյ եւ շրջակայից կալուածք . .	500	—	3000	—
Ի. Պօլսոյ կալուած	3000	—	20000	—
Կարնոյ կալուած	2000	—	12000	—
Տիգրանակերտի կալուած	3000	—	20000	—
Բերիոյ կալուած	2000	—	12000	—
Վանայ, Փարխանոյ, Ցըղէի, Բալուի, Քիլիսու եւ այլն				
Տփխիսու, Գանձակայ, Ախալցխայի եւն. Թէքիրտաղի, Պրուսայի եւ այլն . . .			9445	—
	80000	—	375000	—
Պահեստի գումար պատահական նորոգութեանց համար.	20000	—		
	100000	—	375000	—

ՑՈՒՑԱԿ ՆՈՐ ԳՆԵԱԼ ԿԱԼՈՒԱԾՈՑ

1860 Մայիս 1 ից 1878 Ապրիլ 30 *)

		Ղրշ.	Փող.	Ղրշ.	Փող.
1860—61	Յերուսաղէմ Հայոց թաղին մէջ գնեալ 2 տուներու գին եւ ծախք. .			172392	—
1861—62	Ի Ս. Համբարձումն Ձիթահանի մը մէկ մասին գինը եւ ծախք. . . .			8985	—
1862—63	Հրէից թաղին մէջ գնեալ 1 տան գին եւ ծախք			116144	—
1863—64	Յերուսաղէմ բերդին պարսպին ետեւ գնեալ արտի մը գին . . .			12739	—
1864—65	Յերուսաղէմ Դամասկոսի դրան մօտ գնեալ տան մը գին եւ ծախք.	41807	—		
	Յերուսաղէմ Փիլիպպոսի աղբիւրի մօտ արտի մը գին	6000	—	47807	—
1865—66	Ի Ռէմլէ գնեալ տան մը գին . .	10500	—		
	Ի Ս. Համբարձումն Ձիթահանի մը մէկ մասին գին	2375	—		
	Յերուսաղէմ Պրոպատիկէ աւազանին մօտ գետնի մը գինը	19200	—		
	Երուսաղէմի մօտ Փիլիպպոսի աղբիւրին քով գետնի մը գինը . . աղ-	3520	—	35595	—
1867—68	Յերուսաղէմ գնեալ կրպակի մը գինը	29100	—		
	Յերուսաղէմ գնեալ կրպակի մը 11/24 մասին գինը	15379	—		
	Ի Ռէմլէ Ֆրաւօն կոչուած արտի մը գինը	7260	—	51730	—
1868—69	Երուսաղէմի մօտ Փիլիպպոսի աղբիւրին քով գետնի մը գինը . . .	2150	—		
	Ի Դամասկոս գնեալ աւերակի մը գին	9500	—	11650	—
1870—71	Ի Ս. Համբարձումն գնեալ տան մը գին			29740	—

*) Այս նոր գնուած կալուածոց ցուցակը քանի մի օր յառաջ Ս. Երուսաղէմի Միաբանութենէն ընդունելով փութացինք գնել այստեղ, ի տեղեկութիւն հետաքրքրեալներուն։

1871—72	Յերուսաղէմ 4 կրպակներէն զանազան մասերու գին			62760	—
1872—73	Յերուսաղէմ արտաքոյ պարսպին գնեալ արտի մը գին			15240	—
1874—75	Ի Ցոպպէ գնեալ պուրճի մը գինը եւ ծախք			46819	—
1875—76	Յերուսաղէմ Ս. Հրեշտակապետի վանուց եւեւը գետնի մը գին . .	29140	10		
	Ի Ցոպպէ մեր կալուածոց մերձ խրամի մը գին	25800	—	54940	10
1877—78	Յերուսաղէմ պարսպէն դուրս մեծ արտին մէջ ջրհորի մը շինութեան ծախք	13000	—		
	Յերուսաղէմ Լ.ԷՖԹԷԷ մօտ ձիթենեաց ծառերով արտի մը գին. . .	15000	—		
	Ի Ցոպպէ մեր կալուածոց մերձ եղած մարակոցի աւերակ տեղին գինը	15000	—	43000	—
1860—78	Ս. Երուսաղէմի տարեկան հաշուեցոյցներուն մէջ հնոր գնեալ կալուածոց անուամբ ծախուց գումարն .			709541	10

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ ՑԱՏԱԿԱԳԾԵՐԻ ՄԱՍԻՆ

Ահաւասիկ այն յատակագիծերը, զորս խոստացանք դնել այստեղ յուսալով արդիւնաւորիլ։

Թ. Ա. Երուսաղէմի միաբանութեան ընդարձակ գետնի յատակագիծն է, դիմացը Ռուսաց Վանքն է՝ „Հոպպէի ճանապարհով“ բաժանուած։ Գետինը՝ ինչպէս կը տեսնուի ճանապարհներով բաժանուած է զանազան մեծ ու փոքր մասերու. ամեն մէկ մաս ալ դարձեալ բաժնուած է մանր մասերու, այս մանր մասերուն ամեն մէկը մէկ մէկ շէնքի տեղեր են. զոր օրինակ, Ե զրով մասը բաժնուած է ութն կտորի, ուր պէտք է շինուի ութը շէնք. այսպէս ալ միւսները՝ տեղւոյն չափին համեմատ։

Թ. Բ. Շինուելիք շէնքին հինգ տեսակ յատակագծերն են այլեւայլ չափով ու ձեւով, ամեն մէկուն դէմ գրուած թիւերն անոնց մակերեւոյթի քառակուսի մեթրի ոլքանութիւնն է. որոց մեծ ձեւին շինութեան ծախքը եւ բերելիք արդիւնքը գրուած եմք երես 47—48, միւս փոքրերն ալ համեմատաբար աժան կը լինին։

Թ. Գ. Շինուելիք շէնքին ուրուագիծն է. տակը շորս խանութ, վրան երկու տուն։ Պէտք է նկատել, նախ որ հաշիւը մեթրի վերայ լինելով՝ կանգունէ

մեծ կը լինի. երկրորդ, ամբողջ շէնքը տակով վերայով քարուկիր լինելով՝ ոչ շուտով նորոգութեան կը կարօտի և ոչ ալ կրակէ երկիւղ ունի. երրորդ՝ այս վերին մասը, այսինքն „Յոպպէի ճանապարհի“ կողմը տեղւոյն յարգի մասը լինելով՝ թերևս երբեմն աւելի շահաբեր լինի։ Հինութեան ծախսը վճարելու հաճութիւն ունեցող բարեսէր ազգայինք եթէ ուզեն աւելի մանրամասն տեղեկութիւններ ստանալ, հարցեր կամ պայմաններ առաջարկել, կարող են ուղղակի կամ մեր միջոցաւ Ս. Երուսաղէմի Ազգային վարչութեան Տնօրէն խորհրդոյն դիմել նամակաւ և գոհացնել իրենց հարցասիրութիւնը։

Իսկ մեք մեծ յոյս տածելով աստուածասէր ազգասիրաց վրայ, կը կրկնեմք մեր յորդորն ու հրաւէրը, աղաչելով, որ փութացնեն իրենց առատաձեռն շնորհը. որչափ շուտ, այնչափ շատ տուած կը լինին։

Որչափ մեծ մխիթարութիւն էր, երբ կարողութեան տէր մեծագործ և առատասիրտ ազգայինք իրենց նիւթական կարողութիւնը ասանկ ազգային մեծ ու տևական հաստատութեանց նուիրէին, որ իրենց հարստութիւնը ազգին մէջ կը մնար քան թէ օտարաց, որ անօգուտ տեղը կերթայ ու կը փճանայ։ Որչափ փառաց և պարծանաց արժանի գործ

կը լինէր, երբ տեսնէինք այս գեղիններուն վերայ շէնքեր կանգնած ի յիշատակ անուան վսեմախոհ անձանց, ի մշտնջենաւոր կալուած Ս. Աթոռոյն Երուսաղէմի, յապահովութիւն այնտեղի ուսումնարանաց և ազգային վանուց, այն դարաւոր հաստատութեան, որ միշտ փառք ու պարծանք եղած է ազգին և օգտակար արդիւնքներովը պատիւ բերած ի փառս բարերար Աստուծոյ, որոյ բարեաց պարգևն ասանկ օգտակար գործերու նուիրելով՝ երախտագիտութեան և շնորհակալութեան պարտքերնին կատարած կը լինին և ամենախնամ Աստուծոյ անուան փառատրութեան նորանոր պատճառներ տուած կը լինին, միանգամայն և աշխարհի վերայ դարուց ի դարս յիշատակաց արժանի անուն թողլով՝ ամենայն բերան օրհնութեամբ և գովեստիւ պիտի արտասանէ սրտաբուխ մաղթանքներով։

Երանի՜ որ յիշատակ կունենայ Սիոնի մէջ,
Արդարոց յիշատակը օրհնութեամբ կը կատարուի։

ՈՒՂՂԵԼԻՔ.

Էջ.	Տող	Սխալ	Ուղիղ
26	15	իսկ Ճշմարիտ կրօնն ալ ազգինն է.	իսկ Ճշմարիտ կրօնասէրներուն համար այսքանն ալ աւելորդ էր. զի նոքա քաջ գիտեն, որ կրօնն ալ ազգինն է,
28	16	ազգ նոցա	ազգը, նոցա
»	25	քիչ կը պատահին, տարբիներս	քիչ կը պատահին, որ մի առատասիրտ հարուստ՝ մի նշանաւոր գումար նուիրէ. մանաւանդ այս վերջին տարիներս
33	5	օգնութիւնն	օգնութիւններն
36	4	Ազգի	Ազգը
38	15	այն ատեն մարդ	այն ատեն ամեն մարդ
41	5	պարտք կը կատկածիք	պարտք լինելէ կը կասկածիք
45	25	ձեր ձեռքը	ձեր ձեռաքը
95	11	իրողութեանց	քարոզութեանց
145	10	եւ սեղած են	եւս եղած են

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.

1) Ս. Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց Ազգային վանքը եւ նորա ներկայ վիճակը 5
2) Ս. Երուսաղէմի Կրօնական եւ Ազգային նշանակութիւնը . 14
3) Ս. Երուսաղէմի մէջ մեր Ազգային իրաւանց վերայ ո՞վ կը հսկէ 27
4) Ս. Երուսաղէմի Հայոց վանքը ինչո՞ւ պարտք ունի . . . 34
5) Ս. Երուսաղէմի Միաբանութիւնն ինչո՞ւ չէ հոգացած հաստատ եկամուտ ունենալ 42
6) Ս. Երուսաղէմն ի՞նչ օգուտ տրած է Ազգին 48
7) Ս. Երուսաղէմի Միաբանութիւնը ինչո՞ւ հաշիւ չը տար . . 52
8) Ցուցակ Ս. Երուսաղէմի պարտուց տարուէ տարի յաջորդական ամման, սկսեալ 1860 թ. մայիս 1 մինչեւ 1882 թ. ապրիլ 30. 61

ՑԱՒԵԼՈՒԱԾ.

Ա. Պօլսոյ Ներսէս Ս. Պատրիարքի կոնդակը 73
Բ. Յայտարարութիւն Եսայի Ս. Պատրիարքին Երուսաղէմ . 80
Գ. Հաստատութիւն ի Ներսէս Ս. Պատր. Կ. Պօլսոյ . . . 82
Դ. Վաւերացումն Ս. Երուսաղէմի պարտուց բարձման Յանձնաժողովոյն 83
Ե. Կոնդակ Գէորգայ Դ-ի Վեհ. Կաթողիկոսի ամենայն Հայոց . 84
Զ. Կոնդակ Ներսէս Ս. Պատրիարքին Կ. Պօլսոյ 89
Է. Կոնդակ Եսայի Ս. Պատրիարքին Երուսաղէմ 92
Ը. Յայտագիր ի Պատրիարքարանէն Կ. Պօլսոյ. 102
Թ. Պաշտօնական Յայտարարութիւն Երուսաղիմայ պարտուց բարձման 118
Ժ. Հաշուեցոյց եւ Եկեմատացոյց 1882—83 ամաց Ս. Երուսաղիմայ Վանուց 137
ԺԱ. Յարեկան ընդհանուր հաշուեցոյց Ս. Աթոռոյն Երուսաղէմ 1881—82 տարւոյ 150
ԺԲ. Պարտք եւ պահանջք 152
ԺԳ. Ենթադրեալ Եկեմատացոյց Ս. Աթոռոյն Երուսաղէմ վասն 1882—83 տարւոյ 156
ԺԴ. Ցուցակ Նոր գնեալ կալուածոց 160
ԺԵ. Ծանօթութիւն յատակագծերի մասին 163